ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը
ՀՀ, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53, 1-5,
հեռ. (+374 10) 59 22 59,
էլ. փոստ unibank@unibank.am

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը և կազմակերպաիրավական տեսակը
ՀՀ, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53, 1-5,
հեռ. (+374 10) 59 22 59,
էլ. փոստ unibank@unibank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի դասը՝	Անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	200,000 հատ ԱՄՆ դոլարով,100,000 հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ԱՄՆ դոլար, 10.000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	20,000,000 ԱՄՆ դոլար, 1 միլիարդ ՀՀ դրամ
Արժեկտրոնը՝	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
Շրջանառության ժամկետը՝	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	եռամսյակային

Գրանցված է ՀՀ ԿԲ Հանձնաժողով
N 1/399 Վ որոշմամբ:

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
08 ապրիլ 06 մայիս 18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4
ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 5
1.1 Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 5
1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 10
1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 13
1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձ 14
1.5 Թողարկողի կառավարման անդամները, աշխատակիցները և բաժնետերը 14
1.6 Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տվյալներ 15
1.7 Թողարկողի կողմից թողարկված պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները 18
1.8 Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները 19
2.1 Ռիսկային Գործոններ 21
2.2 Հիմնական Տեղեկատվություն 23
2.3 Տեղեկատվություն արժեթղթերի վերաբերյալ 23
4. Առաջարկի ժամկետները և պայմանները 29
5. Առաջարկի գինը 31
6. Տեղաբաշխման պլանը 32
7. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 32
8. Լրացուցիչ տեղեկատվություն 33
ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 34
1. Անկախ աուդիտորներ 34
2. Ռիսկային գործոններ 34
3. Տեղեկատվություն թողարկողի մասին 40
4. Բիզնեսի նկարագիրը 45
5. Զարգացման վերջին միտումները 51
6. Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 54
7. Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք 64
8. Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտի և ծախսերի մասին 65
9. Էական պայմանագրերը 65
10. Այլ տեղեկատվություն 66
ՀԱՎԵԼՎԱԾ 1. 69

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ……71
ՀԱՎԵԼՎԱԾ 3 ……72
ՀԱՎԵԼՎԱԾ 4 ……78

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք Ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել Ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք

Գագիկ Զաքարյան	**Խորհրդի նախագահ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Գեորգի Պիսկով	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Հրահատ Արզումանյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Էդուարդ Զամանյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Դավիթ Փափազյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Արարատ Ղուկասյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Տիգրան Բաղանյան	**Վարչության անդամ - ռիսկերի կառավարման տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Գուրգեն Ղուկասյան	**Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Օվսաննա Առաքելյան	**Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ
Դավիթ Պետրոսյան	**Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ) 14.05.2018թ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի համառոտ ներածություն: Առաջարկվող պարտատոմսերում ներդրում կատարելու որոշումը կայացնելիս ներդրողը պետք է ընթերցի ամբողջ Ազդագիրը:

Սույն Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք քաղաքացիական պատասխանատվություն են կրում Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար միայն այն դեպքում, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային պատճենը՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am:

1.1 Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ռուսերեն՝ ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО "ЮНИБАНК"

անգլերեն՝ “UNIBANK” OPEN JOINT STOCK COMPANY

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

ռուսերեն՝ ОАО "ЮНИБАНК"

անգլերեն՝ “UNIBANK” OJSC

Բանկի գտնվում է ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53, թիվ 1-5 հասցեում:

Բանկի փոստային հասցեն է՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53, թիվ 1-5:

Կապի միջոցները՝

Հեռախոս՝ + 37410 59 22 59

Ֆաքս՝ + 37410 55 51 40

Էլ. փոստ՝ unibank@unibank.am

ինտերնետային կայք՝ www.unibank.am, www.unibank-armenia.com

Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են դիմել Ներդրողների և Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության վարչության պետ Մ. Համբարձումյանին հետևյալ հեռախոսահամարով՝ +374 10 592236 (ներքին հեռ. 301):

1.1.2. Թողարկողի համառոտ նկարագիրը և ռազմավարությունը

«Յունիբանկ» ԲԲԸ-ն (այսուհետ «Բանկ» կամ «Յունիբանկ») հիմնադրվել է 2001թ.-ի հոկտեմբերին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն: Յունիբանկը, որպես բանկ գրանցվել է 2001թ.-ի հոկտեմբերի 9-ին (Գրանցման վկայական թիվ 0373 և գրանցման համար թիվ 81՝ հաստատված ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի 09.10.2011թ. 260 որոշմամբ: Բանկային գործունեության լիցենզիա 81 տրված 2001թ.-ի հոկտեմբերի 10-ին): Բանկի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմավորվել է, և ներկայումս Բանկի կազմակերպաիրավական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

Յունիբանկը 2002թ. գործարկել է Unistream դրամական փոխանցումների միջազգային համակարգ, որը Հայաստանում դրամական փոխանցումների ոլորտում առաջատարներից է:

Յունիբանկը 2003թ. դարձել է «ArCa» վճարահաշվարկային համակարգի անդամ:

2004թ. Յունիբանկը դարձավ Visa International միջազգային համակարգի անդամ:

2005թ. Յունիբանկը սկսեց լայնածավալ վարկավորում հիփոթեքի եւ ավտովարկավորման գծով՝ զբաղեցնելով, համապատասխանաբար, երկրորդ եւ առաջին տեղերը ՀՀ բանկային համակարգում վարկավորման ծավալով: [1]

2006թ. Յունիբանկը դարձավ IFAD-ի գյուղական վայրերում ներդրումների խթանման ծրագրի, ինչպես նաեւ SMEDNC հիմնադրամի փոքր եւ միջին բիզնեսի զարգացման ծրագրի մասնակից:

2007թ. ներդրվեց ABN AMRO բանկի ռիսկերի կառավարման ծրագիրը:

2008թ. Յունիբանկը դարձավ ՀՀ ֆոնդային բորսայի անդամ: Յունիբանկը գործարկեց Blade տեսակի սերվերային խումբ, որով ներդրվեց ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման միջազգային փորձը:

2009թ. Յունիբանկի մասնաճյուղային ցանցը միացվեց տվյալների գլխավոր բազային: Ներկայումս բանկի բոլոր մասնաճյուղերն աշխատում են online ռեժիմում:

2010թ.-ի հունիսի 3-ին Moody's միջազգային վարկանիշային գործակալությունը Յունիբանկին շնորհել է ֆինանսական կայունության E+, արտարժույթով և ազգային դրամով ավանդների Ba3 երկարաժամկետ եւ NP կարճաժամկետ վարկանիշերը: Բոլոր վարկանիշերն ունեցել են Կայուն կանխատեսումը:

2011թ. Յունիբանկը Ասիական Զարգացման Բանկի հետ համատեղ իրականացնում է առեւտրի ֆինանսավորման ծրագիր, որի շրջանակներում ձեռներեցներին տրամադրվում են ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ:

---

1 Արմինֆո ռեյտինգային մարքետինգային գործակալության կողմից իրականացված ՀՀ բանկերի ռենքինգ, 2006թ

2012թ. Thomson Reuters Միջազգային Կորպորացիան Յունիբանկին շնորհել է Հայաստանում “Լավագույն դիլինգ բանկ 2012” կոչումը: Յունիբանկն ընդգրկված է Հայաստանի 100 խոշորագույն հարկատուների ցուցակում:

2013թ. Համաշխարհային բանկի Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Առևտրի և զարգացման Սևծովյան բանկը (BSTDB) և Յունիբանկը ստորագրեցին համագործակցության պայմանագիր՝ ուղղված ՓՄՁ-ների վարկավորման ծրագրի ընդլայնմանը: Յունիբանկը սկսեց համագործակցություն Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատի (AmCham) հետ՝ դառնալով կազմակերպության թղթակից անդամ:

2014թ. Յունիբանկը սկսել է համագործակցություն Intel Express միջազգային դրամական փոխանցումների համակարգի հետ: Բանկը նաև ներկայացրել է ISO 27001:2013 տեղեկատվության անվտանգության համակարգը, ներդրել է Unibank Prive անհատական ծառայությունները: Յունիբանկը ստացել է նաև «Գերազանց Որակ» մրցանակը (RBI STP Quality Awards) Ավստրիայի Ռայֆայզեն Միջազգային Բանկից SWIFT փոխանցումների ծառայության բարձր որակ ապահովելու համար:

Բանկի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմավորվել է, և ներկայումս Բանկի կազմակերպաիրավական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

2015թ. հուլիսի 1-ից Բանկը դարձել է Դեպոզիտար համակարգի հաշվի օպերատոր և կարգավորվող շուկայում հաշվարկային համակարգի անդամ:

«Յունիբանկ» ԲԲԸ-ն առաջին ընկերությունն է Հայաստանում, որը բորսայում նախնական հրապարակային առաջարկի (IPO) միջոցով իրականացրեց բաժնետոմսերի տեղաբաշխում: Բաժնետոմսեր թողարկելու որոշումը պայմանավորված էր «Յունիբանկի» զարգացման որակապես նոր մակարդակ ապահովելու և իրական ժողովրդական բանկ դառնալու ռազմավարությամբ:

Այսօր Յունիբանկը ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկը ներկայումս բնութագրվում է որպես պահպանողական գործելաոճով կառավարվող, բայց և նորամուծություններ կիրառող, նախաձեռնողական ու թափանցիկության սկզբունքներով գործող ֆինանսական հաստատություն: 31.03.2018թ. դրությամբ Յունիբանկն ունի ավելի քան 365,000 ակտիվ հաճախորդ:

Բանկի Խորհրդի մշակած ռազմավարությանը համապատասխան Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը:

1.1.3. Թողարկողի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը 2018թ. մարտի 31-ի դրությամբ կազմում է 20,489,652,500 ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով և 32,010,000 հատ արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը

100 ՀՀ դրամ անվանական արժեքով: Արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժնի չափը հաշվարկվում է տարեկան 5% տոկոսադրույքով՝ այդ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ:

Թողարկողի ռազմավարությունը

«Յունիբանկ» ԲԲԸ-ն առաջին ընկերությունն է Հայաստանում, որը բորսայում նախնական հրապարակային առաջարկի (IPO) միջոցով իրականացրեց բաժնետոմսերի տեղաբաշխում: Բաժնետոմսեր թողարկելու որոշումը պայմանավորված էր «Յունիբանկի» զարգացման որակապես նոր մակարդակ ապահովելու և իրական ժողովրդական բանկ դառնալու ռազմավարությամբ: Բանկը ներկայումս բնութագրվում է որպես պահպանողական գործելաոճով կառավարվող, բայց և նորամուծություններ կիրառող, նախաձեռնողական ու թափանցիկության սկզբունքներով գործող ֆինանսական հաստատություն: Բանկի Խորհրդի մշակած ռազմավարությանը համապատասխան Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը:

1.1.4. Թողարկողի Բիզնեսի համառոտ նկարագիրը

Բիզնեսի համառոտ նկարագիրը

Բանկն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործառույթներ, մասնավորապես.

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով:

Վարկերի և միջոցների այլ տեղաբաշխումներ

- Բանկն իրականացնում է բիզնեսի վարկավորում և ապահովում (երաշխիքների տրամադրում, փաստաթղթային ակրեդիտիվներ, վարկային գծեր, օվերդրաֆտներ, բանկային երաշխիքներ և ֆակտորինգ): Յունիբանկը փոքր և միջին բիզնեսի վարկավորման զարգացումը դիտարկում է որպես առաջնահերթ ռազմավարություն: Յունիբանկն առաջարկում է շուկայի ուսումնասիրությունների և բիզնեսի առանձնահատկությունների հիման վրա հաճախորդների կոնկրետ խմբի համար հատուկ մշակված վարկային ծրագրեր:
- Մանրածախ բիզնեսի զարգացումը հանդիսանում է Բանկի բիզնես ռազմավարության առաջնահերթ ուղղություն: Յունիբանկն առաջարկում է ինչպես նպատակային սպառողական վարկեր, այնպես էլ ոչ նպատակային, երբ գումարը կարելի է ստանալ ցանկացած սպառողական նպատակի համար՝ վերանորոգման, բժշկական, ճամփորդական կամ այլ ծախսերը հոգալու կամ էլ ապրանքներ գնելու համար: Բանկը տրամադրում է նաև հիփոթեքային վարկեր բնակելի անշարժ գույք, բիզնես տարածք գնելու, կառուցապատելու կամ վերանորոգելու համար, ավտովարկեր, ոսկու գրավով վարկեր:

Բանկային փոխանցումների իրականացում

- Բանկը 2003 թվականից սկսած անդամակցում է SWIFT միջազգային համակարգին: Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 20 բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած արժույթով և վճարային գործիքով:
- Բանկը ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծառայություններ է առաջարկում «Յունիստրիմ» դրամական փոխանցումների միջազգային համակարգի միջոցով:

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում

- Յունիբանկն իր հաճախորդներին առաջարկում է տեղական ArCa վճարային համակարգի քարտեր, ինչպես նաև Visa International քարտեր: Յունիբանկը սեփական պրոցեսինգային կենտրոնի միջոցով թողարկում է նաև Visa չիպային քարտեր:

Արտարժույթով և արժեթղթերով գործարքներ կամ բրոքերային ծառայություններ

- Բանկը կատարում է արտարժույթի առք ու վաճառքի և արժեթղթերով գործարքներ:

Կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների ընդունում

- Յունիբանկն ունի կոմունալ վճարումների ընդունման համակարգ: Հաճախորդներին անվճար տրամադրվում է UNIPAY կոմունալ վճարումների քարտ, որի վրա նշված է անհրաժեշտ տեղեկատվությունը հաճախորդների համար արագ և հարմարավետ վճարումներ կատարելու համար:

Հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում

- Հաճախորդներին վճարահաշվարկային ծառայությունների համալիր մատուցման նպատակով՝ Բանկը խթանում է հարկերի, տուրքերի, էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի և այլ հանրային ծառայությունների դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձանցից վճարների ընդունումը:

Այլ ծառայություններ

- Յունիբանկն իրականացնում է հաշվարկա-դրամարկղային սպասարկում իր հաճախորդների համար՝ հաշիվների բացում եւ սպասարկում, դրամարկղային գործարքներ, երաշխավորագրերի տրամադրում, ինկասո, գործարքներ արժեթղթերի հետ եւ այլն: Յունիբանկը նաև ծառայություններ է մատուցում ՀՀ քաղաքացիներին, որոնք օգտվում են պետական սոցիալական ծրագրերից:
- «Ինտերնետ բանկ - Հաճախորդ» համակարգը նախատեսված է ինտերնետ ցանցի միջոցով, առանց Բանկ հաճախելու, հաճախորդների բանկային հաշիվների կառավարման, ինտերնետի միջոցով բանկային հաշվի քաղվածքներ ստանալու և վճարումներ իրականացնելու համար:

- Յունիբանկն իր հաճախորդներին առաջարկում է չիրկիզվող անհատական պահատեղեր տեղակայված հատուկ կառուցված անվտանգ տարածքում՝ թանկարժեք իրերն ու փաստաթղթերը պահելու համար:

Յունիբանկը կառուցել է լայն սպասարկման ցանց: Բանկը Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում հիմնել է և կառավարում է 46 մասնաճյուղ, ինչպես նաև ներկայացուցչություն Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում:

Ստորև ամփոփվում են Բանկի ակտիվները
Հազ. ՀՀ դրամ

	31.12.2017(աուդիտ անցած)	31.12.2016 (աուդիտ անցած)	31.12.2015 (աուդիտ անցած)
Ակտիվներ, այդ թվում	202,721,471	185,396,089	158,139,860
Եկամտաբեր ակտիվներ	156,600,173	133,027,017	118,730,169
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	77%	72%	75%

1.1.6. Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն Ազդագրի Հավելված 1-ում:

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Գոյություն ունեն մի շարք ռիսկային գործոններ, որոնք հատուկ են սույն Ազդագրի միջոցով առաջարկվող պարտատոմսերում ներդրումներին: Ներդրողները պետք է որոշում կայացնեն՝ լիովին գիտակցելով ներդրումների բնույթը և դրանից բխող հիմնական ռիսկերը՝ ելնելով իրենց փորձից, նպատակներից, ֆինանսական ռեսուրսներից, ռիսկի նկատմամբ հակվածության աստիճանից և այլ գործոններից: Որոշում կայացնելուց առաջ ցանկացած ներդրող պետք է նախապես ծանոթանա տվյալ պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերին:
Ստորև ներկայացնում ենք բանկերին, և «Յունիբանկ» ԲԲԸ-ին մասնավորապես, ներհատուկ ռիսկերը, բանկում առկա ռիսկերի չափման և նվազեցման մեխանիզմները:
Բանկն իր գործունեության ընթացքում առնչվում է բանկային գործունեությանը ներհատուկ ռիսկերի հետ, որոնց կառավարման համար առկա են բավարար ռեսուրսներ և մեխանիզմներ:

Բանկի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում՝

Վարկային ռիսկը. Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը, ինչը կարող է էապես ազդել բանկի գործունեության վրա, և առաջացնել լրացուցիչ ծախսեր, որոնք բացասական կանդրադառնան բանկի շահույթի վրա:
«Յունիբանկ» ԲԲԸ վարկային պորտֆելը բավականին դիվերսիֆիկացված է և իր մեջ չի պարունակում խոշոր կենտրոնացումներ: Վարկավորման գերակա ուղղություններն են հանդիսանում մանրածախ վարկավորումն ու ՓՄՁ վարկերի տրամադրումը: Այնուամենայինիվ

բանկի պորտֆելում առկա են չաշխատող ակտիվներ, որոնք և բանկի համար կարող են հադիսանալ պոտենցիալ կորուստների աղբյուր:
Համաձայն բանկի վարկային պորտֆելի ռիսկայնության վերլուծությունների բանկի պորտֆելը ունի հետևյալ կառուցվածքը 31.03.2018թ. դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ		
	Ցածր ռիսկ		Միջին ռիսկ		Բարձր ռիսկ
Վարկեր, այդ թվում՝					
1. ՀՀ ռեզիդենտներին	86,650,525		5,436,689		52,286,902
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին	10,781,655				2,588,955
Ընդամենը	97,432,180		5,436,689		54,875,857

Միաժամանակ բանկի վարկային ռիսկը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը:

Վարկերի գծով պահուստաֆոնդ/ընդհանուր վարկեր = 3.85 %

Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր =38.24%

Չաշխատող վարկերի պահուստ/ընդհանուր կապիտալ = 23.24%

Հնարավոր կորուստների հատուկ պահուստ/չաշխատող վարկեր = 10.06%

Շահույթի ծածկման գործակից (զուտ գործառնական եկամուտներ+պահուստի ստեղծման ծախսեր)/վարկերից զուտ կորուստ =267.15%

Վարկային ռիսկով ճշգրտված զուտ տկոսային մարժա =2.31%:

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ սահմանելով մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ ապրանքատեսակների, տնտեսության

ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում և անհրաժեշտության դեպքում վերանայվում են Բանկի Խորհրդի կողմից:

Արտարժութային ռիսկը կարող է առաջանալ բաց դիրքերի առկայության դեպքում փոխարժեքի տատանումների արդյունքում: Բանկում արտրաժութային ռիսկը կառավարելի(բականին ցածր) մակարդակի վրա, է քանի որ բանկում սահմանված են արտարժութային բաց դիրքերի առավելագույն սահմանաչափեր:

Տոկոսադրույքի ռիսկը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության: Բանկի գրեթե բոլոր ակտիվներն ու պարտավորությունները ֆիքսված տոկոսադրույքով են: Այնուամենայինիվ այս դեպքում ևս կարող են առաջանալ
ռիսկեր կապված բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունների անհամապատասխանության հետ: Բանկում առկա են վերլուծություններ ըստ որոնց շուկայական տոկոսադրույքների կտրուկ տատանումները կարճամկետ հատվածում բանկին կհասցնեն առավելագույնը 100 մլն դրամ վնաս: Նշված ռիսկերը զսպելու համար բանկում վարվում է ռիսկերը նվազեցնող համապատասխան գնագոյացման քաղաքականություն, ինչպես նաև ժամկետայնությունների ճեղքվածքների վրա սահմանված են առավելագույն սահմանաչափեր:

Օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկը, որի պատճառ կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կազդեն ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Միաժամանակ հարկ է նշել, որ փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերը.

Բանկի կողմից առավել էական պարտատոմսերին առնչվող ռիսկեր են դիտարկվում.

Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերն ավելի ցածր գնով, քան շուկայական գինը:

Արտարժութային ռիսկը, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա, ինչպես նաև Հասարակության մոտ արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ռիսկի ոչ պատշաճ կառավարումը, արտարժույթով արտահայտված պարտատոմսերում ներդրողների մոտ իրենց առաջարկված գործիքի վերաբերյալ ոչ բավարար

տեղեկացվածությունը: Օրինակ՝ ԱՄՆ դոլարի արժեզրկման դեպքում ներդրողը կունենա որոշակի կորուստներ: Ներդրողը կարող է կրել նաև արտարժույթի փոխանակման հետևանքով որոշակի կորուստներ (ՀՀ դրամի արժեզրկման դեպքում) կապված իր ՀՀ դրամով արտահայտված միջոցները ԱՄՆ դոլարի վերածելու և պարտատոմսերի մարման ժամանակ ԱՄՆ դոլարը ՀՀ դրամի փոխանակման ժամանակ:

Տոկոսադրույքի ռիսկը կարող է առաջանալ շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության արդյունքում: Այն կարող է ազդել պարտատոմսի եկամտաբերության, դրանց

գրավչության և իրացվելիության վրա, քանի որ պարտատոմսի գինն ու եկամտաբերությունը գտնվում են միմյանցից հակադարձ կախվածության մեջ:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի և իրացվելիության անկմանը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով բանկային համակարգի ներկա զարգացումները, Բանկի վարկավորման ցածր ռիսկային և զգուշավոր քաղաքականությունը, բանկում ռիսկերի կառավարման մակարդակը, ինչպես նաև վերահսկող մարմնի կողմից իրականացվող խիստ վերահսկողությունը, վերոնշյալ ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը գնահատվում է բավականին ցածր:Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի հետ, որոնք թողարկողին այս պահին հայտնի չեն, կամ որոնք թողարկողն էական չի համարել սույն ազդագրում ներառելու համար:

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի Խորհրդի կողմից հաստատված հեռանկարային զարգացման ծրագրի: Բանկի գործունեությունը վերահսկվում է Բանկի Խորհրդի և Վարչության կողմից, որոնք օպերատիվ կերպով արձագանքում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ մշտապես հաշվի առնելով Բանկի կողմից առաջարկվող ծառայությունների և սակագների համապատասխանեցումը շուկայի պահանջներին:

Բանկի ընդհանուր զարգացման մեջ ամենաէականը մանրածախ բիզնեսի, փոքր և միջին բիզնեսի զարգացումն է, ինչպես նաև Բանկը ուշադրություն է դարձնում սպասարկման որակի բարձրացմանը, դրա շրջանակների ընդլայնմանը և ռեսուրսների ներգրավմանը (մասնավորապես ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում): Բանկը նաև գործողություններ կձեռնարկի իրացվելիության ապահովման և ֆինանսական շուկաներում հնարավոր զարգացումներին և ցնցումներին պատրաստվածություն ձեռք բերելու ուղղությամբ:

2017 թվականի ընթացքում և մինչ Ազդագրի գրանցման ներկայացման օրը, Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն է տեղի ունեցել՝ հաշվի առնելով այն հանգամանքը որ բանկի կապիտալը էապես համալրվել է և 31.03.2018թ-ի դրությամբ կազմում էր 32,561,317 ՀՀ դրամ: Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը, լիցենզիաներն ուժի մեջ են, Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա էական ազդեցություն ունեցող դատական հայցեր առկա չեն, բացակայում և չեն սպասվում կազմակերպական փոփոխություններ: Դրա հետ մեկտեղ Բանկի ղեկավարությունը մշտապես իր ուշադրության ներքո է պահում նաև Բանկի կազմակերպական կառուցվածքի արդիական և ժամանակակից բիզնեսի վարման կանոններին համապատասխանեցնելու խնդիրը, որի հետևանքով հնարավոր են Բանկի կազմակերպական կառուցվածքի փոփոխություններ, որոնք նպատակ են հետապնդում Բանկի գործունեության բարելավման և շահութաբերության բարձրացմանը:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձ

2015, 2016 և 2017 թվականների համար անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2018 թվականի համար անկախ աուդիտ իրականացնելու համար հայտարարվել է համապատասխան մրցույթ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0012, Վաղարշյան 8/1

Հեռ.՝ +374 (10) 260 964, 260 976,

Ֆաքս՝ +374 (10) 260 961,

Էլ. հասցե՝ www.gta.am

Տնօրեն- բաժնետեր Գագիկ Գյուլբուդաղյան

1.5 Թողարկողի կառավարման անդամները, աշխատակիցները և բաժնետերը

Բանկի կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի ընդհանուր Ժողովը (այսուհետ՝ «Ժողով»),
- Խորհուրդը,
- Գործադիր մարմինը, այդ թվում՝ կոլեգիալ գործադիր մարմին՝ Վարչությունը (այսուհետ՝ «Վարչություն») և միանձնյա գործադիր մարմին՝ Վարչության նախագահ –Գործադիր տնօրեն (այսուհետ՝ «Վարչության նախագահ – Գործադիր տնօրեն»):

Բանկի կառավարման մարմինների կառուցվածքը

Բանկի Խորհուրդը կազմված է 5 անդամներից

Գագիկ Զաքարյան - Խորհրդի նախագահ, փորձառությունը՝ 24 տարի:

Գեորգի Պիսկով - Խորհրդի անդամ, փորձառությունը՝ 24 տարի:

Հրահատ Արզումանյան - Խորհրդի անդամ, փորձառությունը՝ 19 տարի:

Էդուարդ Զամանյան - Խորհրդի անդամ, փորձառությունը՝ 25 տարի:

Դավիթ Փափազյան - Խորհրդի անդամ, փորձառությունը՝ 12 տարի:

Բանկի Վարչությունը կազմված է 7 անդամներից

Մեսրոպ Հակոբյան ՝ Վարչության նախագահ, փորձառությունը՝ 16 տարի:

Արարատ Ղուկասյան՝ Վարչության նախագահի առաջին տեղակալ, փորձառությունը՝ 23 տարի:

Գոհար Գրիգորյան՝ Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ, փորձառությունը՝ 24 տարի:

Օվսաննա Առաքելյան՝ Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն, փորձառությունը՝ 19 տարի:

Դավիթ Պետրոսյան՝ Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն , փորձառությունը՝ 15 տարի:

Գուրգեն Ղուկասյան՝ Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն, փորձառությունը՝ 13 տարի:

Տիգրան Բաղանյան՝ Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման տնօրեն, փորձառությունը՝ 25 տարի:

Բանկի աշխատակիցների թիվը 31.12.2017 թվականի դրությամբ կազմում է 785 աշխատակից:

Յունիբանկ ԲԲԸ-ի սովորական անվանական բաժնետոմսերի ուղղակի հսկող անձ հանդիսանում է Յունիհոլդինգ ՋՋ Լիմիթեդ Ընկերությունը – 87.8% (հասցեն՝ Կիպրոս, Նիկոսիա, Պատմու 5Բ, Ագլաթզիա, ՓԱ 2103), որը հանդիսանում է 147,805,227 հատ սովորական անվանական բաժնետոմսերի և 32,010,000 հատ արտոնյալ անվանական բաժնետոմսերի սեփականատեր: Ընկերության մնացած սովորական անվանական բաժնետոմսերի՝ սեփականատերեր են հանդիսանում 5 իրավաբանական և 173 ֆիզիկական անձ:

1.6 Թողարկողի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տվյալներ

10.07.2015

Արժեթղթերի դասը՝	սովորական բաժնետոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	14,500,000 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ՀՀ դրամ
Արժեթղթերի տեղաբաշխման արժեքը (արժույթը)՝	230 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	1,450,000,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր տեղաբաշխման արժեքը՝	3,335,000,000 ՀՀ դրամ

15.04.2016

Արժեթղթերի դասը՝	սովորական բաժնետոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	22,704,347 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ՀՀ դրամ
Արժեթղթերի տեղաբաշխման արժեքը (արժույթը)՝	230 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը ՝	2, 270,434,700 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր տեղաբաշխման արժեքը ՝	5,222,000,000 ՀՀ դրամ

19.05.2016

Արժեթղթերի դասը՝	սովորական բաժնետոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	12,173,914 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ՀՀ դրամ
Արժեթղթերի տեղաբաշխման արժեքը (արժույթը)՝	230 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը ՝	1, 217,391,400 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր տեղաբաշխման արժեքը ՝	2,800,000,000 ՀՀ դրամ

09.11.2016

Արժեթղթերի դասը՝	սովորական բաժնետոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	14,376,044 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ՀՀ դրամ
Արժեթղթերի տեղաբաշխման արժեքը (արժույթը)՝	230 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	1,437,604,400 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր տեղաբաշխման արժեքը՝	3,306,500,000 ՀՀ դրամ

2016թ.-ի հունիսին Յունիբանկը հաջողությամբ ավարտեց 8% տարեկան եկամտաբերությամբ դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացը: 2016թ.-ի հունիսի 30-ին «Յունիբանկ» ԲԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը (UNIBB1) ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում և ընդգրկվեցին պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում:

AMUNIBB21ER8 դոլարային պարտատոմսերի ամփոփ վերլուծություն		
Պարտատոմսի ISIN		AMUNIBB21ER8
Պարտատոմսի եկամտաբերություն		8%
Պարտատոմսի մարման ամսաթիվ		8-Apr-18
Արժեկտրոնի վճարման հաճախականություն		4
Տեղաբաշխված պարտատոմսի քանակ		50,000
Տեղաբաշխված պարտատոմսի ծավալ		5,000,000
Տեղաբաշխված պարտատոմսերի միջին գին		100.2814
Պարտատոմսերի անվանատերերի քանակ		128
Պարտատոմսերի անվանատերերի տարանջատում ըստ Ֆիզիկական և իրավաբանական անձանց	Ֆիզիկական անձ	126
	Իրավաբանական անձ	2

2017թ.-ի նոյեմբերին Յունիբանկը հաջողությամբ ավարտեց 5.75% տարեկան եկամտաբերությամբ դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացը: 2017թ.-ի նոյեմբերին «Յունիբանկ» ԲԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը (UNIBB1) ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում և ընդգրկվեցին պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում:

AMUNIBB21ER8 դոլարային պարտատոմսերի ամփոփ վերլուծություն

Պարտատոմսի ISIN		AMUNIBB23ER4
Պարտատոմսի եկամտաբերություն		5.75%
Պարտատոմսի մարման ամսաթիվ		11-Sep-2020թ
Արժեկտրոնի վճարման հաճախականություն		4
Տեղաբաշխված պարտատոմսի քանակ		50,000
Տեղաբաշխված պարտատոմսի ծավալ		5,000,000
Տեղաբաշխված պարտատոմսերի միջին գին		100.41
Պարտատոմսերի անվանատերերի քանակ		161
Պարտատոմսերի անվանատերերի տարանջատում ըստ Ֆիզիկական և իրավաբանական անձանց	Ֆիզիկական անձ	158
	Իրավաբանական անձ	3

2017թ.-ի մայիսին Յունիբանկը հաջողությամբ ավարտեց 13.5% տարեկան եկամտաբերությամբ դրամային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացը: 2017թ.-ի հունիսին «Յունիբանկ» ԲԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը (UNIBB1) ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում և ընդգրկվեցին պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում:

AMUNIBB22ER6 դրամային պարտատոմսերի ամփոփ վերլուծություն		
Պարտատոմսի ISIN		AMUNIBB22ER6
Պարտատոմսի եկամտաբերություն		13.50%
Պարտատոմսի մարման ամսաթիվ		23-Nov-18
Արժեկտրոնի վճարման հաճախականություն		4
Տեղաբաշխված պարտատոմսի քանակ		25,000
Տեղաբաշխված պարտատոմսի ծավալ		250,000,000
Տեղաբաշխված պարտատոմսերի միջին գին (100 անվանականի դիմաց)		100.98
Պարտատոմսերի անվանատերերի քանակ		32
Պարտատոմսերի անվանատերերի տարանջատում ըստ Ֆիզիկական և	Ֆիզիկական անձ	30
	իրավաբանական անձանց	2

2018թ.-ի փետրվարին Յունիբանկը հաջողությամբ ավարտեց 10% տարեկան եկամտաբերությամբ դրամային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացը: 2018թ.-ի փետրվարին «Յունիբանկ» ԲԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում և ընդգրկվեցին պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում:

AMUNIBB22ER5 դրամային պարտատոմսերի ամփոփ վերլուծություն	
Պարտատոմսի ISIN	AMUNIBB22ER5
Պարտատոմսի եկամտաբերություն	10%
Պարտատոմսի մարման ամսաթիվ	13-Feb-2020

Արժեկտրոնի վճարման հաճախականություն		4
Տեղաբաշխված պարտատոմսի քանակ		25,000
Տեղաբաշխված պարտատոմսի ծավալ		250,000,000
Տեղաբաշխված պարտատոմսերի միջին գին (100 անվանականի դիմաց)		10 040.65
Պարտատոմսերի անվանատերերի քանակ		31
Պարտատոմսերի անվանատերերի տարանջատում ըստ Ֆիզիկական և իրավաբանական անձանց	Ֆիզիկական անձ	30
	Իրավաբանական անձ	1

2018թ.-ի մարտին Յունիբանկը հաջողությամբ ավարտեց 5.5% տարեկան եկամտաբերությամբ դոլարային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գործընթացը: 2018թ.-ի ապրիլին «Յունիբանկ» ԲԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում և ընդգրկվեցին պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում:

AMUNIBB22ER4 դոլարային պարտատոմսերի ամփոփ վերլուծություն		
Պարտատոմսի ISIN		AMUNIBB22ER4
Պարտատոմսի եկամտաբերություն		5.5%
Պարտատոմսի մարման ամսաթիվ		13-May-2021
Արժեկտրոնի վճարման հաճախականություն		5
Տեղաբաշխված պարտատոմսի քանակ		50,000
Տեղաբաշխված պարտատոմսի ծավալ		5,000,000
Տեղաբաշխված պարտատոմսերի միջին գին (100 անվանականի դիմաց)		100.4894
Պարտատոմսերի անվանատերերի քանակ		54
Պարտատոմսերի անվանատերերի տարանջատում ըստ Ֆիզիկական և իրավաբանական անձանց	Ֆիզիկական անձ	53
	Իրավաբանական անձ	1

1.7 Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները

Արժեթղթերի դասը՝	Անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	200,000 հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար,100,000 հատ ՀՀ դրամով պարտատոմսերի համար
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ԱՄՆ դոլար, 10.000 ՀՀ դրամ

Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	20,000,000 ԱՄՆ դոլար, 1 միլիարդ ՀՀ դրամ
Արժեկտրոնը՝	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Եռամսյակային
Տեղաբաշխման օրը	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար
Տարեկան արժեկտրոնի մեծությունը	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
Շրջանառության ժամկետը՝	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
Շրջանառության ձևը՝	Ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը՝	չապահովված

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Խորհրդի կողմից: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում տեղաբաշխումից առնվազն երկու օր առաջ:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներըն ուղղվելու են վարկերի տրամադրմանը:

Առաջարկից օգտվելու համար անձը, որը որոշել է ընդունել առաջարկը և գնել պարտատոմսեր, պետք է մասնակցի պարտատոմսերի տեղաբաշխմանը՝ Բանկի Գլխամասային գրասենյակի և մասնաճյուղային ցանցի միջոցով: Որպես գնորդ կարող է հանդես գալ ցանկացած ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

1.8 Թողարկողի ամփոփ ֆինանսական տվյալները

Բացարձակ արժեքով ներկայացված ցուցանիշներն արտահայտված են հազ. ՀՀ դրամով:

Ցուցանիշի անվանումը	31.12.2017 (Աուդիտ անցած)	31.12.2016 (Աուդիտ անցած)	31.12.2015 (Աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	67,602	-443,218	358,481
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,334,279	29,704,263	21,572,971
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	0.2%	-1.5%	1.7%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	67,602	-443,218	358,481
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	191,844,966	174,248,544	164,199,203
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.0%	-0.3%	0.2%

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	67,602	-443,218	358,481
Գործառնական եկամուտ	13,454,274	10,831,503	9,421,982
Զուտ շահույթի մարժա (NPM), %	0.5%	-4.1%	3.8%
Գործառնական եկամուտ	13,454,274	10,831,503	9,421,982
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	191,844,966	174,248,544	164,199,203
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	7.0%	6.2%	5.7%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	191,844,966	174,248,544	164,199,203
Սեփական կապիտալի միջին մեծություն	35,334,279	29,704,263	21,572,971
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.43	5.87	7.61
Զուտ տոկոսային եկամուտ	10,491,356	8,361,044	6,283,035
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	148,972,966	131,429,702	121,353,467
Զուտ տոկոսային մարժա (NIM)	7.0%	6.4%	5.2%
Տոկոսային եկամուտ	22,296,742	21,329,971	19,714,397
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	148,972,966	131,429,702	121,353,467
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	15.0%	16.2%	16.2%
Տոկոսային ծախսեր	11,805,386	12,968,927	13,431,362
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	154,817,860	142,975,618	140,958,062
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	7.6%	9.1%	9.5%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	67,602	-443,218	358,481
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	203,732,963	163,963,708	131,094,713
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.3	-2.7	3
Սպրեդ	7.3%	7.2%	6.7%

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1 Ռիսկային Գործոններ

Արժեթղթերում, ներառյալ պարտատոմսերում, ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ, այդ իսկ պատճառով, ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել, որ Ազդագրում ներկայացված ռիսկերից բացի կարող է նաև առաջանալ այլ անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ ռիսկ, և ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի և իրացվելիության անկմանը:

Բանկի կողմից առավել էական ռիսկեր են դիտարկվում.

Իրացվելիության ռիսկը պարտատոմսերի շուկայի ծավալի և ցածր զարգացվածության պայմաններում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների առաջացումն է: Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով: Արդյունքում՝ պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը և ներդրողը ստիպված լինի իրացնել պարտատոմսերը ավելի ցածր գնով քան ձեռք բերման գինը:

Շուկայական ռիսկ է համարվում շուկայական գործոնների (Արտարժույթի փոխարժեք, տոկոսադրույքներ) փոփոխությամբ պայմանավորված Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում վնաս կրելու հավանականությունն է, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Թողարկողի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա:

Տոկոսադրույքի ռիսկը. տոկոսադրույքի փոփոխության հետևանքով պարտատոմսերում ներդրողների կորուստներ կրելու վտանգն է, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, այն կարող է ազդել ինչպես պարտատոմսի գնի, եկամտաբերության, այնպես էլ դրանց գրավչության և իրացվելիության վրա:

Պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Իրավական ռիսկ է համարվում Բանկի ներքին իրավական ակտերի, կիրառվող բիզնես գործընթացների, գործիքների, գործարքների, ինչպես նաև վերջիններս կարգավորող պայմանագրերի գործող օրենսդրությանը չհամապատասխանելու և դրա արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը: Փոփոխությունները կարող են ազդել նաև պարտատոմսերի գրավչության և արդյունքում՝ իրացվելիության վրա:

Համբավի (հեղինակության) ռիսկ է համարվում հանրության բացասական կարծիքի հետևանքով Բանկի կողմից իր գործող կամ պոտենցիալ հաճախորդներին, գործընկերներին կորցնելու կամ վերջիններիս հետ իրականացվող գործարքների/գործառնությունների ծավալի նվազման հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի համար ֆինանսական կորուստների և/կամ իրացվելիության խնդիրների:

2.2 Հիմնական Տեղեկատվություն

Յունիբանկ ԲԲԸ ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները ուղղվելու են կարճաժամկետ ու երկարաժամկետ վարկերի տրամադրմանն ու ներդրումների իրականացմանը:

Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատմոսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Խորհրդի կողմից:
Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում յուրաքանչյուր տրանշի տեղաբաշումից առնվազն երկու օր առաջ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում:

2.3 Տեղեկատվություն արժեթղթերի վերաբերյալ.

2.3.1 Արժեթղթերի տեսակը և դասը. ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

2.3.2 Երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվել են արժեթղթերը. Բանկի ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերը թողարկվել են Հայաստանի Հանրապետության տարածքում, ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.3 Արժեթղթերի ձևը. Թողարկված պարտատոմսերն ոչ փաստաթղթային են: Պարտատոմսերի ռեեստրը վարվում է "Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա" ԲԲԸ-ի կողմից:

2.3.4 Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 ԱՄՆ դոլար ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի համար, 10,000 ՀՀ դրամ՝ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի համար:

2.3.5 Թողարկման արժույթը. Պարտատոմսերի թողարկման արժույթն է ԱՄՆ դոլար, ՀՀ դրամ:

2.3.6 Թողարկված արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն. Պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մայր գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Բանկը կարող է սնանկ ճանաչվել և դրա արդյունքում լուծարվել «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Բանկի սնանկության դեպքում պարտատերերին վճարումները կատարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են 4-րդ հերթին, բացառությամբ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի իմաստով ավանդ հանդիսացող ներդումներից, որոնք բավարարվում են 3-րդ հերթին: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով և նույն օրենքով սահմանված կարգով ենթակա են հատուցման համաձայն 3-րդ հոդվածով սահմանված չափերով, այն է ՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը հինգ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասը միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է հինգ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

2.3.7 Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը. Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվել են պարտատոմսերից բխող հետևյալ իրավունքները՝

- Բանկի պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ վճարվող արժեկտրոնները անվանական արժեքով համաձայն համապատասխան ժամանակացույցի:

Արժեկտրոնային եկամտի ստացման/ պարտատոմսերի շրջանառության ժամկետի վերջում դրանց անվանական արժեքի հետ ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում, և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի անվանական արժեքը փոխանցվում է ներդրողի/անվանատիրոջ բանկային հաշվին Թողարկողի կողմից:

- Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ:
- Գրավադրել պարտատոմսերն օրենքով սահմանված կարգով
- Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը Ֆոնդային բորսայում կամ արտաբորսայում

օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ չի թույլատրվում կարգավորվող շուկայից դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր:

- Օրենքով նախատեսված այլ իրավունքներ

Միաժամանակ պարտատոմսի սեփականատերը պարտավոր է պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն, ինչպես նաև կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

2.3.8 Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները.

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային եկամուտ, որը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից: Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը վճարվելու է եռամսյակային պարբերականությամբ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում հաշվարկվելու է ԱՄՆ դոլարով, սակայն ներդրողներին վճարվելու է ՀՀ դրամով, վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված պաշտոնական փոխարժեքով:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին և/կամ անվանատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա վերջի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը չեն կարող ունենալ նախորդ արժեկտրոնային ժամանակաշրջանի համար (նախորդ եռամսյակի) վճարվող արժեկտրոնի ստացման իրավունք:

Պարտատոմսերի սեփականատերերին վճարվող եկամուտները (տոկոսագումարները) վճարվելու են պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման հաջորդ օրվա ընթացքում:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն ԱՄՆ դոլարով հաշվարկվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ, ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ թիվը, իսկ անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 10 ՀՀ դրամ ճշտությամբ (կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

«Յունիբանկ» ԲԲԸ արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Բանկը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում, և Բանկն այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Բանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ: Բանկի համապատասխան ստորաբաժանումը ճշտում է տվյալ հաճախորդին սպասարկող օպերատորից վերջինիս ճշգրիտ հաշվեհամարը:

Արժեկտրոնի գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում հետևյալ բանաձևը՝

ԱԳ = (FV X C) /k, որտեղ

ԱԳ-ն արժեկտրոնի գումարն է,

FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C– տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4):

Արժեկտրոնի կուտակումը իրականացվում է հետևյալ բանաձևով՝

$$AI=FV \times \frac{C}{K} \times \frac{DCS}{DCC}$$

AI- կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV– մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C– տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k-ն մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը (արժեկտրոնների եռամսյակային վճարման դեպքում k=4),

DCS - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրը (settlement date) օրերի քանակն է համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում:

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է 30/360-ը, ընդ որում

DCS = 360 (Y2-Y1)+30(M2-M1)+(D2–D1)

D2M2Y2- գործարքի կատարման ամսաթիվն է (settlement date);

D1M1Y1 - գործարքի օրվան նախորդող արժեկտրոնի վճարման ամսաթիվն է, եթե պարտատոմսը դեռևս արժեկտրոն չի վճարել, ապա արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է:

DCC = 360/k:

2.3.9 Նոր թողարկման մասին տեղեկատվություն

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվում են համաձայն Բանկի խորհրդի 2018թ. ապրիլի 16-ի որոշման: Բանկի Խորհրդի որոշմամբ սահմանվել է, որ ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ հետգնում և մարում չի նախատեսվում: Խորհրդի որոշմամբ կսահմանվի նաև պարտատոմսերի հիմնական, այդ թվում մարման պայմանները:

2.3.10 Պարտատոմսերի ազատ շրջանառության սահմանափակումների նկարագրությունը.

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի Խորհրդի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ սահմանափակումներ չեն սահմանվում: Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետներում, Բանկը դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ պարտատոմսերի ցուցակման համար: Պարտատոմսերի ցուցակման դիմումը կարող է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կողմից չբավարարվել: Պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Բանկի պարտատոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել, որի դեպքում Բանկը տեղաբաշխումը չեղյալ կհայտարարի:

Տեղաբաշխումը չեղյալ հայտարարելու դեպքում տեղաբաշխման ընթացքում ստացված գումարները ենթակա են վերադարձման ներդրողներին չեղյալ հայտարարելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում: Գումարների վերադարձը կատարվում է դրանք հաճախորդների կողմից գնման պատվերի մեջ նշված համապատասխան հաշիվներին վերադարձնելու միջոցով: Տեղաբաշխման ընթացքում ստացված գումարների վերադարձի դեպքում հետ են վերադարձվում պարտատոմսի համար վճարված գումարները և դրանց նկատմամբ հաշվարկված տոկոսները:

2.3.11 Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգը:

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ երկու դեպքում՝

_ պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից (արժեկտրոնային եկամուտ) և

_ պարտատոմսի վերավաճառքից (կապիտալի հավելաճ):

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով ստացվող եկամուտը ենթակա են հարկման շահութահարկով և եկամտային հարկով:

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում, հարկման օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 20 տոկոս դրույքաչափով:Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար շահութահարկը հաշվարկվում է այլ դրույքաչափով: Այսպես, եթե ոչ ռեզիդենտը հայաստանյան աղբյուրներից ստանում է պասիվ եկամուտներ (տոկոսներ, կապիտալի հավելաճ և այլն), ապա նրա հարկային գործակալը պարտավոր է գանձել շահութահարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում, ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքի դրույթների համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Պարտատոմսերից կապիտալի հավելաճից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման, իսկ տոկոսները հաշվառվում են համախառն եկամտում և հարկվում են 10 տոկոս դրույքաչափով:

Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար և սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Բանկը:

4. Առաջարկի ժամկետները և պայմանները.

4.1. Թողարկման ընդհանուր ծավալը ներկայացվում է ստորև:

Արժեթղթերի քանակը՝	200,000 հատ ԱՄՆ դոլարով,100,000 հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100 ԱՄՆ դոլար, 10.000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	20,000,000 ԱՄՆ դոլար, 1 միլիարդ ՀՀ դրամ

4.2. Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու օրը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից: Պարտատոմսերի գնման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի գնման յուրաքանչյուր պատվերի ներկայացման օրվա ընթացքում:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսերի գնման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Բանկի կողմից բացված և 24100336438700 բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսերի գնման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Բանկի կողմից բացված և 24100336627500 բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի գնման պատվեր ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց գնման պատվերները չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ հաշվի վրա մնալը՝ մինչև պարտատոմսերի թողարկման պայմանների համաձայն դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտի ներկայացումից հետո սահմանված ժամկետում

համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների գնման պատվերները համարվում են անվավեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց վճարման համար անհրաժեշտ է դրամական միջոցները մուտքագրել «Յունիբանկ» ԲԲԸ-ում նախապես բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին:

4.3 «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն Բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման չեղյալ հայտարարելու կամ հետաձգվելու դեպքեր և հանգամանքեր:

4.4 Պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու: Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները պետք է լրացնեն և Բանկին պատշաճ կերպով առաքեն Պարտատոմսերի գնման համապատասխան գնման պատվերը, որով հավաստում են պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները դառնում են ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի գնման պատվերի լրացումից հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:00-ը պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է «Յունիբանկ ԲԲԸ-ում նախապես բացված տարանցիկ հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի գնման պատվերում նշված համապատասխան քանակի պարտատոմսեր ձեռք բերելու դիմաց: Պարտատոմսերը թողարկողի կողմից առաքվելու են ներդրողների հաշիվներին համապատասխան գումարը գանձելու օրվանից հետո հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում (T+2 սկզբունքով): Պարտատոմսերի գնման պատվերը կհամարվի պատշաճ կերպով առաքված, եթե այն առաքվել է ստորև ներկայացված կապի միջոցներից որևէ մեկի միջոցով (կամ առձեռն՝ Բանկի գրասենյակ այցելելով) և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53

Յունիբանկ ԲԲԸ, Գանձապետարան

Կամ էլեկտրոնային փոստ: broker@unibank.am

Համապատասխան գնման պատվերը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողի կողմից իրենց գնման պատվերների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Գնման պատվերի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների գնման պատվերները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը: Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի գնման պատվերները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից գնման պատվերի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող ետ կանչել:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո ստացված պարտատոմսերի գնման պատվերները չեն կարող բավարարվել:

Իրավաբանական անձ և ֆիզիկական անձ ներդրողների համար պարտատոմսի գնման պատվերի

ձևը ներկայացված է Ազդագրի հավելված 1-ում:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի պարտատոմսի գնման պատվեր:

Պարտատոմսերի գնման համար ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք լրացնում են գնման պատվերում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտի վավերականությունն ապահովելու համար:

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ Պարտատոմսերի գնման պատվերների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն առաջնահերթություն ունի այն գնման պատվերը, որի դիմաց վճարումը Բանկի կողմից բացված տարանցիկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Այն դեպքում, երբ հաճախորդի ներկայացրած գնման պատվերում նշված պարտատոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսերի մնացորդային քանակը, հաճախորդի գնման պատվերը բավարարվում է մասնակի՝ պարտատոմսերի մնացորդային քանակին համապատասխան, իսկ եթե, մի քանի հաճախորդ Գլխամասային գրասենյակ և մասնաճյուղ են ներկայացրել գնման պատվերները միաժամանակ և այդ ներկայացրած գնման պատվերում նշված պարտատոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման համար նախատեսված պարտատոմսերի մնացորդային քանակը, ապա հաճախորդների գնման պատվերները բավարարվում են համամասնորեն:

Գնման պատվերի ներկայացումից հետո մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00 համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների գնման պատվերները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Առկա են պարտատոմսերի ձեռքբերման գումարային սահմանափակումներ, պարտատոմսի ձեռք բերման համար գնման նվազագույն ծավալը կազմում է 1,000 ԱՄՆ դոլար թողարկվող պարտատոմսերի դեպքում, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 1 մլն ՀՀ դրամ:

Բանկի անվանական պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում Բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am:

Պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում գնման նախապատվության իրավունք չի նախատեսվում:

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին: Բանկին հայտնի չէ, թե ինչ ծավալով կարող են Բանկի բաժնետերերը կամ Բանկի կառավարման մարմնի անդամները մասնակցել առաջարկին:

5. Առաջարկի գինը

5.1. Բանկի խորհրդի կողմից ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից պարտատոմսերի անվանական արժեքը ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում սահմանված է 100 ԱՄՆ դոլար, նվազագույն քանակը՝ 10 հատ, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ 10,000 ՀՀ դրամ, նվազագույն ծավալը՝ 1,000,000 ՀՀ դրամ:

5.2. Տեղաբաշխման ընթացքում և տեղաբաշխումից հետո պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\left(\frac{1}{(1+\frac{y}{100*f})^{i-1+t}}\right)+\left(\frac{100}{(1+\frac{y}{100*f})^{N-1+t}}\right)$$

$$t=\frac{DSN}{DCC}$$

DP – Պարտատոմսի գինն է.

DSN – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա մեջ եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում:

DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում:

f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում)

N – գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է:

Y- մինչ մարում եկամտաբերությունն է

C- տարեկան արժեկտրոնն է 100 միավոր անվանական արժեքի դիմաց:

Տեղաբաշխումը սկսելուց 2 օր առաջ առաջ Բանկի ինտերնետային կայքում կհրապարակվի վերոնշյալ բանաձևով հաշվարկված պարտատոմսի տեղաբաշխման գինը՝ տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի:

6. Տեղաբաշխման պլանը

6.1. Բանկը հանդես է գալիս նաև որպես իր կողմից թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխող:

6.2. ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում պարտատոմսերի գնման դիմաց վճարումները կատարվում են ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ-ում բացված 24100336438700 հաշվեհամարին: Իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերի դեպքում՝ ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ-ում բացված 24100336627500 հաշվեհամարին:

6.3. Պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշիվները բացվում են ՀԿԴ-ում և ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորված ցանկացած այլ մասնագիտացված պահառուի մոտ՝ պարտատոմսերի սեփականատիրոջ համար արժեթղթերի սեփականատիրոջ հաշիվ բացելու և վարելու միջոցով:

7. Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

7.1. Պարտատոմսերի տեղաբաշխաման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով Բանկը նախատեսում է դիմել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին

թույլատրելու համար: Առաջարկվող պարտատոմսերի մասով հայցվելու է առևտրին թույլտվություն: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:

7.2. Բանկը պարտադիր կնքելու է պայմանագիր «Արմենբրոկ» ԲԲԸ-ի հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու համար (հասցե՝ ՀՀ, Երևան 0018, Տիգրան Մեծի 32/1): Շուկա ստեղծողի պարտավորության հիմնական պայմանները կսահմանվեն իր հետ կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով: Շուկա ստեղծողը "ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա" ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ:

8. Լրացուցիչ տեղեկատվություն

8.1. Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

8.2. Սույն Բաժնում ներկայացված տեղեկատվությունը չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորի կողմից:

8.3 Moody's Investors Service միջազգային գործակալությունը 2017թ.-ի օգոստոսին հաստատեց «Յունիբանկի» դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների B2 վարկանիշը՝ կանխատեսումը թողնելով «կայուն»:

ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անկախ աուդիտորներ

Սկսած 2009թ. Բանկի համար աուդիտորական աշխատանքներն իրականացվել են Grant Thornton International-ի հայաստանյան անդամ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերության կողմից:

Հասցե. ՀՀ, Երևան 0012, Վաղարշյան փող. 8/1

Հեռ. +374 (10) 260 964, 260 976,

Ֆաքս. - +374 (10) 260 961,

Էլ.փոստ. www.gta.am

Տնօրեն-բաժնետեր՝ Գագիկ Գյուլբուդաղյան:

2. Ռիսկային գործոններ

Ընդհանուր բնութագիրը

Ռիսկերի կառավարումը Յունիբանկի կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում: Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցիալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների համակողմանի համակարգ: Ռիսկերի կառավարման հիմնական նպատակն այն է, որ Յունիբանկը կարողանա իր ռիսկերի գումարային մեծությունը պահպանել Բանկի ռազմավարական ծրագրով սահմանված ռիսկերի մակարդակի վրա և բարձրացնել Բանկի կապիտալի եկամտաբերությունը:

Ռիսկերի կառավարման սկզբունքները

Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է Միջազգային հաշվարկների բանկի Բանկային վերահսկողության կոմիտեի (Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտե) փաստաթղթերի, Ռիսկերի կառավարման համընդհանուր սկզբունքների (GARP), ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ-ի նորմատիվ ակտերի հիման վրա: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ռիսկերի նույնականացման, չափման և մոնիթորինգի շարունակական գործընթացի միջոցով՝ ռիսկերի սահմանաչափերի և հսկողության այլ միջոցների պահպանմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար, և Բանկում աշխատող յուրաքանչյուր անձ պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի համար:

Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարմանն առնչվող գիտելիքների մակարդակի բարձրացմանը նպաստող մշակույթի ձևավորումը՝ մասնավորապես համապատասխան սեմինարների կազմակերպման միջոցով:

Ռիսկերի կառավարման համակարգը

Իր գործունեության ընթացքում Բանկը ենթարկվում է մի շարք ֆինանսական ռիսկերի, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համադրության որոշ աստիճանի վերլուծություն, գնահատում, ստանձնում և կառավարում: Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, իրացվելիության ռիսկի և շուկայական ռիսկի, ընդ որում, վերջինս ենթաբաժանվում է առևտրային և ոչ առևտրային ռիսկերի: Բանկը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի հսկողության անկախ գործընթացը չի ներառում բիզնեսի հետ կապված ռիսկերը, ինչպիսիք են փոփոխվող միջավայրը, տեխնոլոգիան և արդյունաբերությունը: Դրանք հսկվում են Բանկի ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Ռիսկերի կառավարումը ներառում է՝

-Ռիսկերի ընդունելի մակարդակի և զարգացման ռազմավարության օպտիմալ հարաբերակցության հասնելը,

- հայտնաբերվող ռիսկերի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացի բարելավում, հաշվետվողականության ավելացում

- ռիսկերի փոխազդեցության գնահատում

- ռիսկերին համարժեք կապիտալի հաշվարկում և գնահատում

- վարկերի գնագոյացման նոր մոդելի կիրառմամբ գնի մեջ ռիսկերի ընդգրկում:

Բանկի կողմից կիրառվում են վարկավորման գործընթացի հուսալիության ապահովման մեխանիզմները. վարկավորման վերաբերյալ կոլեգիալ որոշումների կայացումը, ներկայացվող վարկային հայտերի մանրակրկիտ ուսումնասիությունը, վարկային միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ անհրաժեշտ հսկողության սահմանումը, բարձր իրացվելի ակտիվներով (գրավով) ստանձնվող պարտավորությունների ապահովումը:

Հնարավոր կորուստները և ռիսկերը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկավորում իրականացնելու ժամանակ առաջնայնությունը տալիս է վարկային պատմություն ձևավորած հաճախորդներին: Օգտագործելով ՀՀ ԿԲ Վարկային ռեգիստրի բազայից ստացվող տեղեկատվությունը՝ Բանկը վարկավորում է նաև այն հաճախորդներին, որոնց վերաբերյալ առկա է բանկային համակարգի նկատմամբ ստանձնած վարկային պարտավորությունների դրական պատմություն:

Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարում է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները տեղաբաշխվում են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում կարճաժամկետ և միջին կտրվածքով: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարում է տնտեսության ճյուղերի վերլուծություն: Վարկերը, որպես կանոն, առաջնահերթ տրամադրվում են այն կազմակերպություններին, որոնք իրենց ընթացիկ հաշիվն ունեն Բանկում: Ուսումնասիրելով և վերլուծելով հաճախորդի դրամական հոսքերը՝ Բանկը որոշում կկայացնի վարկի տրամադրման մասին:

Բանկային ռիսկերի կառավարումը Բանկը տեսնում է ակտիվների և պասիվների արդյունավետ կառավարման, պլանավորման, ռիսկերի բացահայտման և չափման, բացահայտված ռիսկերին համապատասխան կանխարգելիչ միջոցառումների իրականացման մեջ: Այդ նպատակով Բանկը շարունակում է հաշվեկշռի բոլոր հոդվածների կառավարումը, նրանց կանխատեսումը ամենօրյա մոնիթորինգի միջոցով, սահմանում է բանկում առկա ռիսկերին համապատասխան ակտիվային և պասիվային գործառնությունների սահմանաչափեր, պարբերաբար վերլուծում է ռիսկային գործընթացները, առաջարկում համապատասխան լուծումներ:

Վարկային ռիսկերի կառավարման առումով Բանկը ձգտում է ձևավորել արդյունավետ վարկային պորտֆել՝ համակցելով ռիսկ-եկամտաբերություն ցուցանիշները, ինչին հասնելու համար Բանկը ձգտում է մեծացնել վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի ցուցանիշը, հաստատել վարկային ուղղությունների /գործիքների/ սահմանաչափեր, որոնք ներկայացվում են 'Բանկի ներդրումնային քաղաքականության ծրագրում', ինչպես նաև շարունակում է բարելավել վարկավորման գործընթացը:

Ռիսկերի կառավարման համակարգի նպատակն է աջակցել բանկին իր գործունեության ընթացքում առաջացող համընդհանուր ռիսկը պահելու այն մակարդակի վրա, որն ընդունել է բանկն իր ռազմավարական խնդիրների շրջանակում: Ռիսկերի կառավարման համակարգի առաջնահերթ խնդիրն է առավելագույնս ապահովել բանկի ակտիվների և կապիտալի ամբողջականությունը, ինչպես նաև նվազագույնի հասցնել բանկային գործունեությանը բնորոշ բոլոր ռիսկերը, որոնք կարող են հանգեցնել չնախատեսված կորուստների:
Ռիսկերի կառավարման համակարգն իր նպատակին հասնելու համար առաջնորդվում է համակարգված համալիր մոտեցմամբ, որն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը՝

- բացահայտել և վերլուծել բանկային գործունեության ընթացքում ծագող բոլոր ռիսկերը,
- սահմանել տարբեր ռիսկերի նկատմամբ վերաբերմունք /ռիսկ ախորժակ/,
- իրականացնել ռիսկի յուրաքանչյուր տեսակի որակական և/կամ քանակական գնահատումներ,
- կատարել արդեն իսկ իրականացված և պլանավորված գործարքների գծով ռիսկերի մակարդակի ամբողջական և համալիր վերլուծություն՝ բանկային ռիսկերի համընդհանուր/գումարային չափը որոշելու նպատակով, •գնահատել համընդհանուր /գումարային ռիսկերի թույլատրելի չափը և հիմնավորվածությունը:

Բանկի «Ռիսկերի կառավարման քաղաքականությունը» առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ-ի նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով /Generally Accepted Risk Principles – GARP/: Հաշվի առնելով բանկի գործունեության բնույթը և ծավալները, բանկում առանձնահատուկ ուշադրության են արժանանում հետևյալ կարևորագույն ռիսկերը.

· ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ
· ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿ
· ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿ
· ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ
· ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Վարկային ռիսկ

Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, որն իրենից ներկայացնում է այն ռիսկը, որ գործարքի մյուս կողմը իր պարտականությունների չկատարման հետևանքով Բանկին կպատճառի ֆինանսական վնաս: Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարումը կարող են էապես ազդել բանկի գործունեության վրա, և առաջացնել լրացուցիչ ծախսեր, որոնք բացասական կանդրադառնան բանկի շահույթի վրա: Վարկային ռիսկը Բանկի գործունեության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով ղեկավարությունը առավել մեծ ուշադրությամբ է վերահսկում այն: Վարկային ռիսկերը հիմնականում ծագում են վարկերի ու փոխատվությունների տրամադրմանն ուղղված վարկավորման գործունեությունից, ինչպես նաև Բանկի ակտիվների պորտֆելում պարտքային և այլ արժեթղթերի ավելացմանը հանգեցնող ներդրումային գործունեությունից: Վարկային ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են, օրինակ, վարկային պարտավորությունները և դրանց հետ կապված ապահովման (գրավ, երաշխավորություն, երաշխիք և այլն) պայմանագրերից բխող պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարման ու հսկողության գործառույթներն իրականացվում են Բանկի Ռիսկերի կառավարման տնօրինության վարկային ռիսկի կառավարման խմբի և Վարկային ստորաբաժանման կողմից և զեկուցվում են Բանկի Խորհրդին ու Վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները լավագույնս ներկայացնում են առավելագույն ենթարկվածությունը դրանց հետ կապված վարկային ռիսկին, առանց հաշվի առնելու ցանկացած գրավ կամ այլ վարկային ապահովումներ:

«Յունիբանկ» ԲԲԸ վարկային պորտֆելը բավականին դիվեսիֆիկացված է և իր մեջ չի պարունակում խոշոր կենտրոնացումներ: Վարկավորման գերակա ուղղություններն են հանդիսանում մանրածախ վարկավորումն ու ՓՄՁ վարկերի տրամադրումը: Այնուամենայինիվ բանկի պորտֆելում առկա են չաշխատող ակտիվներ, որոնք և բանկի համար կարող են հադիսանալ պոտենցիալ կորուստների աղբյուր:
Համաձայն բանկի վարկային պորտֆելի ռիսկայնության վերլուծությունների բանկի պորտֆելը ունի հետևյալ կառուցվածքը 31.03.2018թ. դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ		
	Ցածր ռիսկ		Միջին ռիսկ		Բարձր ռիսկ
Վարկեր, այդ թվում՝					
1. ՀՀ ռեզիդենտներին	86,650,525		5,436,689		52,286,902

2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին	10,781,655				2,588,955
Ընդամենը	97,432,180		5,436,689		54,875,857

Միաժամանակ բանկի վարկային ռիսկը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը:

Վարկերի գծով պահուստաֆոնդ/ընդհանուր վարկեր = 3.85 %

Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր =38.24%

Չաշխատող վարկերի պահուստ/ընդհանուր կապիտալ = 23.24%

Հնարավոր կորուստների հատուկ պահուստ/չաշխատող վարկեր = 10.06%

Շահույթի ծածկման գործակից (զուտ գործառնական եկամուտներ+պահուստի ստեղծման ծախսեր)/վարկերից զուտ կորուստ =267.15%

Վարկային ռիսկով ճշգրտված զուտ տկոսային մարժա =2.31%:

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ սահմանելով մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ ապրանքատեսակների, տնտեսության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում և անհրաժեշտության դեպքում վերանայվում են Բանկի Խորհրդի կողմից:

Վարկային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Տոկոսադրույքների ռիսկերի նվազեցնելու նպատակով Բանկը նպատակահարմար է գտնում շարունակել աշխատել ֆիքսված տոկոսադրույքներով՝ ինչը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով կառավարել ակտիվների և պարտավորությունների գնագոյացման խնդիրը: Միևնույն ժամանակ տոկոսադրույքի ռիսկը կառավարելու համար Բանկը սահմանում է սահմանաչափեր՝ տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների ու պարտավորությունների ժամկետայնությունների ճեղքվածքների նկատմամբ:

Արտարժութային ռիսկը զսպվում է՝ արտարժութային դիրքերի (ինչպես համախառն այնպես էլ զուտ) կառավարումը կապակցելով շուկայի վարքագծի կանխատեսումների վրա: Ռիսկի նվազեցման համար Բանկի կողմից իրականացվում է ակտիվների և պասիվների կառավարման այնպիսի քաղաքականություն, որը թույլ է տալիս արտարժութային պարտավորություններն առավելագույնս ապահովել համապատասխան արտարժույթով ակտիվներով: Բանկը, ելնելով շուկայում ստեղծվող որոշակի իրավիճակներից, վերլուծելով ՀՀ ԿԲ դրամավարկային

քաղաքականությունը, չի բացառում նաև հեջավորման կամ առևտրային նպատակներով ածանցյալ գործառնություններ իրականացնել հնարավորինս քիչ ռիսկային դաշտերում՝ ուսումնասիրելով գործընկերների ֆինանսական վիճակը՝ Բանկի համապատասխան ներքին կանոնակարգերով սահմանված չափանիշներին համապատասխան:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿ

Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններից: Բանկի գրեթե բոլոր ակտիվներն ու պարտավորությունները ֆիքսված տոկոսադրույքով են: Այնուամենայնիվ այդ դեպքում կարող են առաջանալ ռիսկեր, կապված բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետների անհամապատասխանության հետ: Տոկոսադրույքի ռիսկը գնահատելու համար օգտագործվում են GAP վերլուծությունը և դյուրացիայի մեթոդը: Նշված ռիսկերը զսպելու համար բանկում վարվում է ռիսկերը նվազեցնող գնագոյացման համապատասխան քաղաքականություն:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿ

Արտարժութային ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի ոչ բարենպաստ տատանումներից:
Արտարժութային ռիսկը գնահատելու համար բանկն օգտագործում է VAR /value at risk/ մեթոդը և GAP վերլուծությունը, ինչպես նաև տարբեր սթրես-թեստեր, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու արտարժութային ռիսկի ազդեցությունը բանկի շահութաբերության և տնտեսական նորմատիվների վրա:
Վերլուծության համաձայն, բանկում արտարժութային ռիսկը գնահատվել է ցածր մակարդակի վրա:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Իրացվելիությունը բանկի՝ իր կողմից ստանձնած ֆինանսական և այլ պարտավորությունները ժամանակին և ամբողջությամբ կատարելու ընդունակությունն է, իսկ իրացվելիության ռիսկը բանկի կողմից այդ պարտավորությունների ամբողջ ծավալով կատարելու անկարողության արդյունքում հնարավոր կորուստների ռիսկն է: Իրացվելիության ռիսկը առաջանում է բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հոսքի անհամապատասխանությունից և/կամ չնախատեսված դեպքերում /շոկ/ բանկի կողմից անմիջապես և միանվագ կերպով իր պարտավորությունների կատարման անհրաժեշտության արդյունքում:
Իրացվելիության կառավարման համար բանկն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- իրացվելիության կառավարում՝ ամենօրյա և անընդհատության հիմունքներով,
- բանկում իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հստակ տարանջատում ստորաբաժանումների միջև,
- բանկի գործունեության ծավալներին և առանձնահատկություններին համարժեք իրացվելիության մակարդակի սահմանաչափերի սահմանում:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով առանձնահատուկ ուշադրություն է դարձվում սթրես թեստերի կիրառմանը, երբ գնահատվում է բանկի կողմից ներգրավված միջոցների անսպասելի /ժամկետից շուտ/ արտահոսքի ազդեցությունը բանկի իրացվելիության նորմատիվների վրա:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿ

Գործառնական ռիսկն արտաքին գործոնների, ներքին գործընթացների, համակարգերի և մարդկային գործոնի արդյունքում առաջացող կորուստների հավանականությունն է, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա:

Բանկը գործառնական ռիսկի կառավարման նպատակներին և խնդիրներին հասնում է հետևյալ մեթոդների և սկզբունքների կիրառմամբ՝

«Պաշտպանական երեք գծերի մոդել»-ն իր մեջ ներառում է հիմնական երեք մակարդակները.

1.աշխատակիցների կողմից իրենց գործունեության ընթացքում անմիջական պատասխանատվություն
գործառնական ռիսկի կառավարման համար,

2.ռիսկի կառավարման և վերահսկման գործառույթներ /ռիսկերի կառավարման տնօրինություն, ներքին աուդիտ/,

3.ռիսկերի ռազմավարական վերահսկողություն /Բանկի Խորհուրդ և Վարչություն/:

Գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման համար բանկը կիրառում է հետևյալ հիմնական սկզբունքները.

· գործառնական ռիսկի բացահայտման, վերլուծության, դասակարգման և մոնիտորինգի արդյունավետ
համակարգի ներդրում,
· սահմանաչափերի ներդրում,
· իրավասությունների և որոշումների կայացման համակարգի ներդրում,
· տեխնոլոգիական համակարգի ներդրում,
· վերահսկման արդյունավետ համակարգի ներդրում:

ՀՀ ֆինանսական շուկան բնութագրվում է պետության կողմից վարվող ֆիսկալ և մոնետար քաղաքականությունների հետևանքներին ուղղակիորեն ենթարկվածության բարձր աստիճանով: Այնուամենայնիվ, շուկան բավարար չափով տարողունակ է և ունի նոր գործիքների ներդրման և զարգացման բավականին լուրջ պոտենցիալ: Անհրաժեշտ է նաև նշել, որ ՀՀ ֆինանսական շուկան կարիք ունի եկամտաբերությունների և ժամկետայնության դիվերսիֆիկացիայի դեպի առավել երկարաժամկետ և նվազ ռիսկայնությամբ ֆինանսական ակտիվները:

3. Տեղեկատվություն թողարկողի մասին

Թողարկողի պատմությունը և զարգացումը

«Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Յունիբանկ» կամ «Բանկ») հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ «Հայաստան» կամ ՀՀ) 2001թ. հոկտեմբերի 9-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն (Գրանցման վկայական Ng. 0373 և

Գրանցման համար թիվ 81՝ հաստատված ՀՀ Կենտրոնական Բանկի Խորհրդի 2001թ. հոկտեմբերի 9-ի թիվ 260 որոշմամբ, Բանկային գործունեության լիցենզիա թիվ 81՝ տրված 10 հոկտեմբերի, 2001թ.): Բանկի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմավորվել է, և ներկայումս Բանկի կազմակերպաիրավական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ռուսերեն՝ ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «ЮНИБАНК»

Անգլերեն՝ “UNIBANK” OPEN JOINT STOCK COMPANY

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

Ռուսերեն՝ ОАО «ЮНИБАНК»

Անգլերեն՝ “UNIBANK” OJSC

Բանկը կարգավորվում է Հայաստանի օրենքներով և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից 2001թ. հոկտեմբերի 10-ին տրված Բանկային գործունեության թիվ 81 լիցենզիայի հիման վրա: Յունիբանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկն ունի 46 մասնաճյուղ, 26 մասնաճյուղ Երևանում, 18 մասնաճյուղ Հայաստանի այլ շրջաններում և երկուսը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկն ունի նաև մեկ ներկայացուցչություն ք.Մոսկվայում, Ռուսաստան: Բանկի գրանցված գրասենյակի հասցեն է՝ ք. Երևան, Չարենցի փող. 12 շենք, թիվ 53, թիվ 1-5: Հեռախոս՝ (37410) 59-22-59; 59 55 55

Ֆաքս՝ (37410) 55-51-40

Էլեկտրոնային փոստ՝ unibank@unibank.am

Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Յունիբանկը հանդիսանում է հետևյալ ապրանքային նշանների գրանցված սեփականատերը Հայաստանում.

Գրանցման ամսաթիվ. 07.08.2002

Գրանցումն ուժի մեջ է մինչև 30.11.2021

Գրանցման համար. 6906

Unistream Money Transfer

Գրանցման ամսաթիվ. 07.08.2002

Գրանցումն ուժի մեջ է մինչև30.11.2021

Գրանցման համար. 6907

Յունիբանկը հանդիսանում է Unistream բանկային փոխանցումների խոշորագույն գործակալը Հայաստանում:

Յունիբանկը հանդիսանում է Հայաստանի բանկային համակարգի անբաժանելի մասը՝ կայուն հեղինակությամբ և հզոր շուկայական դիրքով: Այս 16 տարիների ընթացքում Յունիբանկը Հայաստանում ձևավորել է բարձր հեղինակություն և այժմ հանդիսանում է Հայաստանի առաջատար բանկերից մեկը:

Նշանակալի իրադարձություններ

2002թ. Յունիբանկը գործարկեց Unistream դրամական փոխանցումների համակարգը, որը Հայաստանի դրամական փոխանցումների առաջատար համակարգերից մեկն է:

2003թ. Յունիբանկը դարձավ «ԱրՔա» տեղական վճարային համակարգի անդամ:

2004թ. Յունիբանկը դարձավ Visa International համակարգի անդամ:

2005թ. Յունիբանկը մեկնարկեց հիփոթեքի և ավտովարկերի գծով վարկավորման լայնածավալ ծրագիր, զբաղեցնելով, համապատասխանաբար, երկրորդ և առաջին տեղերը ՀՀ բանկային համակարգում:

2006թ. Յունիբանկը դարձավ IFAD-ի գյուղական վայրերում ներդրումների խթանման ծրագրի, ինչպես նաեւ SMEDNC հիմնադրամի փոքր եւ միջին բիզնեսի զարգացման ծրագրի մասնակից: 2007թ. Յունիբանկը համալրեց իր կանոնադրական կապիտալը մինչև 5 599 մլն ՀՀ դրամ: Ներդրվեց ABN AMRO բանկի ռիսկերի կառավարման ծրագիրը:

2008թ. Յունիբանկը դարձավ Հայաստանի ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ֆոնդային բորսայի անդամ:

2009թ. Յունիբանկի մասնաճյուղային ցանցը միացվեց տվյալների միասնական բազային: Ներկայումս բանկի բոլոր մասնաճյուղերն աշխատում են online ռեժիմում:

2010թ. հունիսի 3-ին Moody’s միջազգային վարկանշային գործակալությունը Յունիբանկին շնորհեց ֆինանսական կայունության E+ , արտարժույթով և ազգային դրամով ավանդների Ba3 երկարաժամկետ և NP կարճաժամկետ վարկանիշերը: Բոլոր վարկանիշերն ունեցել են «Կայուն կանխատեսումը»:

2011թ. Յունիբանկը Ասիական Զարգացման Բանկի հետ համատեղ մեկնարկեց առևտրի ֆինանսավորման ծրագիր, որի շրջանակներում ձեռներեցներին տրամադրվում են ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ: 2011թ. Unistream միջազգային դրամական փոխանցումների համակարգը իր հաճախորդների համար գործարկեց նոր հաճախորդներիարտոնյալ քարտեր (customer loyalty cards), ինչը բարձրացրեց դրամական փոխանցումների արդյունավետությունը՝ զգալիորեն կրճատելով հաճախորդների սպասարկման ժամանակը և հաճախորդներին հնարավորություն տալով օնլայն ստուգել իրենց փոխանցումների կարգավիճակը

2012թ. Thomson Reuters միջազգային կորպորացիան Յունիբանկին շնորհեց Հայաստանում «Լավագույն դիլինգ բանկ 2012» կոչումը: 2012թ. վերջին Բանկը ավարտին հասցրեց իր սեփական պրոցեսինգային կենտրոնի գործարկման գործընթացը, որը 2013թ. հունվարին հավաստագրվեց Visa Internatiqnal-ի կողմից:

2013թ. Բանկը մասնակցեց ԱՄՆ ՄԶԳ կողմից հիմնված Վարկերի երաշխավորման հիմնադրամի ծրագրի կառավարման համար հայտարարված մրցույթին: Բանկը նաև ստորագրել է համագործակցության պայմանագիր Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Առևտրի և զարգացման սևծովյան բանկի հետ, որի շրջանակներում ՄՖԿ-ն Բանկին տրամադրել է երկու վարկ՝ յուրաքանչյուրը 5 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկ: Նշված վարկերը տրամադրվել էրն Հայաստանում ՓՄՁ-երի վարկավորման համար օգտագործելու նպատակով: ՄՖԿ-ն, Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում բանկային խորհրդատվության իր ծրագրի միջոցով, Յունիբանկին աջակցություն է ցուցաբերում ռիսկերի կառավարման և ՓՄՁ վարկավորման գործընթացների բարելավմանը նպատակաուղղված իր խորհրդատվական ծառայությունների միջոցով: Միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցությունը Բանկին օգնել է ձևավորելու իր ՓՄՁ վարկավորման բիզնեսը, նպաստելու Հայաստանում ՓՄՁ-երի զարգացմանը և, հետևաբար, նոր աշխատատեղերի ստաղծմանը:

2014թ. Յունիբանկը համագործակցություն սկսեց Intel Express դրամական փոխանցումների միջազգային համակարգի հետ: Այն նաև ներդրեց տեղեկատվության անվտանգության ISO 27001:2013 միջազգային ստանդարտը և հիմնեց իր Unibank Prive անհատական բանկային ծառայությունների համակարգը:

Բանկի 2015թ. մարտի 12-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմավորվել է, և ներկայումս Բանկի կազմակերպաիրավական ձևն է՝ բաց բաժնետիրական ընկերություն:

Յունիբանկը, որպես Unistream դրամական փոխանցումների համակարգի անդամ, իրականացնում է նաև դրամական փոխանցումների գործունեություն: Մինչև 2012 թվականը Յունիբանկը Unistream-ի միակ գործակալն էր Հայաստանում, որին բաժին էր ընկնում Հայաստանում ստացված փոխանցումների ավելի քան 50%: Իր շուկայական դիրքի ամրապնդման նպատակով 2012թ.-ից Յունիբանկը սկսեց իր ծառայություններն առաջարկել հայաստանյան այլ բանկերի միջոցով: Բանկը 2014թ. համագործակցություն է սկսել միջազգային դրամական փոխանցումների համակարգ Intel Express-ի հետ:

Կոմունալ վճարումների արագ և արդյունավետ պրոցեսինգի նպատակով Յունիբանկի կոմունալ վճարումներ կատարող հաճախորդներին անվճար տրամադրվում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները պարունակող UNIPAY կոմունալ վճարումների քարտեր:

«Յունիբանկ» ԲԲԸ-ն Գերմանա-հայկական հիմնադրամի և գերմանական KfW բանկի հետ համատեղ սկսել է բիզնես վարկավորման նոր ծրագիր՝ ուղղված ձեռնարկությունների էներգոարդյունավետության բարձրացմանը: Ծրագրի մասնակիցները հնարավորություն ունեն ոչ միայն ստանալ բիզնես վարկեր շահավետ պայմաններով, այլ նաև՝ էապես կրճատել ձեռնարկության էներգոծախսերը:

09.12.2016 դեկտեմբերին Աթենքում կայացավ «Ապագայի բանկ 2016» միջազգային համաժողովը, որում Յունիբանկը ճանաչվեց «Տարվա գործընկեր»: Համաժողովը, որին մասնակցեցին ֆինանսական և բանկային համակարգի 200 ներկայացուցիչներ ԱՊՀ, եվրոպական և ասիական երկրներից, նվիրված էր վճարային համակարգերի, դրամական փոխանցումների և նորամուծությունների ոլորտներին:

13.01.2017 2016թ.-ի արդյունքներով Յունիբանկն անցավ PCI DSS (PCI Data Security Standard) ստանդարտի պահանջներին համապատասխանության սերտիֆիկացիոն աուդիտը և ստացավ PCI DSS 3.2 հավաստագիր: PCI DSS-ը տվյալների անվտանգության լավագույն ստանդարտներից է, որը մշակվել է միջազգային վճարային համակարգերի կողմից՝ նպատակ ունենալով կատարելագործել քարտերի միջոցով իրականացվող գործարքների պաշտպանության տեխնոլոգիան:

2017թ-ի հունվարից «Յունիբանկն» ավտոմատացրեց փոքր բիզնեսին տրամադրվող անգրավ վարկերի հաստատման գործընթացը՝ ներդնելով «Protobase Laboratories» ընկերության մշակած նորագույն CRM համակարգը: CRM համակարգի շահագործումը նպաստեց հաճախորդների սպասարկման որակի և արդյունավետություն բարձրացմանը, էապես արագացրեց բիզնես վարկերի տրամադրման գործընթացը և հնարավորություն տվեց կրճատել բանկի ծախսերը:

Յունիբանկն առաջին բանկն է Հայաստանում, որը հաջողությամբ անցավ SWIFT վճարային համակարգի կողմից մշակված անվտանգության պահանջներին համապատասխանության ատեստավորումը: Customer Security Controls Framework 1.0. ստանդարտը պարունակում է վերահսկողության պարտադիր և առաջարկվող տարրեր՝ ուղղված տեղեկատվական անվտանգության, կիբերանվտանգության բարձրացմանը, ինչպես նաև տեղեկատվական ենթակառուցվածքի պաշտպանմանը: Այդ նպատակով SWIFT-ը մշակել է ատեստավորման գործընթաց, որը բանկերին անհրաժեշտ էր անցնել մինչև 2017թ.-ի ավարտը:

Գլխամասային գրասենյակ

Յունիբանկի գործունեության հիմնական վայրը գլխամասային գրասենյակն է, որտեղ աշխատում են կառավարման, ֆինանսական, հաշվապահական, իրավաբանական, ռիսկերի գնահատման, հաճախորդների սպասարկման, հավաքագրումների, տնտեսական, մարքեթինգի և բիզնեսի զարգացման, մարդկային ռեսուրսների և վարչական կառավարման գործառույթներ իրականացնող աշխատակիցներ:

Ներքին աուդիտի ստորաբաժանում

Յունիբանկը հիմնադրման օրվանից ունեցել է իր սեփական Ներքին աուդիտի ստորաբաժանումը: Ներքին աուդիտը անկախ ստորաբաժանում է: Նրա իրավասությունները ներառում են ստուգումների անցկացում, ռիսկերի գնահատում, Բանկի ղեկավարությանը հաշվետվությունների ներկայացում, համաձայն Բանկի կողմից ընդունված կանոնակարգի:

Ներքին աուդիտը ամենամսյա հիմունքով Բանկի ղեկավարությանը և եռամսյակային հաճախականությամբ Բանկի Խորհրդին ներկայացնում է իր գործունեության և աուդիտի

արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ՝ նշելով բոլոր ոլորտներում բացահայտված ռիսկերը և առաջարկելով դրանց կառավարման արդյունավետ մեխանիզմներ: Տարին մեկ անգամ Ներքին աուդիտը իրականացնում է ներքին հսկողության համակարգի ստուգում:

ՆԱ ստորաբաժանման ղեկավարը հաշվետու է Խորհրդին և ազատ մուտք ունի դեպի Բանկի վերադաս ղեկավարության բոլոր մակարդակները:

Ներքին աուդիտի ստորաբաժանումը պարբերական ստուգումներ է անցկացնում Բանկի մասնաճյուղերում՝ իրականացնելով ռիսկի կառավարում և վերահսկողություն: Արդյունքները ներառվում են հաշվետվության մեջ:

Ներքին աուդիտի ստորաբաժանման կառուցվածքը համապատասխանում է միջազգային ստանդարտներին:

Ներդրումները

ա. Էական ներդրումներ

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը Բանկի կողմից էական ներդրումներ չեն կատարվել:

բ. Ընթացիկ էական ներդրումներ

Ընթացքի մեջ գտնվող էական ներդրումների Բանկի կողմից չեն իրականացվում:

գ. Ապագա էական ներդրումներ

Բանկի կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

4. Բիզնեսի նկարագիրը

Փոքր և միջին բիզնեսի վարկավորումը Յունիբանկի գերակա ռազմավարական ուղղություններից է: Բանկն առաջարկում է բանկային պրոդուկտներ, որոնք մշակվում են Բանկի ղեկավարության կողմից՝ հաշվի առնելով Հայաստանի ՓՄՁ վարկավորման շուկան և հաճախորդների առանձնահատուկ պահանջմունքները: 31.03.2018թ. դրությամբ ՓՄՁ վարկերի մասնաբաժինը բիզնես վարկերի ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 44%:

Վերջին 3-4 տարիների ընթացքում Բանկը հիմնական շեշտը դրել է ՓՄՁ ոլորտի վարկավորման վրա:Քանի որ Յունիբանկը գիտակցված որոշում է կայացրել վարկավորման առաջնությունը տալու ՓՄՁ-երին և ձեռնարկատերերին, ավելի խոշոր կորպորատիվ հաճախորդների վարկավորման ծավալները նվազել են: Սակայն Բանկը մտադիր չէ դադարեցնել խոշոր կորպորատիվ հաճախորդների վարկավորումը, որոնց այժմ էլ դիտում է որպես իր համընդհանուր բիզնեսի կարևոր մաս և շարունակում է իր աշխատանքը այդ հաճախորդների հետ՝ նրանց առաջարկելով բանկային պրոդուկտների լայն տեսականի բոլոր ուղղություններով: Ստորև բերված գծապատկերում ներկայացված են Բանկի բիզնես սեկտորների մասնաբաժինները բիզնես վարկերի պորտֆելում 31.03.2018թ. դրությամբ:

Յունիբանկի կողմից որդեգրված ռազմավարությունն է. ամրապնդել իր՝ որպես մանրածախ բանկի ներկայիս դիրքը իր մասնաճյուղերի ցանցի միջոցով առաջարկելով հատուկ մշակված բանկային ծառայություններ: Բանկի մանրածախ վաճառքը կազմակերպվում է սեփական մասնաճյուղերի միջոցով և վաճառք գործընկեր-ընկերությունների միջոցով:

Ստորև ներկայացված է Յունիբանկի ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի աճը 2010-2017 թվականների ընթացքում.

ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի աճը 2010-2017 (մլն ՀՀ դրամ)

Վարկային հայտերը կարող են հաստատվել գրեթե անմիջապես՝ առանց Բանկ այցելելու անհրաժեշտության: Յունիբանկը զարգացնում է այլ նախագծեր առցանց մշակելու իր կարողությունները, ինչպիսիք են հիփոթեքային վարկերը, ավտովարկերը և ՓՄՁ վարկերը:

Ներկայումս Բանկն իր ծառայությունները վաճառում է ավելի քան 600 վաճառքի կետերում՝ սեփական մասնաճյուղերի և իր գործընկերների վաճառքի գրասենյակների միջոցով:

Գործընկերների միջոցով վաճառվող պրոդուկտները մշակվում են գործընկերների կողմից, ինչպես նաև կազմակերպվել են գովազդային արշավներ, որոնք որոշ դեպքերում գործընկերոջ ծախսերի հաշվին են իրականացվում:

Բանկը տեղադրել է պրոմո-կետեր իր գործընկերների տարածքներում: Այդ պրոմո-կետերում Բանկի աշխատակիցները առաջարկում են Բանկի ծառայությունները պոտենցիալ հաճախորդներին:

Մանր սպառողական վարկեր (չապահովված վարկեր)

31.03.2018թ. դրությամբ Բանկի գործող մանր սպառողական վարկերի պորտֆելը կազմում է 36.9մլրդ ՀՀ դրամ:

Բանկի հաճախորդների համար մանր սպառողական վարկերի առավելություններն են.

- վարկային միջոցների արագ տրամադրում. դրանք չապահովված վարկեր են, և հաճախորդները կարող են դրանք օգտագործել իրենց հայեցողությամբ.
- փոխառուի նկատմամբ նվազագույն պահանջներ՝ անձնագիր և սոցիալական քարտ.
- Մանրածախ վարկավորման շուկայում մրցունակ պայմաններ.
- Բանկը չի գանձում մեկանգամյա մինչնորդավճարներ կամ վաղաժամկետ մարման տույժեր, թույլատրվում է վարկի վաղաժամկետ մարում:

Ապահովված սպառողական վարկեր

Ապահովված սպառողական վարկերի տրամադրումը սկսվել է 2007թ.: Ֆիզիկական անձանց վարկեր են տրամադրվում անշարժ գույքի գրավի դիմաց:

Հիփոթեքային վարկավորում

Յունիբանկը հիփոթեքային վարկերի տրամադրումն սկսեց 2005 թվականից: 2005 թվականին Յունիբանկը դարձավ հիփոթեքային շուկայի առաջատարներից մեկը[2], և ներկայումս հանդիսանում է Հայաստանի հիփոթեքային վարկավորում իրականացնող լավագույն բանկերից մեկը:

31.03.18թ. դրությամբ Յունիբանկը ուներ բնակելի անշարժ գույքի ձեռք բերման և վերանորոգման համար հիփոթեքային վարկ ստացած 1,067 հաճախորդ և ոչ բնակելի անշարժ գույքի ձեռք բերման համար հիփոթեքային վարկ ստացած 10 հաճախորդ՝ ընդհանուր առմամբ 10,965 մլն ՀՀ դրամի չափով տրամադրված վարկեր:

Ստորև ներկայացված է Յունիբանկի Հիփոթեքային վարկերի աճը 2010-2017 թվականների ընթացքում.

[2] Արմինֆո ռեյտինգային մարքետինգային գործակալության կողմից իրականացված ՀՀ բանկերի ռենքինգ, 2006թ

Հիփոթեքային վարկերի ֆինանսավորում

Իր հիփոթեքային վարկային պորտֆելի ֆինանսավորման համար Յունիբանկը համագործակցում է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՓԲԸ վարկային կազմակերպության և «Բնակարան երիտասարդներին» ՓԲԸ վարկային կազմակերպության հետ:

Ազգային հիփոթեքային ընկերությունը Բանկին տրամադրում է վարկային գծեր՝ նրան հնարավորություն տալով մրցունակ տոկոսադրույքներով հիփոթեքային վարկեր տրամադրել իր հաճախորդներին:

Ի լրումն վերը նշված վարկային միջոցների, Յունիբանկը իր հիփոթեքային վարկերի պորտֆելը ֆինանսավորում է նաև կապիտալի և ավանդների հաշվին:

Յունիբանկն առաջարկում է նաև հիփոթեքային վարկեր առաջնային և երկրորդային շուկայում բնակելի կամ բիզնես անշարժ գույքի ձեռքբերման համար՝ առանց կանխավճարի, փոխարենը վարկառուն գրավադրում է լրացուցիչ անշարժ գույք:

Հաշվի առնելով առանց կանխավճարի հիփոթեքային վարկերի հանդեպ բնակչության մեծ պահանջարկը, Յունիբանկը հայտարարում է նաև հատուկ ակցիա, որի շրջանակներում կարելի է ձեռքբերել բնակարաններ ք. Երևան, Լվովյան 14 հասցեում գտնվող նորակառույց բազմաբնակարանային շենքում արտոնյալ պայմաններով:

Վարկային քարտեր

Յունիբանկը իր վարկային քարտատեր հաճախորդներին ներգրավում է գովազդների և իր գործընկերների միջոցով: Պոտենցիալ հաճախորդները www.unibank.am կայքէջում լրացնում են պարզ հայտի ձև և նախնական որոշման մասին տեղեկացվում են տեքստային հաղորդագրության միջոցով, ինչին հետևում է ավտոմատացված անդերրայթինգի գործընթացը:

Յունիբանկում անդերրայթինգի գործընթացը ամբողջությամբ ավտոմատացված է: Բանկի ռիսկերի կառավարման գործընթացը ներառում է վարկային պատմության ստուգումներ ԱՔՌԱ-ում, իսկ սքորինգի մոդելը մշակվել է Protobase Laboratories ընկերության հետ միասին:

Յունիբանկը իր վարկային քարտեր ունեցող հաճախորդներին հնարավորություն է տալիս իրենց քարտերի վրա պահել դրական մնացորդներ, որոնց դիմաց նրանք կարող են ստանալ տոկոսներ՝ մինչև 3%՝ ՀՀ դրամով մնացորդների դիմաց, մինչև 3%՝ ԱՄՆ դոլարով մնացորդների դիմաց և մինչև 3%՝ եվրոյով մնացորդների դիմաց:

Ոսկու գրավադրմամբ վարկեր

Սկսած 2015 թվականի օգոստոս ամսից Բանկը սկսեց ոսկու գրավադրմամբ վարկերի տրամադրումը, որը իրականացվում է Յունիբանկի 19 մասնաճյուղերում:

Հաճախորդների ավանդներ

Յունիբանկը ավանդներ է ներգրավում ֆիզիկական և իրավաբանական անձանցից իր լայն մասնաճյուղային ցանցի միջոցով, ինչպես նաև համացանցում և ավանդական տեղեկատվական միջոցներում առաջխաղացումների և գովազդների միջոցով: Յունիբանկը շուկայի առաջատարներից մեկն է թե՛ կարճաժամկետ, և թե՛ երկարաժամկետ ավանդների ներգրավման ոլորտում. ներկայումս Բանկի ժամկետային ավանդները կազմում են 114 միլիարդ դրամ, իսկ ցպահանջ ավանդները՝ 22 միլիարդ դրամ:

Յունիբանկի ավանդային պորտֆելը 2010 - 2017թթ. ժամանակաշրջանում.

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Unistream դրամական փոխանցումների համակարգը

Unistream-ը դրամական փոխանցումների համակարգ է, որը փոխանցումներ է իրականացնում ամբողջ աշխարհով՝ առանց հաճախորդի կողմից բանկային հաշիվ բացելու անհրաժեշտության: Յունիբանկը Unistream համակարգի գործակալ է, հետևաբար կարող է կանխիկ դրամի փոխանցման ու ստացման ծառայություններն առաջարկել իր մասնաճյուղերում: Յունիբանկն իր հաճախորդներին առաջարկում է նաև ստանալ Unistream դրամական փոխանցումը քարտով՝ առանց մասնաճյուղ այցելելու, հեռախոսազանգի միջոցով: Յունիբանկը դրամական փոխանցումներ է կատարում ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով: Փոխանցված գումարը

վճարվում է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով: Այլ երկրներում փոխանցված գումարը վճարվում է տվյալ երկրի օրենսդրությամբ նախատեսված արժույթով:

2017թ. Յունիբանկի հաճախորդները Unistream համակարգով իրականացրել են 51 մլրդ դրամի (105.4 մլն ԱՄՆ դոլար) չափով փոխանցումներ՝ Յունիբանկին ապահովելով 125 մլն դրամի եկամուտ:

Իր շուկայական դիրքի ամրապնդման նպատակով Unistream-ը 2012 թվականից սկսեց իր ծառայություններն առաջարկել նաև հայաստանյան այլ բանկերի միջոցով:

Unibank Privé

Յունիբանկը ընդլայնում է իր հաճախորդների հնարավորությունները և մասնավոր բանկինգի ոլորտում առաջարկում է անհատական սպասարկում՝ Unibank Privé: Նշված համակագի շրջանակներում հաճախորդների սպասարկումը իրականացվում է բարձրագույն մակարդակով՝ Երևանի կենտրոնում գտնվող ժամանակակից, հարմարավետ գրասենյակում:

Համապատասխան եկամտի մակարդակ և կարգավիճակ ունեցող հաճախորդներին Բանկն առաջարկում է լիարժեք ֆինանսական լուծումներ, որոնք ներառում են կապիտալի կառավարման համակարգված մոտեցում, արդյունավետ ֆինանսական պլանավորում և ներդրումային ռազմավարության մշակում: Սպասարկման բոլոր փուլերում հաճախորդի հետ աշխատում է անհատական ֆինանսական մենեջերը, որը, լինելով փորձառու մասնագետ, պատրաստ է աջակցություն ցուցաբերել ցանկացած իրավիճակում: Unibank Privé-ի հաճախորդը կարող է ցանկացած ժամանակ դիմել և հանդիպում նշանակել անհատական մենեջերի հետ: Բոլոր գործարքների անվտանգությունն ու գաղտնիությունը երաշխավորված են:

Բանկային ծառայությունների համալիր փաթեթից բացի, Unibank Privé-ի հաճախորդները ստանում են նաև մի շարք լրացուցիչ հնարավորություններ և ծառայություններ: Priority Pass քարտը տալիս է մուտքի իրավունք 120 երկրների օդանավակայանների 700 VIP-գոտիներ, հաճախորդին հնարավորություն ընձեռելով հարմարավետ սպասելու իր թռիչքին: Շահավետ ռոումինգի համար Բանկը նաև անվճար տրամադրվում է ճամփորդական SIM-քարտ՝ ճանապարհորդության ընթացքում արագ և որակյալ հաղորդակցության ապահովման համար:

Արժեթղթերի դիլինգ

Արժեթղթերի մասով Բանկն իր միջոցները հիմնականում տեղաբաշխում է ՀՀ պետական (Գանձապետական) պարտատոմսերում և ՀՀ եվրոբոնդերում: Այս գործիքները հնարավորություն են տալիս Բանկին ստանալ կայուն եկամտաբերություն՝ ցանկացած պահին ապահովելով անհրաժեշտ դրամական միջոցներ: Բանկի համար նախընտրելի է պետական պարտատոմսերի պորտֆելի 90-95%-ը ձևավորել/պահպանել պետական երկարաժամկետ պարտատոմսերով: Ավելցուկային իրացվելիության դեպքում Բանկը նախատեսում է ձեռք բերել պետական կարճաժամկետ պարտատոմսեր: Կարճաժամկետ պարտատոմսերում ներդրումներն իրականացվում են Դիլերի գործառնությունների կատարման պայմանագրից բխող պարտականությունների համաձայն, ինչպես նաև կարճաժամկետ ավելցուկային միջոցների առավել եկամտաբեր տեղաբաշխելու դեպքում: Երկարաժամկետ պարտատոմսերը նախատեսվում

է հետագայում վաճառել եկամտաբեր տոկոսադրույքի առկայության դեպքում:

Ելնելով վերոհիշյալ առավելություններից՝ Բանկը մտադիր է իր ներդրումները ՀՀ պետական պարտատոմսերում իրականացնել ակտիվների 7-7.5 %-ի չափով:

Բանկը, ելնելով շուկայում ստեղծվող որոշակի իրավիճակներից, վերլուծելով ՀՀ ԿԲ և Ֆինանսների նախարարության քաղաքականությունը՝ կապված դրամի արժևորման կամ արժեզրկման հետ, հեջավորման կամ առևտրային նպատակներով ածանցյալ գործառնություններ է իրականացնում հնարավորինս քիչ ռիսկային դաշտերում, ուսումնասիրելով գործընկերների ֆինանսական վիճակը՝ Բանկի համապատասխան ներքին կանոնակարգերով սահմանված չափանիշներին համապատասխան:

Վերջինիս կիրառման դեպքում Բանկը կընդունի ածանցյալ գործառնությունների իրականացման ռազմավարություն:

Սվոփ գործառնությունների իրականացումը պայմանավորված կլինի Բանկի դրամական միջոցների կառավարմամբ, ինչպես նաև եկամտի ստացման ակնկալիքով:

Տեղյակ լինելով մրցակից բանկերի կողմից առաջարկվող որոշ ծառայությունների գծով համեմատաբար ավելի շահավետ պայմանների առկայությանը՝ Բանկը փորձում է տարբեր ոլորտներում իր առաջարկը համադրել այլ ծառայությունների նպաստավոր պայմանների հետ և, դրանք համալիր կերպով ներկայացնելով հաճախորդներին, կողմնորոշել վերջիններիս, նպաստել նրանց ընտրության կայացմանը:

Բանկի հիմնական միջոցներ

Յունիբանկին սեփականության իրավունքով պատկանում է անշարժ գույք, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Կիևյան 10, 8/63, որի հաշվեկշռային արժեքը կազմում է մոտ 10.71% Բանկի հիմնական միջոցների ընդհանուր հաշվեկշռային արժեքից:

5. Զարգացման վերջին միտումները

Ակնկալվում է, որ գալիք տարիների ընթացքում ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը կբնութագրվի տնտեսական աճով: ՀՆԱ-ի աճին նպաստող տնտեսության հիմնական ճյուղերը կլինեն գյուղատնտեսությունը, հանքարդյունաբերությունը, սննդի վերամշակումը, տեղեկատվական ոլորտը: Հիմք ընդունելով վերը նշված, ակնկալվում է Յունիբանկի աճի տեմպը կլինի դինամիկ, ակտիվների որակը կբարելավվեն, տոկոսադրույքները հիմնականում կայուն կմնան, որոշակի նվազման միտումով:

Վարկավորման ոլորտում Բանկի ցուցանիշները ձևավորվել են ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղությունների, վարկային շուկայում ձևավորված փորձի ու Բանկի

ներդրումային քաղաքականության համադրության ներքո: Վարկավորման սեգմենտի ընտրության հարցում Բանկը ղեկավարվել է հետևյալ չափանիշներով՝ իրավաբանական անձինք, որոնք ունեն կայացած բիզնես, կայուն և կանխատեսելի ամենամսյա դրամական մուտքեր, ֆիզիկական անձինք, որոնք ունեն եկամուտների միջին և բարձր մակարդակ:

Մանրածախ բիզնեսի գծով պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է 8,839 մլն դրամով կամ 15%–ով՝ պայմանավորված առանց գրավի սպառողական և քարտային վարկերի ակտիվ տրամադրմամբ: Հիփոթեքային պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է 763 մլն դրամով կամ 7 %–ով, առանց գրավի սպառողական վարկերի ծավալն աճել է 5,025 մլն դրամով կամ 16 %–ով, պլանը կատարվել է 96%-ով, այդ թվում՝ կենցաղային ապրանքների վարկավորման պորտֆելն աճել է 3,140 մլն դրամով կամ 20%–ով: Գրավով ապահովված սպառողական վարկերը աճել են 1,184 մլն դրամով կամ 12%-ով, ավտովարկավորման պորտֆելը նվազել է 209 մլն դրամով կամ 41%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավտովարկերի տրամադրումը վերականգնվել է տարվա երկրորդ կեսին: 71%-ով աճել է քարտային վարկերի ծավալը՝ կազմելով 5,223 մլն դրամ: Ոսկու գրավով ապահովված սպառողական վարկերը նվազել են 89 մլն դրամով կամ 9%-ով:

2017թ. ֆիզիկական անձանց ժամկետային ավանդային պորտֆելը նվազել է 683 մլն դրամով, ընդ որում՝ դոլարային ավանդային պորտֆելը նվազել է 3,373 մլն դրամով, ինչը կարելի է բացատրել պարտատոմսերի նոր թողարկմամբ: Ֆիզիկական անձանց ավանդային պորտֆելը տարեվերջին կազմել է՝ 90.8 մլրդ դրամ, իրավաբանական անձանց պորտֆելը՝ 27.5 մլրդ:

Ստորև բերված է եկամուտ-ծախսերի պլանային ցուցանիշների կատարումը՝

	31.12.17թ. համար կանխատեսված (հազ.դրամ)	31.12.17թ. փաստացի (հազ.դրամ)	Շեղում ծրագրավորվածից (հազ.դրամ)	Կատարման%
Տոկոսային եկամուտ	19,463,266	18,394,111	-1,069,155	95%
Տոկոսային ծախս	12,862,044	12,138,692	-723,352	94%
Զուտ տոկոսային եկամուտներ	**6,601,222**	**6,255,419**	**-345,803**	**95%**
Ոչ տոկոսային եկամուտներ	6,700,766	7,052,912	352,146	105%
Ոչ տոկոսային ծախսեր	6,689,037	6,676,481	-12,556	100%
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ	**11,728**	**376,431**	**364,703**	**3210%**
Զուտ մասհանումներ	5,740,764	6,195,531	454,767	108%
Զուտ շահույթ	**581,549**	**279,343**	**-302,206**	**48%**

Հաշվետու տարում բանկի շահույթը շահութահարկից հետո կազմել է 279 մլն դրամ:

2016թ. տոկոսային եկամուտները կազմել են 18,381 մլն դրամ, 2017 թ-ին՝ 18,394 մլն դրամ, գրանցվել է տոկոսային եկամուտների աճ 13.6 մլն դրամով: Անկախ այն հանգամանքից, որ վարկային պորտֆելը տարվա սկզբից աճել է 14.5 մլրդ դրամով, տոկոսային եկամուտների

աննկատ աճը պայմանավորված է վարկային գործիքների տոկոսադրույքների իջեցմամբ, և որոշակի զրո տոկոսով վարկատեսակների ծավալների ավելացմամբ, որոնց գծով եկամուտները ձևավորվում են կոմիսիոն վճարներից:

Ոչ տոկոսային եկամուտները 2016թ. կազմել են 5,373 մլն դրամ, իսկ 2017թ-ին 7,053 մլն դրամ, գրանցվել է աճ 31%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է կոմիսիոն եկամուտների աճով՝ 1,141 մլն դրամով կամ 28%-ով, 'Յունիստրիմ' դրամական փոխանցումներից ստացված եկամուտների գծով գրանցվել է նվազում 20 մլն դրամով կամ 14%-ով, ինչը պայմանավորված է 'Յունիստրիմ' դրամական փոխանցումների ծավալի 13%-ով նվազմամբ: Դրամական փոխանցումների սպասարկման ոլորտում շարունակվում է նկատվել ծավալների չնչին փոփոխություն, ինչը պայմանավորված է բանկի միջոցով ստացվող ֆիզիկական անձանց միջազգային ոչ առևտրային փոխանցումների համանման ծավալներով: Այս ոլորտում զուտ ներհոսքի ծավալները հաշվետու տարում ավելացել են 15 մլն դոլարով՝ նախորդ տարվա 716 մլն դոլարից հասնելով 731 մլն դոլարի: Արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտները 2016թ. կազմել են 594.5 մլն դրամ, իսկ 2017թ.՝ 601.5 մլն դրամ (աճը կազմել է 7 մլն ՀՀ դրամ), որը պայմանավորված է դրամական փոխանցումների ծավալների փոքրաթիվ աճով:

Ոչ տոկոսային ծախսերը կատարվել են պլանավորվածի 99.8%-ի չափով:

2018-2020թթ. ծրագրվող ժամանակաշրջանում Բանկը նախատեսում է իր գործունեությունը հիմնականում ուղղել.

- մանրածախ բիզնեսի, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի վարկավորման ծավալների ավելացմանը,
- վարկային պորտֆելի նկատմամբ վերահսկողության բարձրացմանը՝ անընդհատ մոնիտորինգների իրականացման (գրավների վիճակի պարբերաբար ուսումնասիրության և հաճախորդների հետ հանդիպումների) միջոցով,
- ավանդային պորտֆելի պահպանմանը,
- պլաստիկ քարտերով գործառնությունների ցանկի ընդլայնմանը,
- փոխանցումների ավելացմանը,
- արտարժութային գործառնությունների ծավալների ավելացմանը,
- բնակչությանը տրամադրվող ծառայությունների ցանկի մեծացմանը և որակի բարձրացմանը,
- սպասարկման որակի բարձրացմանը,
- կոմիսիոն եկամուտների ավելացմանը,
- միջազգային վարկավորման ծրագրերում ներգրավման ծավալների ավելացմանը,
- Բանկում իրականացվող ներքին ընթացակարգերը իրավական ակտերին համապատասխանության ապահովման և վերահսկման ստորաբաժանման լիարժեք և համակարգված աշխատանքների ապահովմանը:

Պլանավորման առաջին տարում Բանկի հիմնական խնդիրները հետևյալն են.

Ակտիվների և պարտավորությունների ծավալը հասցնել համապատասխանաբար 193 և 160 մլրդ դրամի, վարկային պորտֆելի աճ 13.4 մլրդ դրամով (առաջնահերթ խնդիր է համարվում եկամտաբեր ակտիվների կշռի բարձրացումը ընդհանուր ակտիվներում), որից բիզնեսի պորտֆելի ծավալի աճ 7 մլրդ դրամով կամ 11.7 %-ով, մանրածախ բիզնեսի պորտֆելի ծավալի աճ՝ 6.4 մլրդ դրամով կամ 9.6 %-ով, հաշվեկշռային չբաշխված շահույթը տարեվերջին կկազմի 931 մլն դրամ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է իրականացնել հետևյալը՝

- թողարկել և տեղաբաշխել պարտատոմսեր արտարժույթով և ՀՀ դրամով
- ընդլայնել մասնակցությունը միջազգային վարկավորման ծրագրերում
- բարձրացնել սպասարկման որակը,
- ապահովել կորպորատիվ կառավարման սկզբունքները,
- կատարելագործել ներքին հսկողության համակարգերը, ներքին կանոնակար•ումը:
- պլանավորվող ժամանակաշրջանը Բանկի համոզմամբ նշանավորվելու է Բանկային համակարգի որոշակի փոփոխություններով, որն իր ազդեցությունը կունենա մատուցվող ծառայությունների տեսակային ընդլայնման և որակային բարելավման վրա:

6. Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Յունիբանկը կարևորում է արդյունավետ և թափանցիկ կորպորատիվ կառավարման համակարգի առկայությունը՝ ուղղված լավագույն պրակտիկաների կիրառմանը: Բանկի կորպորատիվ կառավարման քաղաքականությունը նախատեսված է Խորհրդի անկախության, նրա կողմից կառավարման գործունեության արդյունավետ վերահսկման և բաժնետերերի հետ լավ հարաբերությունների ապահովման համար:

Յունիբանկի գլխավոր նպատակը կորպորատիվ կառավարման, բանկային տեխնոլոգիաների կիրառման և սպասարկման միջազգային բարձր ստանդարտների հետ համապատասխանության ապահովումն է: Կորպորատիվ կառավարման սկզբունքների պատշաճ կիրառման նպատակով Բանկը մշակել և ներդրել է ավելի քան 143 ընթացակարգեր, ինչպես նաև դրանց կիրառումն ապահովող նորմեր և դիրեկտիվներ: Բանկերում Կորպորատիվ կառավարումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես «Բանկերի և բանկային գործունեության մասինե ՀՀ օրենքով և «Բաժնետիրական ընկերությունների մասինե ՀՀ օրենքով, ինչպես նաև Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով, որոնք կողմնորոշված են դեպի թափանցիկ հաշվետվողականության ապահովումը կառավարման բոլոր մակարդակներում:

Խորհրդի կողմից ընդունվել են Կորպորատիվ կառավարման ուղենիշներ: Ուղենիշների դրույթների հետ համապատասխանությունը սերտորեն վերահսկվում է Ներքին աուդիտի ստորաբաժանման, ինչպես նաև Խորհիրրդին և Վարչությանը կից գործող հանձնաժողովների կողմից՝ նրանց համապատասխան իրավասությունների շրջանակներում:

Առողջ թիմային ոգին նույնպես մեր Բանկի կորպորատիվ կառավարման հաջողության կարևոր գրավականն է: Յունիբանկը ձգտում է Բանկում ձևավորել ու զարգացնել կորպորատիվ մշակույթ և թիմային ոգի՝ աշխատակազմի կանոնավոր վերապատրաստման, կորպորատիվ միջոցառումների

կազմակերպման և Բանկի ընհանուր նպատակների ու առաքելության պարզաբանումների միջոցով:

Խորհրդի և Վարչության աշխատանքներին օժանդակում են Հանձնաժողովները, որոնք առաջարկություններ են ներկայացնում իրենց իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ, մասնավորապես՝ կապված ներքին հսկողության, ռիսկերի, ֆինանսական հաշվետվությունների, վարձատրության և այլ հարցերի հետ: Դա թույլ է տալիս, որ ղեկավարությունը իր ժամանակի ավելի մեծ մասնաբաժինը նվիրի ռազմավարական, հեռանկարային օրակարգային խնդիրներին: Խորհրդին կից հանձնաժողովների կազմի մեջ մտնում են Խորհրդի անդամները, իսկ Վարչությանը կից հանձնաժողովների կազմի մեջ՝ Վարչության անդամները և Բանկի այլ համապատասխան ղեկավարները: Խորհրդին կից հանձնաժողովները խորհրդակցական մարմիններ են:

Խորհրդին կից գործող հանձնաժողովներն են՝ Աուդիտի և ռիսկերի հանձնաժողովը, Ներդրումային հանձնաժողովը և Պարգևատրումների հանձնաժողովը:

Վարչությանը կից գործող հանձնաժողովներն են՝ Սակագնային հանձնաժողովը, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովը, Մասնաճյուղային ցանցի կառավարման հանձնաժողովը, Բիզնեսի գնահատման հանձնաժողովը, Անվտանգության հանձնաժողովը, Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողովը, Անձնակազմի կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտե:

Խորհրդին կից գործող հանձնաժողովներ

Աուդիտի և ռիսկերի հանձնաժողով՝ հետևյալ կազմով:

Նախագահ	Խորհրդի անդամ
անդամ	Խորհրդի նախագահ
անդամ	Խորհրդի անդամ
դիտորդ	Ներքին աուդիտի տնօրեն
քարտուղար	Աշխատակազմի ղեկավար

Հանձնաժողովի խնդիրն է աջակցել Բանկի Խորհրդին կատարելու իրեն վերապահված կորպորատիվ կառավարման և վերահսկման գործառույթը, որը կապված է արտաքին և ներքին աուդիտի, ներքին վերահսկողության կառուցվածքի և ռիսկերի կառավարման համակարգերի, օրենսդրության և ներքին իրավական ակտերի պահանջների պահպանման հետ: Նիստերն անցկացվում են առնվազն տարին երկու անգամ, որոնց ժամանակ քննարկվում են ներքին և արտաքին աուդիտի արդյունքներով բացահայտված խախտումների վերացմանն ուղղված միջոցառումներ, ուսումնասիրվում են վերաձևակերպված վարկերը և այլն:

Ներդրումային հանձնաժողով

Հանձնաժողովը գործում է Խորհրդին կից՝ հետևյալ կազմով.

Նախագահ	Խորհրդի անդամ
անդամ	Խորհրդի նախագահ
անդամ	Խորհրդի անդամ
քարտուղար	Բանկի աշխատակազմի ղեկավար

Ներդրումային հանձնաժողովն իրականացնում է Բանկի պահուստների, ներդրումների կառավարման վերաբերյալ որոշումների ընդունման և դրանց կատարման վերահսկողության գործառույթներ, ինչպես նաև ներդրումային գործունեության ընթացիկ կոորդինացմանն առնչվող խնդիրների և ֆինանսական վերլուծությունների քննարկում:

Պարգևատրումների հանձնաժողով

Հանձնաժողովը գործում է Խորհրդին կից՝ հետևյալ կազմով.

Նախագահ	Խորհրդի անդամ
անդամ	Խորհրդի նախագահ
անդամ	Խորհրդի անդամ
դիտորդ	Ներքին աուդիտի տնօրեն
քարտուղար	Աշխատակազմի ղեկավար

Հանձնաժողովի գործառույթներն են.

- Բանկի կադրային քաղաքականության կատարելագործում.
- Կադրային քաղաքականության վերաբերյալ Խորհրդին առաջարկությունների ներկայացում.
- Բանկի ղեկավար անձնակազմի մոտիվացիոն և պարգևատրման համակարգի մշակում

Վարչությանը կից գործող հանձնաժողովներ

Վարչությանը կից գործող հանձնաժողովներն են՝ Սակագների, Ակտիվների և Պարտավորությունների հանձնաժողովը, Մասնաճյուղային ցանցի կառավարման հանձնաժողովը, Բիզնեսի գնահատման հանձնաժողովը, Անվտանգության հանձնաժողովը, Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողովը, Անձնակազմի գնահատման հանձնաժողովը:

Ակտիվների և Պասիվների կառավարման և Սակագնային հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

Հանձնաժողովի գործունեության նպատակն է՝

- ակտիվների և պասիվների կառավարումը, դրանց վերլուծությունը և կառուցվածքի արդյունավետության մոնիտորինգը,
- Բանկի իրացվելիության պահանջների բավարարման աղբյուրներն ու օգտագործման ուղիները,
- Բանկի պարտավորությունների և ակտիվների ցանկալի կամ նպատակային կառուցվածքը և ժամկետայնության սահմանները,
- իրացվելի միջոցների առաջնային աղբյուրների սպառման դեպքում այլընտրանքային աղբյուրների ընտրության չափանիշները, դրանց հայթայթման ուղիները,
- ակտիվների և պասիվների կառավարման հետ կապված ներքին լիմիտների և նորմատիվների պահպանման նկատմամբ հսկողությունը,
- տոկոսային մարժայի նպատակային մակարդակը.
- մատուցվող ծառայությունների սակագների տեսակների, սակագների և դրույքաչափերի սահմանման և վերանայման սկզբունքների սահմանումը, դրանք գործողության մեջ դնելու վերաբերյալ Վարչությանը և Խորհրդին առաջարկությունների ներկայացումը: Սակագների վերաբերյալ առաջարկություններ կատարելիս Հանձնաժողովը պետք է հաշվի առնի ծառայությունների ինքնարժեքը, սակագները պետք է ծածկեն ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերը և ապահովեն որոշակի եկամուտ: Բանկի Խորհրդի կողմից հաստատված սակագներից շեղումները անհատական հաճախորդների համար ենթակա են քննարկման Հանձնաժողովում, և յուրաքանչյուր հաճախորդի համար, համաձայն Հանձնաժողովի որոշման, կնքվում են համապատասխան համաձայնագրեր:

Բիզնեսի գնահատման հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

Հանձնաժողովի գործունեության նպատակն է՝

- Բանկի պլանային ցուցանիշների և բյուջեի կատարողականների քննարկում,
- Բիզնեսի զարգացման և բիզնես գործընթացի բարելավման նպատակով առաջարկությունների և հանձնարարությունների մշակում,
- Բանկի մասնաճյուղերի արդյունավետ աշխատանքին աջակցում՝ ուղղված դրական ֆինանսական արդյունքների ստացմանը՝ զուգորդելով զարգացման դինամիկայի և հաճախորդների սպասարկման որակի բարձրացմամբ:
- Բանկի մասնաճյուղերի ֆինանսատնտեսական գործունեության պարբերական վերլուծության իրականացում:
- Մասնաճյուղային ցանցի ֆինանսատնտեսական պլանավորման գործընթացի աջակցում, պլանային ցուցանիշների կատարման հսկում, ֆինանսական արդյունքների պարբերական ամփոփում:

- Հանձնաժողովի հանձնարարականների կատարողականների հսկողության իրականացում:

ՏՏ և տեղեկատվական անվտանգության հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

Հանձնաժողովի գործունեության նպատակն է՝

- ՏԱԿՀ արդյունավետության բարձրացումը,
- ՏԱԿՀ-ին առնչվող ցանկացած փոփոխության քննարկումը,
- Բանկի անվտանգության ապահովման ոլորտում իրականացվող գործունեության կոորդինացումը, անվտանգության ոլորտին վերաբերվող իրավական ակտերի ընդունման գործընթացն առավել արդյունավետ դարձնելը,
- անվտանգության, ներքին ռեժիմի պահպանության այլ հարցեր,
- Բանկի ՏՏ և տեղեկատվական անվտանգության ապահովման գործընթացի կազմակերպումը,
- ՏՏ և տեղեկատվական անվտանգության քաղաքականության վերլուծություն և հաստատում, ընդհանուր պարտականությունների բաշխում,
- ՏՏ և տեղեկատվական ռեսուրսների հիմնական ռիսկերի քննարկում,
- ՏՏ և տեղեկատվական անվտանգության ապահովմանն ուղղված հիմնական մոտեցումների հաստատում:
- ՏՏ և տեղեկատվական անվտանգության ոլորտներին առնչվող հարցերի քննարկում և որոշումների ընդունում,
- ՏՏ և տեղեկատվական անվտանգության ոլորտների խնդիրների միջոցառումների ծրագրերի հաստատում, ՏՏ նախագծերի կատարման ժամանակացույցերի սահմանված ժամկետներում կատարում:

Գույքագրման, գնումների և օտարումների հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

Հանձնաժողովի քննարկմանը կարող են ներկայացվել հետևյալ հարցերի վերաբերյալ առաջարկություններ.

- Հաստատված ծախսերի նախահաշվի փոփոխություններ՝ ամսեկան, եռամսյակային, կիսամյակային պլանավորման փոփոխություններ,
- Նախատեսված ծախսային հոդվածների փոփոխություններ,
- Նախատեսված ծախսային հոդվածներում գումարների փոփոխություններ,
- Ծրագրերի փոփոխություն՝ այդ թվում չնախատեսված ծրագրերի ներառում,
- սույն կարգով չնախատեսված այլ հարցեր:

Անձնակազմի գնահատման հանձնաժողովի գործունեությունը/գործառույթները

- Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների և աշխատակիցների կողմից կատարվող աշխատանքների ընթացիկ գնահատում՝ համաձայն կատարված և խորհրդի կողմից հաստատված պլանային ցուցանիշների, ինչպես նաև Բանկի Խորհրդի կողմից հաստատված խրախուսման համակարգերի,
- Բանկի աշխատակիցների գիտելիքների և ստորաբաժանումների հետ համագործակցության արդյունավետության գնահատում,
- աշխատանքային վեճերի և կոնֆլիկտների ուսումնասիրություն և լուծում,
- պաշտոնական հետաքննությունների արդյունքների, բողոքների, բացատրությունների, Հանձնաժողովի իրավասության շրջանակներում այլ հարցերի և դեպքերի ուսումնասիրում,
- Բանկի աշխատակիցներին պատասխանատվության երթարկելու վերաբերյալ հարցերի քննարկում և որոշումների ընդունում,
- Բանկի աշխատակիցներին խրախուսելու վերաբերյալ հարցերի քննարկում և որոշումների ընդունում,
- Աշխատողի կողմից զբաղեցրած պաշտոնին համապատասխանության գնահատում,
- Անձնակազմի գնահատման գործող կարգի խախտումներ արձանագրելու դեպքում՝ Բանկի Վարչությանը տեղեկացում,
- հանձնաժողովի հանձնարարականների կատարողականների նկատմամբ հսկողության իրականացում:

Վարկային կոմիտեի գործունեությունը/գործառույթները

- Բանկի վարկային քաղաքականության իրականացում և զարգացում.
- Բանկային ռիսկերի կառավարում.
- Իր իրավասության շրջանակներում Բանկի վարկավորման ընթացակարգերի արդյունավետ ու արագ կազմակերպում և կիրառում:

Պահուստների կառավարման հանձնաժողով

Հաձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

- ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի <<Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին հավանություն տալու մասին>> որոշման համաձայն հսկվող դասակարգված վարկերի պայմանների վերանայումը և ստանդարտ դասի բերելը,
- ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի <<Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին հավանություն տալու մասին>> որոշման համաձայն ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված վարկերի առողջացման նպատակով դրանց պայմանների վերանայումը և ստանդարտ դասի բերելը:

Կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները.

Կառավարման մարմնի անդամի անուն ազգանունը	Բնակության վայրը	Զբաղեցրած պաշտոնը	Բանկից դուրս կառավարման անդամի ծավալած գործունեությունը	Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում ո՞ր ընկերություններում կամ կազմակերպություններում եւ ինչպիսի՞ ղեկավար պաշտոններ է զբաղեցրել թողարկողի տվյալ կառավարման մարմնի անդամը:
Գագիկ Զաքարյան	ՌԴ, ք. Մոսկվա, Նարոդնոգո Օպոլչենիյա փող., տուն թիվ 38, կորպուս 1, բն. 40	«Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի նախագահ	2006թ-ից առ այսօր “Յունիստրիմ” ԲԲԸ Տնօրենների խորհրդի նախագահ, Ռուսաստանի բանկերի միության խորհրդի անդամ, «Национальный Банковский Журнал» ամսագրի դիտող խորհրդի անդամ, ՌԴ Ռեսո» ԱՓԲԸ Խորհրդի նախագահ	2004թ-ից մինչև օգոստոս 2015թ -- “Յունիաստրում Բանկ” ԱԲ նախագահ, ՌԴ
Գեորգի Պիսկով	ՌԴ, 119146 ք. Մոսկվա, Ֆրունզենսկայա Նաբերեժնայա, տուն 36, բն. 425	«Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ	2006թ-ից առ այսօր “Յունիստրիմ” ԲԲԸ Տնօրենների խորհրդի անդամ, Պրոտոբեյզ Լաբորատորիզ ՍՊԸ Խորհրդի նախագահ	2004թ-ից մինչև օգոստոս 2015թ - “Յունիաստրում Բանկ” ԱԲ Տնօրենների Խորհրդի նախագահ, ՌԴ
Դավիթ Փափազյան	Ք. Երևան, Բաղրամյան 1, 1-ին շենք, բն.30	«Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ	Առկա չէ	2009- 2016 թթ՝ Management of HNW capital, պրինցիպալ 2009-2014թթ.՝ Innqva, Mqscqw & Luxembourg, Տնօրենների Խորհրդի անդամ
Էդուարդ	ՌԴ, ք. Մոսկվա, Սնայպեռսկայա	«Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի	Առկա չէ	2014թ-ից առ այսօր - “Յունիստրիմ” ԲԲԸ

Զամանյան	փող. 12	անդամ		Տնօրենների խորհրդի անդամ
Հրահատ Արզումանյան	ՌԴ, ք. Մոսկվա, Մեծ Օրդինկա փող., շ.51, բն. 3	«Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամ	Առկա չէ	2014թ. -ից առ այսօր – “Տրանսստրոյբանկ”-ի Տնօրենների Խորհրդի նախագահ
Մեսրոպ Հակոբյան	ք.Երևան, Թամանյան 1ա, բն 13	Բանկի Վարչության նախագահ	03.03.2008- առ այսօր “Յունիլիզինգ” ՎԿ ՓԲԸ Խորհրդի անդամ (“Unileasing " ՓԲԸ բաժնետեր՝ 1%) Հայաստանի Բանկերի Միության Խորհրդի անդամ ACRA վարկային գործակալության Խորհրդի անդամ	2014-2017թթ. «Յունիբանկ» ԲԲԸ, Վարչության նախագահի տեղակալ- Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն, 2012-2014 թթ. «Յունիբանկ» ՓԲԸ, Վարչության նախագահի տեղակալ- Տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարությունների տնօրեն
Արարատ Ղուկասյան	Ք. Երևան, Նորք Մարաշ, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, 5-րդ տուն	Բանկի Վարչության նախագահի առաջին տեղեկալ	Ա. Ալիխանյանի անվամբ Ազգային Լաբորատորիայի հոգաբարձուների Խորհրդի Անդամ 29.07.2015թ-ից առ այսօր Յունիլիզինգ ՓԲԸ Խորհրդի անդամ	2015– 2017թթ "Յունիբանկ" ԲԲԸ – Խորհրդի անդամ 2010–2015թթ. Հուլիս Բիբլոս Բանկ Արմենիա – Գլխավոր գործադիր տնօրեն
Գոհար Գրիգորյան	ք.Երևան Կոմիտաս 35 բն. 26	Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ	03.03.2008թ. առ այսօր՝ “Յունիլիզինգ” ՓԲԸ Խորհրդի անդամ	2013-2015 թթ.՝ «Յունիբանկ» ԲԲԸ, Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ 2007-2013թթ.՝ «Յունիբանկ» ՓԲԸ, հաշվապահական հաշվառման գծով տնօրեն- գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
Օվսաննա Առաքելյան	ՀՀ, ք. Աբովյան, Սևանի փող. 2/4 շ.,	Վարչության նախագահի տեղակալ -	«Ռեսո» ԱՓԲԸ Խորհրդի անդամ, «Յունիլիզինգ» ՎԿ ՓԲԸ Խորհրդի	2011-2014թթ.՝ «Յունիբանկ» ՓԲԸ, Իրավաբանական դեպարտամենտի

	բն. 15	Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն	անդամ, «Ուիլիամս Ինկորպորացիա» ՍՊԸ տնօրեն, «Պոլիգրաֆիա» ՓԲԸ տնօրեն, «Ջիվան Գասպարյան» մշակութային բարեգործական հիմնադրամի տնօրեն	տնօրեն, Վարչության անդամ 2011-2014թթ.՝ ՀՀ բանկերի միությանը կից Ֆինանսական արբիտրաժի արբիտր
Գուրգեն Ղուկասյան	ք. Երևան, Մարգարյան 2-րդ նրբանցք, 13 շենք, բն.6	Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն	23.09.2015թ-ից առ այսօր Յունիլիզինգ ՓԲԸ Գործադիր տնօրեն	2013–2014 թթ ՝ “Յունիբանկ” ՓԲԸ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն 2012-2013 թթ ՝ “Յունիբանկ” ՓԲԸ, Հիփոթեքային և ավտովարկերի վաճառքի դեպարտամենտի տնօրեն
Դավիթ Պետրոսյան	ք. Երևան, Գյուլբենկյան 30/3	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և և վաճառքների տնօրեն	Առկա չէ	2012-2014թթ.՝ "Յունիբանկ" ՓԲԸ, կորպորատիվ վաճառքների դեպարտամենտի տնօրեն

Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում խարդախության համար Խորհրդի և Վարչության անդամների մոտ դատվածություն առկա չէ:

Թողարկողի կառավարման մարմնի անդամները Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում որեւէ առնչություն չեն ունեցել որեւէ սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ:

Թողարկողի կառավարման մարմնի անդամները Ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում պատասխանատվության չեն ենթարկվել պետական որեւէ մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից եւ վերջիններս դատարանի կողմից չեն զրկվել թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

Առկա չէ և հնարավոր չէ շահերի բախում Խորհրդի և Վարչության անդամների՝ որպես թողարկողի կառավարման մարմնի անդամ թողարկողի նկատմամբ իրենց պարտականությունների եւ իրենց անձնական շահերի միջեւ:

Առկա չէ պայմանավորվածություն խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ, համաձայն որի որեւէ անձ ընտրվել կամ նշանակվել է թողարկողի կառավարման մարմնի անդամ:

Բանկի կառավարման անդամները չունեն պայմանագրեր Բանկի կամ նրա դուստր ընկերությունների հետ այն մասին, որ իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո պետք է ստանան պարգևավճար կամ լրավճար:

Բանկի կառավարման մարմինների անդամների միջև առկա չէ ազգակցական կապ:

<u>Աշխատակիցներ</u>

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակազմի ընդհանուր թիվը կազմել է 785, ներառյալ 5 Խորհրդի և 7 Վարչության անդամներ: Բոլոր աշխատակիցները աշխատում են լրիվ աշխատանքային օրով: 31.12.2017թ-ի դրությամբ թվով 785 աշխատակիցներ համարվում են լրիվ դրույքով աշխատող աշխատակիցներ, իսկ 144 աշխատակից և աշխատում են ծառայությունների մատուցման պայմանագրով:

Բանկի Խորհրդի նախագահ Գագիկ Զաքարյանը և Բանկի Խորհրդի անդամ Գեորգի Պիսկովը յուրաքանչյուրն անուղղակի հսկում է արտոնյալ բաժնետոմսերի 50%-ը, ինչպես նաև սովորական բաժնետոմսերի 43,9-ը:

Տեղեկատվություն բանկի կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամին պատկանող՝ բանկի բաժնային արժեթղթերի և այդ արժեթղթերի նկատմամբ օպցիոնների առկայության մասին՝ նրանցից յուրաքանչյուրին պատկանող արժեթղթերի դասը, քանակը, տոկոսը ընդհանուրի մեջ և այլն:

Ա.Ա.Հ	**Պաշտոն**	**Մասնակցության չափը Բանկի կանոնադրական**

		կապիտալում
Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն**	0.0027%
Արարատ Ղուկասյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ**	-0.0082 %
Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**	0.0027%
Դավիթ Պետրոսյան	**Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	0.0027%
Գուրգեն Ղուկասյան	**Վարչության նախագահի տեղակալ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	0.0041%

Խրախուսական միջոցառումներ

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ Բանկի հաջողության կարևոր գործոն է աշխատակիցների մոտիվացիան բարձրացնելու Բանկի կարողությունը, և որ մոտիվացիոն սխեմաները ապագայում կշարունակեն ամրապնդել Բանկի բիզնես ռազմավարությունը:

Որպես այս ծրագրի մի մաս, Բանկի աշխատակիցների տարբեր խմբերի համար ներդրվել են մի շարք պարգևավճարային (բոնուսային) սխեմաներ:

Պարգևավճարային սխեմաների շրջանակներում ցանկացած պարգևավճար տրամադրվում է Անձնակազմի գնահատման հանձնաժողովի հայեցողությամբ:

7. Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք

Բանկի խոշոր բաժնետերն է Կիպրոսում գրանցված Յունիհոլդինգ ՋՋ Լիմիթեդ Ընկերությունը – 87.8% (հասցեն՝ Կիպրոս, Նիկոսիա, Պատմու 5Բ, Ագլաթզիա, ՓԱ 2103), որը հանդիսանում է 147,805,227 հատ սովորական անվանական բաժնետոմսերի և 32,010,000 հատ արտոնյալ անվանական բաժնետոմսերի սեփականատեր: Յունիհոլդինգ ՋՋ Լիմիթեդ Ընկերությանը պատկանող Բանկի սովորական անվանական բաժնետոմսերը տալիս են ձայնի միևնույն իրավունք:

Բանկի գտնվում է հետևյալ անձանց անուղղակի հսկողություն տակ.

- Գեորգի Պիսկով Իգորի (Անձնագրային տվյալներ: 45 01 597016 տրված 28.12.2001թ. 772-110 կողմից, ՌԴ, ք. Մոսկվա,Բնակության հասցեն: ՌԴ, 119146 ք. Մոսկվա, Ֆրունզենսկայա Նաբերեժնայա, տուն 36, բն. 425):
- Զաքարյան Գագիկ Տիգրանի (Անձնագրային տվյալներ: 51N3886787 տրված 11.01.2008թ., Բնակության հասցեն: ՌԴ, ք. Մոսկվա, Նարոդնոգո Օպոլչենիյա փող., տուն թիվ 38, կորպուս 1, բն. 40):

Նշված անձանցից յուրաքանչյուրը անուղղակի հսկում է արտոնյալ բաժնետոմսերի 50%-ը և սովորական բաժնետոմսերի 43,9%:

Փոխկապակցված անձանց հետ գործարքները

Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկը փոխկապակցված անձանց հետ չի կնքել այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է Բանկի սեփական կապիտալի 1%:

Վերջին մեկ տարվա ընթացքում Բանկը փոխկապակցված անձանց հետ չի կնքել ոչ բնականոն գործունեության շրջանակում այնպիսի գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը:

8. Տեղեկատվություն թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտի և ծախսերի մասին

Պատմական ֆինանսական տեղեկատվություն

2015, 2016 և 2017 թվականների Բանկի՝ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, և անկախ աուդիտորական եզրակացությունների պատճենները, ինչպես նաև 2018թ.-ի 1-ինեռամսյակի հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատճենները կցվում են սույն Ազդագրին որպես Հավելված Ա:

Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկի ներգրավվածությամբ տեղի չեն ունեցել որևէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթներ (ներառյալ այն վարույթները, որոնք սկսվել կամ սպասվում են և որոնց մասին Բանկը տեղյակ է), որոնք Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ ունեցել են էական ազդեցություն:

Հարկային արտոնությունները

Բանկը չի օգտվում որևէ հարկային արտոնությունից:

9. Էական պայմանագրերը

Սույն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 2 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս չեն կնքվել որևէ պայմանագրեր, որոնց

գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

Յունիբանկը չունի 5 տոկոսը գերազանցող ուղղակի կամ անուղղակի բաժնեմաս այլ իրավաբանական անձանց կանոնադրական հիմնադրամում:

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված Բանկի ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում չի օգտագործվել հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ ցանկացած այլ փորձագետի մասնագիտական կարծիք:

Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.unibank.am հասցեով:Բանկը նախապատրաստվում է 2016 թվականի ընթացքում թողարկել ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսեր, որոնց վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կներկայացվի համապատասխան ազդագիրը ՀՀ ԿԲ-ում գրանցելուց հետո:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ,ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

10. Այլ տեղեկատվություն

Կանոնադրություն

Բանկի նպատակը և գործունեության շրջանակները

Համաձայն Բանկի կանոնադրության 1.4 կետի, Բանկն իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիային համապատասխան:

Բանկի կառավարման մարմինների իրավունքների և պարտականությունների համառոտ նկարագիրը (Կանոնադրության Բաժին 10)

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Ֆիզիկական անձ և Իրավաբանական անձ ներդրողների համար պարտատոմսի գնման պատվերի ձև

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Բանկի կազմակերպչական կառուցվածքը

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Թողարկման վերջնական պայմանները

ՀԱՎԵԼՎԱԾ 4. 2015, 2016 և 2017 թվականների «Յունիբանկ» ԲԲԸ-ի աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները և անկախ աուդիտորական եզրակացություններ, 2018թ.-ի 1-ին եռամսյակի հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատճենները:

Թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն
Brief Summary of Shares Issued

Թողարկող **Issuer**	**Յունիբանկ ԲԲԸ** **UNIBANK ԳJSC**
Թողարկման արժույթը **Currency գf denominatiգn**	
Թողարկման ծավալը **Issue volume**	
Պարտատոմսի ԱՄՏԾ **BOND ISIN**	

Ներդրողի վերաբերյալ տեղեկություններ
Investգr Infգrmatiգn

Անուն, ազգանուն (անվանում) **Full name (Company name)**	
Անձնագրի (գրանցման) տվյալներ **Passport (Registration) details**	
Բնակության (Իրավաբանական) հասցեն **Residence (Legal) address**	
Կապի միջոցները (հեռ., ֆաքս, էլ. փոստ) **Contact details** (tel., facsimile, e-mail)	

Արժեթղթերի հաշվի համարը **Securities account details**	
Դոլարային հաշվեհամարը **USD account details**	
Դրամային հաշվեհամարը **AMD account details**	

Գնման պատվերի վերաբերյալ տեղեկություններ
Subscription Information

Պարտատոմսերի քանակը **Number of shares**	
Գործարքի ծավալը **Transaction volume**	
Գործարքի գին ***Transactiqn Price***	

Ես՝ ներքոստորագրյալս, ստորագրելով սույն փաստաթուղթը, տեղեկացնում եմ, որ.

I, the undersigned, hereby affirm and acknowledge that:

1. Ծանոթացել եմ Յունիբանկ ԲԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրին:
   I have read the entire Prospectus of “UNIBANK” OJSC.

2. Լիովին գիտակցում եմ սույն պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:
   I fully understand the risks associated with the investment in the offered shares.

Ներդրող (լիազոր անձ)

Investor (authorized person)

անուն, ազգանուն / full name	ստորագրություն / signature

Բանկի կազմակերպչական կառուցվածքը

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ[1]

---------- 2018թ.

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(թողարկողի անվանումը)

Անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս
(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ---- ---------- 2017թ.__), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԲԲԸ-ում ՀՀ, ք. Երևան, 0025,Չարենցի 12, թիվ 53, 1-5 հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	Յուրաքանչյուր տրանշի համար ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից տեղաբաշխումը սկսելու ամսաթվից առնվազն 2 (երկու) աշխատանքային

[1] Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի Խորհրդի կողմից: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում պարտատոմսերի յուրաքանչուր տրանշի տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում: Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքերում:

		օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում սեփականատերերի պահանջները կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո: Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար, ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Տեղաբաշխման ընթացքում և տեղաբաշխումից հետո պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով. $$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\left(\frac{1}{(1+\frac{y}{100*f})^{i-1+t}}\right)+\left(\frac{100}{(1+\frac{y}{100*f})^{N-1+t}}\right)$$ $$t=\frac{DSN}{DCC}$$ DP – Պարտատոմսի գինն է. DSN – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա մեջ եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում: DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում: f- արժեկտրոնի վճարման

		հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում) N – գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է: Y- մինչ մարում եկամտաբերությունն է C- տարեկան արժեկտրոնն է 100 միավոր անվանական արժեքի դիմաց: Տեղաբաշխումը սկսելուց 2 օր առաջ առաջ Բանկի ինտերնետային կայքում կհրապարակվի վերոնշյալ բանաձևով հաշվարկված պարտատոմսի տեղաբաշխման գինը՝ տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի:
8.	Անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	200,000 (երկու հարյուր հազար) հատ, 100,000 (մեկ հարյուր հազար)
9.1	**Շուկա ստեղծողի կողմից ձեռք բերվող ծավալ**	
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Յուրաքանչյուր տրանշի համար ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից

15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Արժեկտրոնի տոկոսադրույքը ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից իսկ արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Կորոշվի պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու ամսաթվից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Յուրաքանչյուր տրանշի համար ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Յուրաքանչյուր տրանշի համար ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	

25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ, ՀՀ, ք. Երեւան, Չարենցի 12, թիվ 53,
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Յուրաքանչյուր տրանշի համար ենթակա է որոշման Թողարկողի Խորհրդի կողմից
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ թույլատրված չեն կարգավորվող շուկայում
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող Օրենսդրության՝ պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով՝ Թողարկողն ի նկատի ունի ՆԱՍԴԱՔ Օ Էմ Էքս Արմենիա ՓԲԸ-ն:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք կարող են վճարումը կատարել/համապատասխան գումարը փոխանցել Յունիբանկ ԲԲԸ-ում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Գագիկ Զաքարյան	**Խորհրդի նախագահ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գեորգի Պիսկով	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հրահատ Արզումանյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Էդուարդ Զամանյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Փափազյան	**Խորհրդի անդամ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արարատ Ղուկասյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Բաղանյան	**Վարչության անդամ - ռիսկերի կառավարման տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գուրգեն Ղուկասյան	**Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Օվսաննա Առաքելյան	**Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Պետրոսյան	**Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Grant Thornton

Ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2015թ.

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին և խորհրդին.

Մեր կողմից իրականացվել է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ (այսուհետ՝ «Բանկ») կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հանգամանքների լուսաբանում

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 34-ի վրա: Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Բանկի գործունեության անընդհատության սկզբունքից ելնելով: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2014թ. որոշում է կայացրել բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո 30,000,000 հազար ՀՀ դրամ: Բանկի բաժնետերերի և ղեկավարության հավաստիացմամբ նշված պահանջի իրականացումը Բանկը կապահովվի կանոնադրական կապիտալի համալրման միջոցով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն-բաժնետեր

Զարուհի Ղարիբյան
Աուդիտի ղեկավար

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
8 ապրիլ, 2016թ.
ք. Երևան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	**19,714,397**	19,316,864
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	**(13,431,362)**	(12,025,942)
Զուտ տոկոսային եկամուտներ		**6,283,035**	7,290,922
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	**1,334,902**	1,455,759
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	**(257,701)**	(287,433)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		**1,077,201**	1,168,326
Զուտ առևտրային եկամուտ	8	**677,989**	746,151
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ վնաս		**-**	(855)
Այլ եկամուտներ	9	**1,383,757**	1,645,630
Արժեզրկման ծախս	10	**(2,398,395)**	(4,106,633)
Անձնակազմի գծով ծախսեր	11	**(3,070,810)**	(3,272,711)
Հիմնական միջոցների մաշվածություն	19	**(412,952)**	(377,221)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	**(80,796)**	(73,084)
Այլ ծախսեր	12	**(2,912,720)**	(2,393,969)
Շահույթ մինչև հարկում		**546,309**	626,556
Շահութահարկի գծով ծախս	13	**(187,828)**	(94,081)
Տարվա շահույթ		**358,481**	532,475
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Հիմնական միջոցների վերագնահատում		**45,782**	-
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		**(9,157)**	-
		36,625	-
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս		**(468,167)**	(578,132)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ վնաս		**-**	871
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		**93,633**	115,452
		(374,534)	(461,809)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո		**(337,909)**	(461,809)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**20,572**	70,666
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ	14	**0.00157**	**-**

7-ից 62 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	**26,012,823**	34,036,384
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	**1,245,854**	882,221
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	17	**110,181,548**	118,960,394
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	18	**4,411,861**	31,923
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	26	**4,136,760**	4,984,447
Հիմնական միջոցներ	19	**5,165,342**	5,142,456
Ոչ նյութական ակտիվներ	20	**1,314,048**	1,254,782
Կանխավճար շահութահարկի գծով		**284,081**	382,262
Այլ ակտիվներ	21	**5,387,543**	4,583,677
Ընդամենը՝ ակտիվներ		**158,139,860**	170,258,546
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	**22,255,512**	32,567,529
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	**104,170,724**	102,069,829
Փոխառություններ	24	**7,511,491**	13,341,038
Հետաձգված հարկային պարտավորություն	13	**731,041**	725,839
Այլ պարտավորություններ	25	**762,000**	1,117,462
Ընդամենը՝ պարտավորություններ		**135,430,768**	149,821,697
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	27	**14,167,947**	13,100,700
Էմիսսիոն եկամուտ		**1,387,422**	-
Գլխավոր պահուստ		**421,851**	370,137
Այլ պահուստներ		**(492,684)**	(154,775)
Չբաշխված շահույթ		**7,224,556**	7,120,787
Ընդամենը՝ սեփական կապիտալ		**22,709,092**	20,436,849
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		**158,139,860**	170,258,546

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 3-ից 62 էջերում, ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2016թ. ապրիլի 8-ին:

Վարդան ԱԹԱՅԱՆ
Վարչության նախագահ

Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

7-ից 62 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրում-ների գծով վերագնա-հատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնա-հատման պահուստներ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ	13,100,700	-	370,137	(77,377)	384,411	6,972,432	20,750,303
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(384,120)	(384,120)
Սեփականատերերի հետ գործարքներ	-	-	-	-	-	(384,120)	(384,120)
Տարվա շահույթ	-	-	-	-	-	532,475	532,475
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	(52,148)	-	(52,148)
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	-	-	-	(578,132)	-	-	(578,132)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆին. արդյունքին փոխանցված զուտ վնաս	-	-		871	-	-	871
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	115,452	-	-	115,452
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(461,809)	-	532,475	70,666
Հաշվեկշիռը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,100,700	-	370,137	(539,186)	384,411	7,120,787	20,436,849
Բաժնետիրական կապիտալի ավելացում	**1,067,247**	**1,387,422**	**-**	**-**	**-**	**-**	**2,454,669**
Հատկացում պահուստին	**-**	**-**	**51,714**	**-**	**-**	**(51,714)**	**-**
Շահաբաժիններ բաժնետերերին	**-**		**-**	**-**	**-**	**(202,998)**	**(202,998)**
Սեփականատերերի հետ գործարքներ	**1,067,247**	**1,387,422**	**51,714**	**-**	**-**	**(254,712)**	**2,251,671**
Տարվա շահույթ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**358,481**	**358,481**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատում	**-**	**-**	**-**	**-**	**45,782**	**-**	**45,782**
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	**-**	**-**	**-**	**(468,167)**	**-**	**-**	**(468,167)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	**-**	**-**	**-**	**93,633**	**(9,157)**	**-**	**84,476**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**-**	**(374,534)**	**36,625**	**358,481**	**20,572**
Հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,167,947**	**1,387,422**	**421,851**	**(913,720)**	**421,036**	**7,224,556**	**22,709,092**

7-ից 62 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	**546,309**	626,556
Ճշգրտումներ		
Արժեզրկման ծախս	**2,398,395**	4,106,633
Բռնագանձված գույքի արժեզրկումից և իրացումից կորուստներ	**223,174**	30,643
Հիմնական միջոցների արժեքի վերականգնում	**(103,881)**	-
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	**493,748**	450,305
Հիմնական միջոցների օտարումից վնաս	**17,021**	15,763
Ստացվելիք տոկոսներ	**(2,280,884)**	1,252,651
Վճարվելիք տոկոսներ	**495,761**	(118,376)
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	**(179,415)**	(790,847)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**1,610,228**	5,573,328
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(320,892)**	490,042
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**9,379,240**	3,741,696
Այլ ակտիվներ	**(623,137)**	(713,108)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(826,458)**	912,909
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**1,490,851**	(10,366,793)
Այլ պարտավորություններ	**(62,136)**	115,695
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**10,647,696**	(246,231)
Վճարված շահութահարկ	**31**	(96,056)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**10,647,727**	(342,287)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	**(3,938,810)**	(175,093)
Հիմնական միջոցների առք	**(375,118)**	(1,284,858)
Հիմնական միջոցների վաճառք	**71,922**	45,973
Ոչ նյութական ակտիվների առք	**(140,062)**	(382,650)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(4,382,068)**	(1,796,628)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	**2,454,669**	-
Շահաբաժինների վճարում	**(500,321)**	(47,621)
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում/(մարում)	**(9,654,080)**	27,344,275
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների մարում	**(6,292,311)**	(14,240,248)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(13,992,043)**	13,056,406
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(7,726,384)**	10,917,491
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**34,036,384**	21,118,118
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**(297,177)**	2,000,775
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Ծանոթ. 15)	**26,012,823**	34,036,384
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	**17,765,762**	20,569,515
Վճարված տոկոսներ	**(12,935,601)**	(12,144,318)

7-ից 62 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 2001թ. հոկտեմբերի 9-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2001թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N81 արտոնագրային համարով:

2015թ. հունիսի 23-ին համաձայն Բանկի Գրանցման թիվ 0373 վկայականի «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերակազմավորվեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ՝ թողարկելով 14,500,000 հատ բաժնետոմս:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 25 մասնաճյուղերը գտնվում է Երևանում, 18 մասնաճյուղերը՝ ՀՀ տարբեր շրջաններում, 2 մասնաճյուղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և մեկ ներկայացուցչություն ՌԴ Մոսկվա քաղաքում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենց 12 շենք թիվ 53, թիվ 1-5:

2015թ. դեկտեմբերին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալությունը հաստատել է Յունիբանկի բանկային ավանդների B2/NP, բազային վարկային գնահատականի b3, կոնտրագենտի ռիսկի գնահատականի B1(cr)/NP(cr) վարկանիշները: Բոլոր վարկանիշների գծով կանխատեսումը մնացել է անփոփոխ՝ կայուն:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

ՀՀ հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից ոչ առևտրային դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Բանկի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Բանկի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով բացառությամբ շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՄ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

2015թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար առաջին անգամ ընդունված նոր ստանդարտները կամ մեկնաբանությունները կիրառելի չեն Բանկի

համար: Այդ ժամկետից կիրառվող ստանդարտներում տեղ գտած փոփոխություններից և ոչ մեկը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չի ունեցել:

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

ՀՀՄՍԽ-ն վերջերս թողարկել է *ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»* (2014), ներկայացնելով իր նախագծի ավարտը՝ փոխարինելու *ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտը ներկայացնում է ՀՀՄՍ 39-ի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման ուղեցույցի մեծ փոփոխություններ, և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «սպասվող վարկային կորուստ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը տրամադրում է նաև հեջի հաշվառման կիրառման նոր ուղեցույց:
Բանկի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Հետևյալ նոր և փոփոխված ստանդարտները, բարեփոխումները հավանաբար նշանակալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *ՖՀՄՍ 14 հաշիվների կանոնավոր հետաձգում*
- *Համատեղ գործողություններում տոկոսների ձեռքբերման հաշվառում*
- *Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում (ՀՀՄՍ 38 և ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
- *Առանձին ֆինանսական հաշվետվություններում սեփական կապիտալի մեթոդը (ՀՀՄՍ 27 փոփոխություններ)*
- *Ակտիվների ներդրման վաճառք ներդրողի և դրա ասոցացված կազմակերպության կամ դրա համատեղ ձեռնարկության միջև (ՀՖՄՍ 10 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ)*
- *2012-2014թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով*
- *Ներդրումային ընկերություններ. Համախմբման բացառությունների կիրառումը (ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ)*
- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 1 փոփոխություններ):*

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է: Շահաբաժիններից եկամուտը ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկման ենթակա չէ:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2015թ. դեկտեմբերի 31	2014թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	**483.75**	474.97
ՀՀ դրամ/1 Եվրո	**528.69**	577.47
ՀՀ դրամ/1 ՌՈՒԲ	**6.62**	8.15

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռք բերման օրից 90 օր է, որոնք հեշտությամբ փոխարկելի են հայտնի կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.6 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

Համաձայն հեջի արդյունավետության, ածանցյալների իրական արժեքի փոփոխությունները, որոնք նախատեսված են որպես դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ, ճանաչվում են այլ համապարփակ եկամուտում և ներառվում են սեփական կապիտալի դրամական միջոցների հոսքերի հեջի պահուստում: Հեջավորման փոխհարաբերության ցանկացած անարդյունավետություն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այն ժամանակ երբ հեջավորված հոդվածը ազդում է շահույթի կամ վնասի վրա, ցանկացած օգուտ կամ վնաս, որը նախկինում ճանաչվել է այլ համապարփակ եկամուտում, սեփական կապիտալից դասակարգվում է շահույթում կամ վնասում և ներկայացվում է, որպես վերադասակրգման ճշգրտում, այլ համապարփակ եկամուտում: Այնուամենայնիվ, եթե ոչ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում է որպես հեջավորված գործարքի արդյունք, նախկինում այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտը կամ վնասները ներառվում են հեջավորված հոդվածի նախնական չափման մեջ:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և

առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից

առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող Ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.8 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Բանկը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ

տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Բանկը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Բանկը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ

փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Բանկը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.9 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է

հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.10 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.11 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով

որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.12 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.13 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքը ներկայացված է իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	60	1.67
Համակարգիչային տեխնիկա	5	20
Կապի և հաղորդակցման միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	7	14.3
Բանկոմատներ	10	10
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով. վարձակալման ժամկետ կամ հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետ: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն

փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշված օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 25 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.15 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.16 Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և

այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.18 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարումների տարեկան չափը սահմանվում է 5% այդ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ: Վճարումն իրականացվում է Բանկի զուտ շահույթից և/կամ դրա հաշվին ձևավորված պահուստներից:

Բաժնետերերին վճարվող շահաբաժինները վճարվում են հարկված շահույթից և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ հարկման ենթակա չեն:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ
Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

4.19 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Բանկի առևտրային գործունեությունը:

4.20 Սեգմենտների ներկայացում

Գործառնական սեգմենտը հանդիսանում է Բանկի բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Բանկի այլ որևէ բաղկացուցիչ մասի հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեգմենտները որոշելիս Բանկի ղեկավարությունը տարանջատում է Բանկի այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեգմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ սեգմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը: Այս ֆինանսական հաշվետվությունների շրջանակներում Բանկի աշխարհագրական սեգմենտները ներկայացված են հիմնվելով գործընկերների գտնվելու վայրի վրա՝ հիմնվելով ավելի շուտ տնտեսական ռիսկի, քան իրավաբանական ռիսկի վրա:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը
Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր

է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 30):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականցվում է կապիտալում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 29):

Վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկում

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 28 ծանոթագրությունը:

Բանկի ղեկավարությունը չի վերանայել իր նախորդ գնահատումները, այսինքն չի ապաճանաչել հիմնական միջոցների հետ կապված իր նախկինում գնահատված հետաձգված հարկային պարտավորությունը և շարունակում է կատարել իր հարկային հաշվառումը, ինչպես նախկինում:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2015**	2014
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	**17,812,124**	17,645,652
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	**910,778**	744,265
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	**39,957**	126,281
Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	**951,323**	800,666
Ֆակտորինգ	**215**	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**19,714,397**	19,316,864
Հաճախորդների հաշիվներ	**9,738,417**	8,504,548
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	**1,431,835**	1,142,623
Կառավարության վարկեր	**47,348**	144,622
Ռեպո գործառնություններ	**599,890**	60,419
Փոխառություններ	**1,613,872**	2,155,651
Այլ տոկոսային ծախսեր	**-**	18,079
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**13,431,362**	12,025,942

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Դրամարկղային գործառնություններ	**892,244**	991,500
Վճարային քարտերով գործառնություններ	**189,909**	217,349
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	**45,133**	16,455
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	**88,545**	133,279
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	**119,071**	97,176
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**1,334,902**	1,455,759

Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	**81,943**	54,257
Վճարային քարտերով գործառնություններ	**143,726**	171,516
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	**4,466**	13,014
Բորսայական ծառայություններ	**9,493**	10,333
Այլ ծախսեր	**18,073**	38,313
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	**257,701**	287,433

8 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	**724,110**	1,152,637
Ածանցյալ գործիքներից զուտ վնաս	**(46,121)**	(406,486)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**677,989**	746,151

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Ստացված տույժեր և տուգանքներ	**1,054,899**	826,476
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	**179,415**	790,847
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ	**-**	10,069
Հիմնական միջոցների արժեքի վերականգնումից օգուտ	**120,003**	-
Այլ եկամուտ	**29,440**	18,238
Ընդամենը այլ եկամուտներ	**1,383,757**	1,645,630

10 Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (ծանոթագրություն 17)	**2,392,158**	4,103,318
Այլ ակտիվներ (ծանոթագրություն 21)	**6,237**	3,315
Ընդամենը ակտիվների արժեզրկման ծախս	**2,398,395**	4,106,633

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	**3,069,378**	3,269,189
Անձնակազմի ուսուցման և այլ ծախսեր	**1,432**	3,522
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**3,070,810**	3,272,711

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	**271,418**	266,970
Գովազդի ծախսեր	**299,572**	186,863
Գործուղման ծախսեր	**13,906**	15,344
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	**127,837**	126,442
Վարձակալության գծով ծախսեր	**771,161**	768,363
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	**352,712**	300,399
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	**192,044**	60,467
Անվտանգության գծով ծախսեր	**58,654**	113,827
Ներկայացուցչական ծախսեր	**51,140**	37,773
Գրասենյակային ծախսեր	**68,407**	80,476
Վճարված տուգանքներ	**1,550**	1,740
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ վնաս	**4,592**	-
Ավանդների ապահովագրություն	**179,348**	175,151
Համակարգչային ծրագրերի սպասարկում	**41,001**	35,200
Ինկասացիոն ծառայություններ	**69,336**	71,807
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ	**16,122**	-
Հիմնական միջոցների օտարումից առաջացած կորուստներ	**17,021**	15,763
Բռնագանձված գրավների արժեզրկումից կորուստներ	**183,065**	-
Բռնագանձված գրավների իրացումից կորուստներ	**40,109**	30,643
Այլ ծախսեր	**153,725**	106,741
Ընդամենը այլ ծախսեր	**2,912,720**	2,393,969

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2015	2014
Ընթացիկ հարկի գծով ծախս	**98,150**	128,422
Հետաձգված հարկ	**89,678**	(34,341)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**187,828**	94,081

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2014թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	**2015**	**Արդյունավետ դրույքաչափ (%)**	2014	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	**546,309**		626,556	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	**109,262**	**20**	125,311	20
Չհարկվող եկամուտ	**(24,001)**	**(4)**	(22,530)	(4)
Այլ հարկվող եկամուտ	**1,777**	**-**	21,073	3
Չնվազեցվող ծախսեր	**126,531**	**23**	49,113	8
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	**9,224**	**1**	81,297	13
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	**(34,965)**	**(6)**	(160,183)	(26)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**187,828**	**34**	94,081	14

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	**2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Ֆինանսական արդյունքներով ճանաչված**	**Սեփական կապիտալում ճանաչված**	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Այլ պարտավորություններ	**63,388**	**(11,305)**	**-**	**52,083**
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	**135,932**	**-**	**93,633**	**229,565**
Այլ ակտիվներ	**-**	**36,613**	**-**	**36,613**
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**199,320**	**25,308**	**93,633**	**318,261**
Պայմանական պարտավորություններ	**(20,665)**	**(1,977)**	**-**	**(22,642)**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(8,360)**	**1,330**	**-**	**(7,030)**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**(806,744)**	**(115,542)**	**-**	**(922,286)**
Հիմնական միջոցներ	**(89,390)**	**1,203**	**(9,157)**	**(97,344)**
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	**(925,159)**	**(114,986)**	**(9,157)**	**(1,049,302)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	**(725,839)**	**(89,678)**	**84,476**	**(731,041)**

Հազար ՀՀ դրամ	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	56,306	7,082	-	63,388
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	20,480	-	115,452	135,932
Փոխանցվող հարկային վնաս	145,221	(145,221)	-	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	222,007	(138,139)	115,452	199,320
Պայմանական պարտավորություններ	(24,913)	4,248	-	(20,665)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(8,450)	90	-	(8,360)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(972,483)	165,739	-	(806,744)
Հիմնական միջոցներ	(91,793)	2,403	-	(89,390)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(1,097,639)	172,480	-	(925,159)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(875,632)	34,341	115,452	(725,839)

14 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

Հազար ՀՀ դրամ	2015
Տարվա շահույթ	**358,481**
Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ	**(202,998)**
Տարվա շահույթ՝ նվազեցված արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժիններով	**155,483**
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	**99,163,757**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը	**0.00157**

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	**7,147,554**	6,775,432
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	**15,849,237**	23,802,559
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ	**3,016,032**	3,458,393
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**26,012,823**	34,036,384

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 20%-ի չափով: Այդ միջոցները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 14,289,553 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 15,084,982 հազար դրամ 2% և 12% համապատասխանաբար): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,130,517 հազար դրամ գումարով (71%) հաշիվները կենտրոնացված են երկու բանկերում, (2014թ. երկու բանկերում՝ 2,435,946 հազար դրամ (70%)):

2015թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկային պարտավորությունների մարում գրավի սեփականության իրավունքի փոխանցման միջոցով 408,225 հազար դրամ գումարով (2014թ.՝ 658,906 հազար դրամ):

16 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններում	**735,854**	722,221
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	**510,000**	160,000
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**1,245,854**	882,221

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

17 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	**94,018,528**	120,321,417
Օվերդրաֆտներ	**20,736,215**	3,155,094
	114,754,743	123,476,511
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(4,573,195)**	(4,516,117)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**110,181,548**	118,960,394

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերում և փոխատվություններում ներառված հաշվեգրված տոկոսները կազմում են 6,576,740 հազար դրամ (2014թ.՝ 4,044,558 հազար դրամ):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է իրավաբանական անձանց ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 16.09 %, ԱՄՆ դոլարով վարկերի համար 15.3 %, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 14.16%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 25.46%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 17.59%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 11.92%, Ռուբլով վարկերի համար 19.49 % (2014թ.՝ իրավաբանական անձանց ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 14.41%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 12.76%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 11.85%, Ռուբլով վարկերի համար՝ 13.91% , ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 21.43%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 13.84%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 11.67%):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 23,339,952 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 20%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 15 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2014թ՝ 21,823,052 հազար դրամ կամ 18%՝ տրամադրված թվով 15 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 1,496,852 հազար դրամ (2014թ՝ 1,306,000 հազար դրամ):

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արդյունաբերություն	**9,503,504**	12,282,590
Գյուղատնտեսություն	**684,061**	778,610
Շինարարություն	**4,542,902**	4,773,010
Տրանսպորտ	**4,235,454**	4,210,254
Առևտուր	**23,902,749**	25,346,631
Սպասարկում	**8,888,679**	8,196,147
Սպառողական	**41,191,322**	44,456,163
Հիփոթեքային	**14,162,071**	16,169,952
Այլ	**7,644,001**	7,263,154
	114,754,743	123,476,511
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(4,573,195)**	(4,516,117)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	**110,181,548**	118,960,394

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	2015 Ընդամենը
2015թ. հունվարի 1 դրությամբ	**1,012,858**	**7,786**	**47,730**	**410,665**	**1,079,786**	**1,001,857**	**682,390**	**200,413**	**72,632**	**4,516,117**
Տարվա ծախս/(հակադարձում)	**(817,497)**	**46,254**	**(156,456)**	**179,745**	**111,710**	**(21,885)**	**2,673,973**	**362,396**	**13,918**	**2,392,158**
Դուրսգրում	**(114,666)**	**(37,863)**	**(26,917)**	**(89,635)**	**(526,328)**	**(6,566)**	**(3,255,347)**	**(408,053)**	**(6,288)**	**(4,471,663)**
Վերադարձ	**185,658**	**4,823**	**221,111**	**3,400**	**583,372**	**94,815**	**845,301**	**197,255**	**848**	**2,136,583**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**266,353**	**21,000**	**85,468**	**504,175**	**1,248,540**	**1,068,221**	**946,317**	**352,011**	**81,110**	**4,573,195**
Անհատական արժեզրկում	**181,249**	**14,399**	**46,364**	**494,971**	**1,035,908**	**1,049,140**	**337,451**	**242,513**	**4,873**	**3,406,868**
Խմբային արժեզրկում	**85,104**	**6,601**	**39,104**	**9,204**	**212,632**	**19,081**	**608,866**	**109,498**	**76,237**	**1,166,327**
	266,353	**21,000**	**85,468**	**504,175**	**1,248,540**	**1,068,221**	**946,317**	**352,011**	**81,110**	**4,573,195**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	**993,073**	**23,999**	**632,471**	**3,315,050**	**2,639,554**	**6,980,571**	**600,288**	**3,212,230**	**20,303**	**18,417,539**

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	2014 Ընդամենը
2014թ. հունվարի 1 դրությամբ	433,052	42,062	99,007	53,670	904,801	337,715	283,710	105,689	220,912	2,480,618
Տարվա ծախս/(հակադարձում)	490,291	(37,926)	(13,580)	338,081	1,714,008	605,690	1,357,734	(242,256)	(108,724)	4,103,318
Դուրսգրում	(169,232)	(3,761)	(83,381)	(73,634)	(1,846,069)	(88,663)	(1,380,380)	(85,547)	(54,882)	(3,785,549)
Վերադարձ	258,747	7,411	45,684	92,548	307,046	147,115	421,326	422,527	15,326	1,717,730
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,012,858	7,786	47,730	410,665	1,079,786	1,001,857	682,390	200,413	72,632	4,516,117
Անհատական արժեզրկում	904,297	-	-	398,866	856,743	982,763	244,401	39,493	-	3,426,563
Խմբային արժեզրկում	108,561	7,786	47,730	11,799	223,043	19,094	437,989	160,920	72,632	1,089,554
	1,012,858	7,786	47,730	410,665	1,079,786	1,001,857	682,390	200,413	72,632	4,516,117
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	1,426,499	-	-	3,030,347	3,042,363	6,286,720	657,261	77,966	-	14,521,156

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պետական ձեռնարկություններ	**323,190**	685,906
Մասնավոր ձեռնարկություններ	**47,031,132**	49,998,452
Ֆիզիկական անձիք	**56,288,029**	61,496,082
Անհատ ձեռնարկատերեր	**11,112,392**	11,296,071
	114,754,743	123,476,511
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(4,573,195)**	(4,516,117)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	**110,181,548**	118,960,394

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիփոթեքային	**14,162,071**	16,169,952
Սպառողական	**39,886,245**	40,827,021
Ավտոմեքենաների ձեռքբերման	**1,305,077**	3,629,142
Այլ	**934,636**	869,967
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	**56,288,029**	61,496,082

Ինչպես նշված է 30 ծանոթագրությունում, 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ այլ ռիսկերը բացահայտված են 33 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը փոխկապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 29 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 32 ծանոթագրությունում:

18 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չգնանշվող ներդրումներ		
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	**12,690**	12,690
ՀՀ պետական պարտատոմսեր	**4,177,724**	19,233
Ոչ-պետական պարտատոմսեր	**221,447**	-
Ընդամենը ներդրումներ	**4,411,861**	31,923

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2015		2014	
	%	ժամկետ	%	ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	**6.23-14.10%**	**2015-2028**	8.4-14.23%	2015-2028

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 4,136,760 հազար դրամով իրական արժեքով (2014թ.՝ 4,984,447 հազար դրամ) վաճառվել են երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով՝ 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում (Ծանոթ. 26):

Բոլոր չգնանշված վաճառքի համար մատչելի բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով նվազեցված արժեզրկման կորուստներով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա և Բանկը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

19 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Վարձակալ. հիմն. միջ.գծով կապ. ներդր.	Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Գրասենյակային սարքա-վորում և այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔ						
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	2,600,168	374,397	943,484	359,862	2,095,829	6,373,740
Ավելացում	800,232	13,429	142,929	1,927	326,341	1,284,858
Օտարում	-	(2,609)	(65,547)	(64,608)	(35,213)	(167,977)
Վերախմբավորում	-	-	76	-	(76)	-
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,400,400**	**385,217**	**1,020,942**	**297,181**	**2,386,881**	**7,490,621**
Ավելացում	**50,010**	**25,598**	**71,625**	**2,198**	**225,687**	**375,118**
Օտարում	**-**	**(5,753)**	**(36,697)**	**(119,852)**	**(80,699)**	**(243,001)**
Հիմնական միջոցների վերագնահատում	**149,663**	**-**	**-**	**-**	**-**	**149,663**
Հիմնական միջոցների վերագնահատման ճշտում	**(233,719)**	**-**	**-**	**-**	**-**	**(233,719)**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,366,354**	**405,062**	**1,055,870**	**179,527**	**2,531,869**	**7,538,682**
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ						
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	128,434	82,314	605,225	115,498	1,145,714	2,077,185
Հատկացումներ	56,879	7,652	70,273	40,552	201,865	377,221
Օտարում	-	(2,609)	(38,609)	(37,345)	(27,678)	(106,241)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**185,313**	**87,357**	**636,889**	**118,705**	**1,319,901**	**2,348,165**
Հատկացումներ	**57,955**	**10,715**	**95,413**	**32,006**	**216,863**	**412,952**
Օտարում	**-**	**(5,753)**	**(36,097)**	**(69,968)**	**(42,240)**	**(154,058)**
Հիմնական միջոցների վերագնահատման ճշտում	**(233,719)**	**-**	**-**	**-**	**-**	**(233,719)**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,549**	**92,319**	**696,205**	**80,743**	**1,494,524**	**2,373,340**
ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԱՐԺԵՔ						
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,356,805**	**312,743**	**359,665**	**98,784**	**1,037,345**	**5,165,342**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,215,087**	**297,860**	**384,053**	**178,476**	**1,066,980**	**5,142,456**
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	2,471,734	292,083	338,259	244,364	950,115	4,296,555

Ակտիվների վերագնահատում

Հողի և շենքերի վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2015թ դեկտեմբերին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 149,663 հազար դրամ գումարով: Հողի և շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Եթե հողը և շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 3,192,114 հազար դրամ (2014թ՝ 2,897,446 հազար դրամ):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,036,034 հազար դրամ (2014թ.՝ 889,394 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 466,468 հազար դրամ, այդ թվում 17,830 հազ. դրամ՝ շենքեր (2014թ՝ 349,895 հազար դրամ, այդ թվում 150,470 հազ. դրամ՝ շենքեր):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով, (2014թ.՝ նույնպես):

20 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ				
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	734,205	341,228	100,433	1,175,866
Ավելացում	188,606	194,044	-	382,650
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**922,811**	**535,272**	**100,433**	**1,558,516**
Ավելացում	**8,027**	**132,035**	**-**	**140,062**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**930,838**	**667,307**	**100,433**	**1,698,578**
ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ				
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	63,217	112,737	54,696	230,650
Մասհանումներ	49,869	20,827	2,388	73,084
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**113,086**	**133,564**	**57,084**	**303,734**
Մասհանումներ	**58,510**	**19,898**	**2,388**	**80,796**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**171,596**	**153,462**	**59,472**	**384,530**
ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԱՐԺԵՔ				
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**759,242**	**513,845**	**40,961**	**1,314,048**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	809,725	401,708	43,349	1,254,782
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	670,988	228,491	45,737	945,216

Պայմանագրային պարտավորություններ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումների գծով:

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտոնագրերում ներառված է 580,189 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարային քարտերով գործառնությունների քլիրինգային գործընթացի իրականացման համար համապատասխան ծրագրերի արտոնագիրը (2014թ՝ 647,905 հազար դրամ):

21 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	**1,264,949**	670,145
Ստացվելիք գումարներ	**39,996**	34,714
Այլ ակտիվներ	**343,092**	287,514
	1,648,037	992,373
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	**(16,081)**	(9,844)
	1,631,956	982,529
Բռնագանձված ակտիվներ	**3,601,921**	3,409,764
Այլ կանխավճարված հարկեր	**1,565**	27,143
Նյութեր	**99,758**	107,306
Թանկարժեք մետաղներ	**52,343**	56,935
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**3,755,587**	3,601,148
Ընդամենը այլ ակտիվներ	**5,387,543**	4,583,677

Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող բռնագանձված գրավները իրենցից ներկայացնում են անշարժ գույք: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով:

2015թ. ընթացքում Բանկը ճանաչել է բռնագանձված ակտիվների արժեզրկում 183,065 հազար դրամ գումարի չափով, որը պայմանավորված է անշարժ գույքի շուկայական արժեքների նվազումով:

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	**Ընդամենը**
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	6,529
Տարվա ծախս	3,315
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,844**
Տարվա ծախս	**6,237**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,081**

22 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	**84,849**	982,086
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	**47,836**	51,871
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	**17,117,304**	25,314,479
Ռեպո համաձայնագրերով վարկեր	**4,002,028**	4,855,326
Ավանդներ այլ ֆինանասական կազմակերպություններից	**1,003,495**	1,359,504
Այլ	**-**	4,263
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**22,255,512**	32,567,529

2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների համար միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.79% (2014թ.՝ 9.89%) և 6.8% ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար (2014թ.՝ 6.49%):

Ֆինանսական կազմակերպություններից ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Վարկերն ունեն հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2014թ. ՝ ոչինչ):

23 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ կառավարություն		
Վարկեր	**551,740**	877,594
Այլ	**7,959**	-
	559,699	877,594
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	**6,536,569**	9,283,847
Ժամկետային ավանդներ	**6,997,688**	5,780,854
	13,534,257	15,064,701
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	**5,614,865**	5,195,852
Ժամկետային ավանդներ	**84,461,903**	80,931,682
	90,076,768	86,127,534
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**104,170,724**	102,069,829

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներառում են վարկեր ստացված Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի «Գյուղական Տարածքների Տնտեսական զարգացման ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով» և «Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի» շրջանակներում իրականացվող ֆինանսավորման նպատակով: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կառավարությունից ստացված ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.15%, ԱՄՆ դոլարով

վարկերի համար՝ 4.06% (2014թ.՝ ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 6.75%, ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 4.06%):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընթացիկ և ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների գծով 7,011,401 հազար դրամ գումարով (2014թ. 6,494,537 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող տաս հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը կազմում է 8,724,848 հազար դրամ (2014թ. 14,614,719 հազար դրամ) կամ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ավանդների ընդհանուր գումարի 9.5% (2014թ. 14%):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2014: ոչինչ):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է իրավաբանական անձանց ՀՀ դրամով պարտավորությունների համար 13.59%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 8.85%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 7.56%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով պարտավորությունների համար 17.33%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 7.66%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 6.6%, (2014թ.՝ իրավաբանական անձանց ՀՀ դրամով պարտավորությունների համար 12.88%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 9.05%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 3.56%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով պարտավորությունների համար 13.64%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 7.49%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 5.01%):

24 Փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստորադաս փոխառություն ոչ ֆինանսական կազմակերպություններից	**5,273,785**	7,126,893
Ստորադաս փոխառություն ԿԲ-ից	**-**	1,874,145
Այլ փոխառություն	**2,237,706**	4,340,000
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**7,511,491**	13,341,038

Ստորադաս փոխառությունը տրված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2010 թ-ի ապրիլի 6-ին, որը մարվել է 2015 թ-ի ապրիլի 6-ին: Տոկոսադրույքը կազմում էր 7.5%:

Ընթացիկ տարում Բանկը ներգրավել է ստորադաս երկարաժամեկտ փոխառություն և կարճաժամկետ վերականգնվող փոխառություն Բանկի հետ կապակցված Կազմակերպությունից (տես ծանոթագրություն 29):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2014: ոչինչ):

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներգրավված փոխառությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10.28% (2014: 10.25%):

25 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	**114,587**	121,323
Վճարվելիք գումարներ շահաբաժինների գծով	**86,797**	384,120
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	**155,135**	222,472
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**356,519**	727,915
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	**304,350**	300,630
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	**41,596**	43,143
Ստացված կանխավճարներ	**59,535**	45,774
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**405,481**	389,547
Ընդամենը այլ պարտավորություններ	**762,000**	1,117,462

26 Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	Ակտիվ		Պարտավորություն	
	2015	2014	**2015**	2014
Վաճառքի համար մատչելի ներդրումներ (ծանոթ. 18, 22)	**4,136,760**	4,984,447	**4,002,028**	4,855,326
	4,136,760	4,984,447	**4,002,028**	4,855,326

27 Սեփական կապիտալ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 14,167,947 հազար դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, վճարված բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 109,669,471 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով և 32,010,000 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2015		2014	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	**Բաժնեմասը վճարված կապիտալում**	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում
Ռիպատոնսո Հոլդինգս Լիմիթեդ	**-**	**-**	13,100,700	100
Գլովերի Հոլդինգ էլԹիԴի	**13,100,700**	**92**	-	-
Առոլովա էնթերփրայզիս լիմիթեդ	**509,395**	**4**	-	-
Ամիքսոն Բիզնես էլԹիԴի	**350,000**	**2**	-	-
Այլ	**207,852**	**2**	-	-
	14,167,947	**100**	13,100,700	100

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

2015թ. Բանկը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 2,454,669 հազար դրամ հազար դրամ գումարով, որից էմիսիոն եկամուտը կազմել է 1,387,422 հազար դրամ: Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով:

Բանկի լրացուցիչ Թողարկված բաժնետոմսերի ամբողջությամբ տեղաբաշխման ժամկետ է սահմանվել մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում: Արտոնյալ բաժնետոմսերը ունեն մեկ ձայնի իրավունք միայն Բանկի վերակազմակերպման կամ լուծարման և կանոնադրության մեջ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները սահմանափակող որոշումների իրականացման հարցերում և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում ճանաչված շահաբաժինների գումարը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 202,998 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 384,120 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով:

28 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31 դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային գծերի չօգտագործված մաս	**3,468,061**	4,935,703
Տրամադրված երաշխիքներ	**1,612,800**	1,772,728
Ընդամենը վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	**5,080,861**	6,708,431

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – բանկը որպես վարձակալող

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	**662,481**	692,809
1-5 տարի	**1,844,972**	2,072,266
5 տարուց ավելի	**73,395**	409,314
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	**2,580,848**	3,174,389

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարները աճել են գլխամասի տարածքի վարձակալության ժամկետի երկարաձգման հետևանքով:

Կապիտալ բնույթի պարտավորություններ

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 19, 20 ծանոթագրություններում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

29 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՍՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող են համարվում ՌԴ գործարարներ Գ. Զաքարյանը և Գ. Պիսկովը՝ հավասարաչափ բաժնեմասերով:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր	Ղեկավար անձնակազմը	Բաժնետերեր	Ղեկավար անձնակազմը
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Հունվարի 1-ի դրությամբ, համախառն	**246,962**	**578,709**	299,140	521,614
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	**2,477**	**215,676**	20,423	252,733
Տարվա ընթացքում մարված վարկեր	**(9,988)**	**(585,867)**	(72,601)	(195,638)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	**239,451**	**208,518**	246,962	578,709
Արժեզրկումից պահուստ	**(2,395)**	**(2,085)**	(2,470)	(5,787)
Դեկտեմբերի 31 դրությամբ	**237,056**	**206,433**	244,492	572,922
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	**540,238**	**-**	235,656	-
Տարվա ընթացքում տրամադրված	**83,418,690**	**-**	135,671,503	-
Տարվա ընթացքում մարված	**(83,392,197)**	**-**	(135,366,921)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**566,731**	**-**	540,238	-
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	**890,535**	**-**	314,612	-
Տարվա ընթացքում ստացված	**7,623,634**	**-**	7,222,032	-
Տարվա ընթացքում վճարված	**(7,639,996)**	**-**	(6,646,109)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**874,173**	**-**	890,535	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	**362,014**	**624,226**	491,016	719,840
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	**31,543,725**	**2,052,752**	88,628,735	6,778,086
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	**(31,234,208)**	**(2,484,822)**	(88,757,737)	(6,873,700)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**671,531**	**192,156**	362,014	624,226

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր	Ղեկավար անձնակազմը	Բաժնետերեր	Ղեկավար անձնակազմը
Փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	**11,466,893**	**-**	21,951,228	-
Տարվա ընթացքում ստացված փոխառություններ	**33,042,171**	**-**	47,351,479	-
Տարվա ընթացքում վճարված փոխառություններ	**(36,997,573)**	**-**	(57,835,814)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,511,491**	**-**	11,466,893	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**37,373**	**21,109**	110,380	63,554
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	**(2,071,004)**	**(48,983)**	(2,018,181)	(45,187)
Վարկային կորուստների ծախս/(հակադարձում)	**(75)**	**(3,702)**	(522)	571
Գործառնական վարձակալության գծով վճարված գումարներ	**(312,000)**	**-**	312,000	-
Ապահովագրության գծով վճարներ	**(41,923)**	**-**	84,685	-

Բանկի հետ կապված անձանց տարվա ընթացքում տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 15 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 12-21%:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ	**631,517**	611,649
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**631,517**	611,649

30 Իրական արժեքի չափումը

Բանկի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը, հողը և շենքերը, այնպես էլ ոչ պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, մասնավորապես հիմնական միջոցների և բռնագանձված ակտիվների գնահատման մեջ: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի ղեկավարության կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Բանկի ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում է հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Բանկի ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին

համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

30.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	26,012,823	-	26,012,823	26,012,823
Պահանջներ այլ ֆինանսական կազմեկեպությունների նկատմամբ	-	1,245,854	-	1,245,854	1,245,854
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	110,181,548	-	110,181,548	110,181,548
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	22,255,512	-	22,255,512	22,255,512
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	104,170,724	-	104,170,724	104,170,724
Փոխառություններ	-	7,511,491	-	7,511,491	7,511,491
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	356,519	-	356,519	356,519

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	34,036,384	-	34,036,384	34,036,384
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	882,221	-	882,221	882,221
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	118,960,394	-	118,960,394	118,960,394
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	32,567,529	-	32,567,529	32,567,529
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	102,069,829	-	102,069,829	102,069,829
Փոխառություններ	-	13,341,038	-	13,341,038	13,341,038
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	727,915	-	727,915	727,915

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքները կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 9% մինչև 24% տարեկան:

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

30.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Չցուցակված արժեթղթեր և պարտատոմսեր	-	8,535,931	-	8,535,931
Ընդամենը	-	8,535,931	-	8,535,931

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Չցուցակված արժեթղթեր և պարտատոմսեր	-	5,003,680	-	5,003,680
Ընդամենը	-	5,003,680	-	5,003,680

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող բաժնեմասային ներդրումներ

Բանկի ներդրումների իրական արժեքը չգնանշվող բաժնեմասային արժեթղթերում չի կարող արժանահավատորեն գնահատվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից: Սեփական կապիտալի այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես Ծան. 18-ը:

30.3 Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի հիերարխիա

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	3,366,354	3,366,354
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	-	-	3,366,354	3,366,354
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	-	-	3,366,354	3,366,354

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	3,400,400	3,400,400
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	-	-	3,400,400	3,400,400
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	-	-	3,400,400	3,400,400

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբից մինչև վերջ կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հիմնական միջոցներ	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,400,400**	**3,400,400**
Ֆինանսական արդյունքում ճանաչված արժեզրկումից զուտ օգուտ	**103,881**	**103,881**
Հիմնական միջոցների վերագնահատման ճշտում	**(233,719)**	**(233,719)**
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտ	**45,782**	**45,782**
Առք	**50,010**	**50,010**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,366,354**	**3,366,354**
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	**3,366,354**	**3,366,354**

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հիմնական միջոցներ	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
2014թ. հունվարի 1-ի դրությամբ	2,600,168	2,600,168
Առք	800,232	800,232
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,400,400	3,400,400
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	3,400,400	3,400,400

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է կիրառելով համեմատական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

31 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ — **2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Համախառն պարտավորություններ	Համախառն ակտիվներ, հաշվանցում	Ներկայացված զուտ արժեքներ	Ֆինանսական գործիքներ	Գրավադրված դրամական գրավ	Զուտ
				Չհաշվանցված գումարներ		
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 26)	**(4,002,028)**	**-**	**(4,002,028)**	**4,136,760**	**-**	**134,732**
	(4,002,028)	**-**	**(4,002,028)**	**4,136,760**	**-**	**134,732**

Հազար ՀՀ դրամ — 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Համախառն պարտավորություններ	Համախառն ակտիվներ, հաշվանցում	Ներկայացված զուտ արժեքներ	Ֆինանսական գործիքներ	Գրավադրված դրամական գրավ	Զուտ
				Չհաշվանցված գումարներ		
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 26)	(4,855,326)	-	(4,855,326)	4,984,447	-	129,121
	(4,855,326)	-	(4,855,326)	4,984,447	-	129,121

32 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 33.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթահանրագումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթահանրագումար*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,012,823	-	-	26,012,823	-	-	-	26,012,823
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	735,854	-	-	735,854	-	510,000	510,000	1,245,854
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	17,333,604	17,623,158	21,570,598	56,527,360	44,080,251	9,573,937	53,654,188	110,181,548
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	4,984	-	4,984	4,406,877	-	4,406,877	4,411,861
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	136,988	-	-	136,988	3,999,772	-	3,999,772	4,136,760
	44,219,269	17,628,142	21,570,598	83,418,009	52,486,900	10,083,937	62,570,837	145,988,846
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	368,574	12,974,322	5,264,701	18,607,597	2,635,713	1,012,202	3,647,915	22,255,512
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	12,103,737	47,112,604	44,344,798	103,561,139	360,788	248,797	609,585	104,170,724
Փոխառություններ	1,334	-	-	1,334	2,352,488	5,157,669	7,510,157	7,511,491
Այլ պարտավորություններ	87,639	268,880	-	356,519	-	-	-	356,519
	12,561,284	60,355,806	49,609,499	122,526,589	5,348,989	6,418,668	11,767,657	134,294,246
Զուտ Դիրք	31,657,985	(42,727,664)	(28,038,901)	(39,108,580)	47,137,911	3,665,269	50,803,180	11,694,600
Կուտակված ճեղքվածք	31,657,985	(11,069,679)	(39,108,580)		8,029,331	11,694,600		

Հազար ՀՀ դրամ

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	34,036,384	-	-	34,036,384	-	-	-	34,036,384
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	722,221	-	-	722,221	-	160,000	160,000	882,221
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	10,757,731	5,665,360	28,658,077	45,081,168	62,568,199	11,311,027	73,879,226	118,960,394
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	19,233	-	19,233	-	12,690	12,690	31,923
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	207,839	-	207,839	3,972,281	804,327	4,776,608	4,984,447
	45,516,336	5,892,432	28,658,077	80,066,845	66,540,480	12,288,044	78,828,524	158,895,369
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,784,971	5,494,405	11,535,685	26,815,061	4,891,199	861,269	5,752,468	32,567,529
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	28,850,543	25,072,995	43,093,975	97,017,513	2,648,285	2,404,031	5,052,316	102,069,829
Փոխառություններ	9,159	4,037,704	2,169,625	6,216,488	4,749,700	2,374,850	7,124,550	13,341,038
Այլ պարտավորություններ	505,443	-	222,472	727,915	-	-	-	727,915
	39,150,116	34,605,104	57,021,757	130,776,977	12,289,184	5,640,150	17,929,334	148,706,311
Զուտ Դիրք	6,366,220	(28,712,672)	(28,363,680)	(50,710,132)	54,251,296	6,647,894	60,899,190	10,189,058
Կուտակված ճեղքվածք	6,366,220	(22,346,452)	(50,710,132)		3,541,164	10,189,058		

33 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների և տնտեսության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացների ներդրման և վերահսկման համար:

Ռիսկերի կառավարման տնօրինություն

Ռիսկերի կառավարման տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի գործընթացների իրականացման և կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքագրումը:

Բանկի Ֆինանսական տնօրինություն

Բանկի ֆինանսական տնօրինությունը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Ֆինանսական տնօրինությունը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, բաժնետոմսերի արժեքի փոփոխության ռիսկի, վարկային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

33.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

33.1.1 Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**23,310,254**	**1,982,075**	**720,494**	**26,012,823**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**582,563**	**663,291**	**-**	**1,245,854**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**108,071,176**	**-**	**2,110,372**	**110,181,548**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	**4,411,861**	**-**	**-**	**4,411,861**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	**4,136,760**	**-**	**-**	**4,136,760**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**140,512,614**	**2,645,366**	**2,830,866**	**145,988,846**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	152,292,014	3,515,377	3,087,978	158,895,369

Ակտիվները դասակարգվում են, հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսա-կան կազմակերպություն-ներ	Արդյունաբերություն	Գյուղա-տնտե-սություն	Շինա-րարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**26,012,823**	-	-	-	-	-	-	-	-	-	**26,012,823**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպու-թյունների նկատմամբ	**1,245,854**	-	-	-	-	-	-		-	-	**1,245,854**
Հաճախորդներ ին տրված վարկեր և փոխատվու-թյուններ	-	**9,237,151**	**663,061**	**4,457,434**	**3,731,279**	**22,654,209**	**7,820,458**	**40,245,005**	**13,810,060**	**7,562,891**	**110,181,548**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	**4,411,861**	-	-	-	-	-	-	-	-	-	**4,411,861**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	**4,136,760**	-	-	-	-	-	-	-	-	-	**4,136,760**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**35,807,298**	**9,237,151**	**663,061**	**4,457,434**	**3,731,279**	**22,654,209**	**7,820,458**	**40,245,005**	**13,810,060**	**7,562,891**	**145,988,846**
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,934,975	11,269,732	770,824	4,725,280	3,799,589	24,266,845	7,194,290	43,773,773	15,969,539	7,190,522	158,895,369

33.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Բանկը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ ապրանքների, արդյունաբերության ճյուղերի և երկրների պարտքային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են եռամսյակային կտրվածքով Բանկի Խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի գծով պարտքային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև օրական սահմանաչափերով կապված առևտրային գործարքների հետ, ինչպիսիք են արտարժութային ֆորվարդի պայմանագրերը: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Ֆիզիկական անձանց շարժական գույք,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, այլ հիմնական միջոցները, պաշարները,
- Ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեղթերը:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, պարտքային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	**71,796,633**	74,410,239
Շարժական գույք	**1,482,968**	2,876,351
Շրջանառության մեջ գտնվող ապրանքներ	**277,432**	658,866
Երաշխավորություններ	**6,313,192**	11,126,497
Դրամական միջոցներ	**3,514,323**	3,022,890
Կենցաղային տեխնիկա	**14,083,535**	13,000,124
Առանց ապահովածության	**17,286,660**	18,381,544
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	**114,754,743**	123,476,511

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Բանկը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

33.1.3 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Բանկը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ

տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխատվություններ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		
Արդյունաբերություն	1%	1%
Գյուղատնտեսություն	1%	1%
Շինարարություն	1%	1%
Տրանսպորտ	1%	1%
Առևտուր	1%	1%
Սպասարկում	1%	1%
Սպառողական	1.5%	1%
Հիփոթեքային	1%	1%

Պարտքային ռիսկ պարունակող այլ ֆինանսական ակտիվների գծով 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը կորուստներ չի ունեցել:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Արդյունաբերություն	65,076	4,071	-	633,708	702,855
Գյուղատնտեսություն	4,497	-	-	52,808	57,305
Շինարարություն	5,661	-	-	60,322	65,983
Տրանսպորտ և կապ	25,451	9,178	20,840		55,469
Առևտուր	159,746	140,002	140,264	1,393,896	1,833,908
Սպասարկում	58,628	6,906	21,791	264,183	351,508
Սպառողական	717,100	303,368	244,112	1,735,896	3,000,476
Հիփոթեքային	196,509	128,105	59,053	617,449	1,001,116
Այլ	3,532	-	-	14,368	17,900
Ընդամենը	1,236,200	591,630	486,060	4,772,630	7,086,520

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Արդյունաբերություն	-	-	-	66,178	66,178
Գյուղատնտեսություն	-	-	-	-	-
Շինարարություն	-	-	-	162,000	162,000
Տրանսպորտ և կապ	-	-	-	-	-
Առևտուր	714,087	-	-	-	714,087
Սպասարկում			-	82,891	82,891
Սպառողական	4,130	865	-	2,938	7,933
Հիփոթեքային	-	-	-	-	-
Այլ	-	-	-	-	-
Ընդամենը	718,217	865	-	314,007	1,033,089

33.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

33.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրյուքով ակտիվները 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի իրացման ժամկետների: Կապտիալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների

վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	**+1**	**-**	**-**	**-**	**152,505**	**-**	**152,505**
ԱՄՆ դոլար	**+1**	**(37,239)**	**-**	**-**	**73,113**	**-**	**35,874**
ՀՀ դրամ	**(1)**	**-**	**-**	**-**	**(146,126)**	**-**	**(146,126)**
ԱՄՆ դոլար	**(1)**	**37,239**	**-**	**-**	**(69,744)**	**-**	**(32,505)**

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	-	40	-	104,476	52,059	156,575
ԱՄՆ դոլար	+1	(72,576)	-	-	-	-	(72,576)
ՀՀ դրամ	(1)	-	(40)	-	(101,128)	(47,325)	(148,493)
ԱՄՆ դոլար	(1)	72,576	-	-	-	-	72,576

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Արտարժույթ	**Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս**	**Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը**	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	**+5**	**(164,207)**	+5	(203,705)
Եվրո	**+5**	**(603)**	+5	15,446
ԱՄՆ դոլար	**(5)**	**164,207**	(5)	203,705
Եվրո	**(5)**	**603**	(5)	(15,446)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**16,566,706**	**8,656,970**	**789,147**	**26,012,823**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**510,000**	**735,854**	**-**	**1,245,854**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**44,265,383**	**65,910,489**	**5,676**	**110,181,548**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	**2,533,921**	**1,877,940**	**-**	**4,411,861**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	**4,136,760**	**-**	**-**	**4,136,760**
	68,012,770	**77,181,253**	**794,823**	**145,988,846**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**9,185,436**	**13,068,273**	**1,803**	**22,255,512**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**43,534,814**	**59,805,004**	**830,906**	**104,170,724**
Փոխառություններ	**100**	**7,511,391**	**-**	**7,511,491**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**306,108**	**48,739**	**1,672**	**356,519**
	53,026,458	**80,433,407**	**834,381**	**134,294,246**
Զուտ դիրք 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,986,312**	**(3,252,154)**	**(39,558)**	**11,694,600**
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2015թ. դեկտեմբերի 31-ին	**3,899,778**	**1,181,083**	**-**	**5,080,861**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	64,085,436	94,203,768	606,165	158,895,369
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	50,082,317	97,968,948	655,046	148,706,311
Զուտ դիրք 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,003,119	(3,765,180)	(48,881)	10,189,058
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2014թ. դեկտեմբերի 31-ին	2,936,336	3,772,095	-	6,708,431

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

33.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբէ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 20%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2015, %	2014, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	**21.53**	21.76
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	**272.06**	266.63

Ստորև ներկայացվում է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 32-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ:

Հազար ՀՀ դրամ	2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Պահանջ կամ մեկ ամսից քիչ	**1 – 3 ամիս**	**3 – 12 ամիս**	**1-5 տարի**	**5 տարուց ավելի**	**Ընդամենը**
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**371,538**	**13,187,599**	**5,661,357**	**3,689,998**	**1,518,303**	**24,428,795**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**12,203,220**	**47,887,058**	**47,685,844**	**541,182**	**273,677**	**108,590,981**
Փոխառություններ	**75,420**	**197,563**	**679,121**	**3,763,981**	**5,776,589**	**10,492,674**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**87,639**	**268,880**	**-**	**-**	**-**	**356,519**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**12,737,817**	**61,541,100**	**54,026,322**	**7,995,161**	**7,568,569**	**143,868,969**
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	**400,342**	**451,204**	**1,885,538**	**2,343,777**	**-**	**5,080,861**

Հազար ՀՀ դրամ	2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Պահանջ կամ մեկ ամսից քիչ	1 – 3 ամիս	3 – 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,229,808	6,912,034	12,706,264	6,633,164	1,020,169	37,501,439
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	32,954,178	27,752,288	50,849,689	2,694,502	2,804,031	117,054,688
Փոխառություններ	122,071	4,281,843	2,935,042	8,169,484	2,398,599	17,907,039
Այլ ֆինանսական պարտավորություններ	505,443	-	222,472	-	-	727,915
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	43,811,500	38,946,165	66,713,467	17,497,150	6,222,799	173,191,081
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	5,111,559	288,730	801,809	506,333	-	6,708,431

Բանկի մոտ առկա է էական բացասական կուտակային իրացվելիության ճեղքվածք մինչև մեկ տարվա կտրվածքով: Տես ծանոթագրություն 32-ը: Դա այն բանի հետևանք է, որ 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հիմնական ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ չնայած մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները էական կշիռ են կազմում, վերջին տարիներին ձևավորված փորձը ցույց է տալիս, որ նշված ավանդները հանդիսանում են կայուն և երկարատև ֆինանսավորման աղբյուր:

34 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով 1988թ. Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները և ստորադաս փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	**2015**	2014
Հիմնական կապիտալ	**14,507,633**	16,208,646
Լրացուցիչ կապիտալ	**3,490,367**	5,792,800
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	**17,998,000**	22,001,446
Ռիսկով կշռված ակտիվներ	**148,375,927**	164,928,381
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**12.13%**	13.34%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2015թ. որոշում է կայացրել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանել 30,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

Բանկն իր հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսել է բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում 2016թ. ապրիլ, հուլիս և հոկտեմբեր ամսիներին համապատասխանաբար 5.2 մլրդ դրամ, 2.8 մլրդ դրամ և 4 մլրդ դրամ ծավալներով:

35 Վերլուծություն ըստ սեգմենտների

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 *«Գործառնական սեգմենտներ»* ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2016թ.

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ (այսուհետ՝ «Բանկ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ

ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Մենք որոշել ենք, որ առկա չեն առանցքային աուդիտորական հարցեր, որոնք կցանկանայինք ներակայացնել մեր հաշվետվությունում:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Բանկը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան

աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Բանկի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Բանկի կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Բացի այդ, մենք կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի մենք պահպանել ենք անկախությանը վերաբերող համապատասխան վարքագծի պահանջները, և որում հաղորդում ենք մեր բոլոր կապակցվածությունները և այլ հարցեր, որոնք կարող են խելամտորեն ազդեցություն

ունենալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, համապատասխան պաշտպանվածությունը նման ազդեցությունից:

Այս աուդիտորական եզրակացության ձևավորմանը հանգեցրած աուդիտորական առաջադրանքի պատասխանատուն Արմեն Հովհաննիսյանն է:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն

Արմեն Հովհաննիսյան
Առաջադրանքի պատասխանատու

26 ապրիլի, 2017թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	**21,329,971**	19,714,397
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	**(12,968,927)**	(13,431,362)
Զուտ տոկոսային եկամուտներ		**8,361,044**	6,283,035
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	**1,036,568**	1,334,902
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	**(289,585)**	(257,701)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		**746,983**	1,077,201
Զուտ առևտրային եկամուտ	8	**270,717**	677,989
Այլ եկամուտներ	9	**1,452,759**	1,383,757
Արժեզրկման ծախս	10	**(4,436,968)**	(2,398,395)
Անձնակազմի գծով ծախսեր	11	**(3,128,249)**	(3,070,810)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	**(450,013)**	(412,952)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	**(84,359)**	(80,796)
Այլ ծախսեր	12	**(3,150,583)**	(2,912,720)
Շահույթ/(վնաս) մինչև հարկում		**(418,669)**	546,309
Շահութահարկի գծով ծախս	13	**(24,549)**	(187,828)
Տարվա շահույթ/(վնաս)		**(443,218)**	358,481
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Հիմնական միջոցների վերագնահատում		**1,096,106**	45,782
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		**(219,221)**	(9,157)
		876,885	36,625
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)		**664,809**	(468,167)
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		**(132,962)**	93,633
		531,847	(374,534)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկերից հետո		**1,408,732**	(337,909)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**965,514**	20,572
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ/(վնաս)	14	**(0.00348)**	0.00157

9-ից 66 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	33,547,636	26,012,823
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	3,268,547	1,245,854
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	17	99,004	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	18	118,627,063	110,181,548
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	19	14,399,954	4,411,861
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	28	-	4,136,760
Հիմնական միջոցներ	20	7,651,713	5,165,342
Ոչ նյութական ակտիվներ	21	1,380,101	1,314,048
Կանխավճար շահութահարկի գծով		81,010	284,081
Այլ ակտիվներ	22	6,341,061	5,387,543
Ընդամենը՝ ակտիվներ		185,396,089	158,139,860
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	5,042,688	22,255,512
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	128,012,569	103,611,025
Փոխառություններ	25	13,260,387	8,071,190
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	2,652,531	-
Հետաձգված հարկային պարտավորություն	13	957,978	731,041
Այլ պարտավորություններ	26	626,893	762,000
Ընդամենը՝ պարտավորություններ		150,553,046	135,430,768
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	19,093,378	14,167,947
Էմիսիոն եկամուտ		7,790,481	1,387,422
Գլխավոր պահուստ		426,482	421,851
Այլ պահուստներ		916,048	(492,684)
Չբաշխված շահույթ		6,616,654	7,224,556
Ընդամենը՝ սեփական կապիտալ		34,843,043	22,709,092
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		185,396,089	158,139,860

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 5-ից 66 էջերում, ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2017թ. ապրիլի 26-ին:

Վարդան ԱԹԱՅԱՆ
Վարչության նախագահ

Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

9-ից 66 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրում-ների գծով վերագնա-հատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնա-հատման պահուստներ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ	13,100,700	-	370,137	(539,186)	384,411	7,120,787	20,436,849
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,067,247	1,387,422	-	-	-	-	2,454,669
Հատկացում պահուստին	-	-	51,714	-	-	(51,714)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-		-	-	-	(202,998)	(202,998)
Սեփականատերերի հետ գործարքներ	1,067,247	1,387,422	51,714	-	-	(254,712)	2,251,671
Տարվա շահույթ	-	-	-	-	-	358,481	358,481
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	45,782	-	45,782
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	-	-	-	(468,167)	-	-	(468,167)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	93,633	(9,157)	-	84,476
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(374,534)	36,625	358,481	20,572
Հաշվեկշիռը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,167,947**	**1,387,422**	**421,851**	**(913,720)**	**421,036**	**7,224,556**	**22,709,092**
Բաժնետիրական կապիտալի ավելացում	**4,925,431**	**6,403,059**	**-**	**-**	**-**	**-**	**11,328,490**
Հատկացում պահուստին	**-**	**-**	**4,631**	**-**	**-**	**(4,631)**	**-**
Շահաբաժիններ բաժնետերերին	**-**		**-**	**-**	**-**	**(160,053)**	**(160,053)**
Սեփականատերերի հետ գործարքներ	**4,925,431**	**6,403,059**	**4,631**	**-**	**-**	**(164,684)**	**11,168,437**
Տարվա վնաս	**-**	**-**	**-**	**-**	**-**	**(443,218)**	**(443,218)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատում	**-**	**-**	**-**	**-**	**1,096,106**	**-**	**1,096,106**
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	**-**	**-**	**-**	**664,809**	**-**	**-**	**664,809**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	**-**	**-**	**-**	**(132,962)**	**(219,221)**	**-**	**(352,183)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**-**	**531,847**	**876,885**	**(443,218)**	**965,514**
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**19,093,378**	**7,790,481**	**426,482**	**(381,873)**	**1,297,921**	**6,616,654**	**34,843,043**

9-ից 66 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	**(418,669)**	546,309
Ճշգրտումներ		
Արժեզրկման ծախս	**4,436,968**	2,398,395
Բռնագանձված գույքի արժեզրկումից/(արժեզրկման հակադարձումից) և իրացումից (օգուտներ)/կորուստներ	**(44,451)**	223,174
Հիմնական միջոցների արժեզրկում/(արժեզրկման հակադարձում)	**89,434**	(103,881)
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	**534,372**	493,748
Հիմնական միջոցների օտարումից վնաս	**16,731**	17,021
Ստացվելիք տոկոսներ	**(1,024,021)**	(2,280,884)
Վճարվելիք տոկոսներ	**(303,381)**	495,761
Ածանցյալ գործիքների վերագնահատում	**256,470**	-
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	**(181,453)**	(179,415)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**3,362,000**	1,610,228
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(2,080,268)**	(320,892)
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	**99,004**	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**(14,562,132)**	9,379,240
Այլ ակտիվներ	**2,694,194**	(623,137)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(756)**	(826,458)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**24,521,896**	1,490,851
Այլ պարտավորություններ	**(54,014)**	(62,136)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**13,979,924**	10,647,696
Վճարված շահութահարկ	**53,276**	31
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**14,033,200**	10,647,727
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	**(8,657,556)**	(3,938,810)
Հիմնական միջոցների առք	**(2,031,483)**	(375,118)
Հիմնական միջոցների վաճառք	**85,040**	71,922
Ոչ նյութական ակտիվների առք	**(150,412)**	(140,062)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(10,754,411)**	(4,382,068)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	**13,783,159**	2,454,669
Շահաբաժինների վճարում	**(246,850)**	(500,321)
Ֆինանս. կազմակերպ. վարկերի մարում	**(17,332,058)**	(9,654,080)
Պարտատոմսերի թողարկում	**2,637,137**	-
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների ստացում/(մարում)	**5,543,439**	(6,292,311)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**4,384,827**	(13,992,043)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**7,663,616**	(7,726,384)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	**26,012,823**	34,036,384
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	**(128,803)**	(297,177)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Ծանոթ. 15)	**33,547,636**	26,012,823
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	**20,305,950**	17,765,762
Վճարված տոկոսներ	**(13,272,308)**	(12,935,601)

9-ից 66 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 2001թ. հոկտեմբերի 9-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2001թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N81 արտոնագրային համարով:

2015թ. հունիսի 23-ին համաձայն Բանկի Գրանցման թիվ 0373 վկայականի «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերակազմավորվեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ՝ թողարկելով 14,500,000 հատ բաժնետոմս:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 25 մասնաճյուղերը գտնվում է Երևանում, 18 մասնաճյուղերը՝ ՀՀ տարբեր շրջաններում, 2 մասնաճյուղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և մեկ ներկայացուցչություն ՌԴ Մոսկվա քաղաքում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենց 12 շենք թիվ 53, թիվ 1-5:

2016թ. օգոստոսի 24-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալությունը հաստատել է Յունիբանկի բանկային ավանդների գնահատականի B3/NP, բազային վարկային գնահատականի caa1, կոնտրագենտի ռիսկի գնահատականի B2(cr)/NP(cr) վարկանիշները: Բոլոր վարկանիշների գծով կանխատեսումը կայունից փոխվել է դեպի դրական:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը

տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով:

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով բացառությամբ շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2016թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2016թ-ին ՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Բանկի տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*

- *Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում (ՀՀՄՍ 38 և ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*

- *2012-2014թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով*

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՀՀՄՍ 12 (Փոփոխություններ) «Շահութահարկեր»

ՀՀՄՍԽ-ը թողարկել է *«Չիրացված վնասների համար հետաձգված հարկային ակտիվների ճանաչում»* պարզաբանումը, որը ՀՀՄՍ 12-ում՝ *«Շահութահարկեր»*, կատարում է որոշակի փոփոխություններ: Փոփոխությունները պարզաբանում են, թե ինչպես պետք է հաշվառել իրական արժեքով չափվող պարտքային գործիքներին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները, հատկապես այն դեպքերում, երբ շուկայական տոկոսադրույքի փոփոխությունները նվազեցնում են պարտքային գործիքի իրական արժեքը սկզբնական արժեքից ցածր մակարդակի:

Սույն փոփոխությունները պարզաբանում են հետևյալը.

- այն պարտքային գործիքների գծով չիրացված վնասները, որոնք չափվում են իրական արժեքով, իսկ հարկային առումով՝ սկզբնական արժեքով, առաջացնում են նվազեցվող ժամանակավոր տարբերություններ՝ անկախ նրանից, թե պարտքային գործիքին տիրապետողն ակնկալում է վերականգնել դրա հաշվեկշռային արժեքը՝ այն վաճառելու, թե օգտագործելու միջոցով,

- ակտիվի հաշվեկշռային արժեքը չի սահմանափակում հարկման ենթակա ապագա հավանական շահույթների գնահատումը,

- հարկման ենթակա ապագա շահույթների գնահատումները չեն ներառում նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձումից առաջացող հարկային նվազեցումները,

- ընկերությունը պետք է հաշվի առնի, արդյոք հարկային օրենսդրությունն արգելում է հարկվող շահույթների այն աղբյուրները, որոնց առումով այն կարող է նվազեցումներ կատարել նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հակադարձման մասով: Եթե հարկային օրենսդրությունում չկան այդպիսի արգելքներ, ընկերությունը գնահատում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունը բոլոր այլ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ համատեղ:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2017թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց: Ղեկավարության գնահատմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

ՀՀՄՍԽ-ն վերջերս թողարկել է *ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»* (2014), ներկայացնելով իր նախագծի ավարտը՝ փոխարինելու *ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»*: Նոր ստանդարտը ներկայացնում է ՀՀՄՍ 39-ի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման ուղեցույցի մեծ փոփոխություններ, և ներկայացնում է ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր «սպասվող վարկային կորուստ» մոդելը: ՖՀՄՍ 9-ը տրամադրում է նաև հեջի հաշվառման կիրառման նոր ուղեցույց:

Բանկի ղեկավարությունը դեռ պետք է գնահատի ՖՀՄՍ 9-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա: Նոր ստանդարտը պետք է կիրառվի 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով *ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր»,* և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարբեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Բանկի ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16, Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;

- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»,* նույնպես կիրառվի: Բանկի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման,

ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ
Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է: Շահաբաժիններից եկամուտը ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկման ենթակա չէ:

Զուտ առևտրային եկամուտ
Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական

արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2016թ. դեկտեմբերի 31	2015թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	**483.94**	483.75
ՀՀ դրամ/1 Եվրո	**512.20**	528.69
ՀՀ դրամ/1 ՌՈՒԲ	**7.88**	6.62

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռք բերման օրից 90 օր է, որոնք հեշտությամբ փոխարկելի են հայտնի կանխիկ գումարների, և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

Համաձայն հեջի արդյունավետության, ածանցյալների իրական արժեքի փոփոխությունները, որոնք նախատեսված են որպես դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ, ճանաչվում են այլ համապարփակ եկամուտում և ներառվում են սեփական կապիտալի դրամական միջոցների հոսքերի հեջի պահուստում: Հեջավորման փոխհարաբերության ցանկացած անարդյունավետություն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այն ժամանակ երբ հեջավորված հոդվածը ազդում է շահույթի կամ վնասի վրա, ցանկացած օգուտ կամ վնաս, որը նախկինում ճանաչվել է այլ համապարփակ եկամուտում, սեփական կապիտալից դասակարգվում է շահույթում կամ վնասում և

ներկայացվում է, որպես վերադասակրգման ճշգրտում, այլ համապարփակ եկամուտում: Այնուամենայնիվ, եթե ոչ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում է որպես հեջավորված գործարքի արդյունք, նախկինում այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտը կամ վնասները ներառվում են հեջավորված հոդվածի նախնական չափման մեջ:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝

համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող Ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.8 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա

դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Բանկը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Բանկը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են

Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Բանկը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վերանայված վարկեր
Որտեղ հնարավոր է, Բանկը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ
Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.9 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ
Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,

- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ
Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.10 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.11 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.12 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.13 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքը ներկայացված է իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	60	1.67
Համակարգիչային տեխնիկա	5	20
Կապի և հաղորդակցման միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	7	14.3
Բանկոմատներ	10	10
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով. վարձակալման ժամկետ կամ հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետ: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշված օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.15 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.16 Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են

ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.18 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարումների տարեկան չափը սահմանվում է 5% այդ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ: Վճարումն իրականացվում է Բանկի զուտ շահույթից և/կամ դրա հաշվին ձևավորված պահուստներից:

Բաժնետերերին վճարվող շահաբաժինները վճարվում են հարկված շահույթից և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ հարկման ենթակա չեն:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ
Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստ
Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

4.19 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Բանկի առևտրային գործունեությունը:

4.20 Սեգմենտների ներկայացում

Գործառնական սեգմենտը հանդիսանում է Բանկի բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Բանկի այլ որևէ բաղկացուցիչ մասի հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեգմենտները որոշելիս Բանկի ղեկավարությունը տարանջատում է Բանկի այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեգմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ սեգմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը: Այս ֆինանսական հաշվետվությունների շրջանակներում Բանկի աշխարհագրական սեգմենտները ներկայացված են հիմնվելով գործընկերների գտնվելու վայրի վրա՝ հիմնվելով ավելի շուտ տնտեսական ռիսկի, քան իրավաբանական ռիսկի վրա:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 32):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Ածանցյալ գործիքներ

Ակտիվ շուկայում չհաշվառվող ֆինանսական ածանցյալ գործիքների իրական արժեքները սահմանվում են գնահատման մեթոդների կիրառմամբ: Ածանցյալ գործիքների գնահատումը ներառվում է մեկ արժութային տոկոսադրույքի սվոպի, բազմարժութային տոկոսադրույքի սվոպի գործարքներում և փոխարժեքի ֆորվարդային պայմանագրերում: Այս գործարքների իրական արժեքը սահմանվում է որպես հաստատուն դեբիտորական պարտքերի և լողացող պարտավորության ներկա արժեքների միջև տարբերություն կամ հակառակը: Լողացող պարտավորության ներկա արժեքը սահմանվում է ըստ զրոյական արժեկտրոնային կորից ստացված զեղչային գործոնների: Եթե գնահատման մեթոդները կիրառվում են իրական արժեքը սահմանելու համար, դրանք հաստատվում կամ պարբերաբար վերլուծության են ենթարկվում որակավորված մասնագետների կողմից՝ անկախ առաջացման պայմաններից: Այնքանով, որքանով գործնականում հնարավոր է, մոդելները կիրառում են միայն դիտարկելի տվյալները, այնուամենայնիվ, այնպիսի ոլորտներում, ինչպիսին պարտքային ռիսկն է (ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ պայմանագրային գործընկերոջ), փոփոխականությունները և կոռելյացիաները պահանջում են Ղեկավարության գնահատականը: Այս ապագա դրամական միջոցներից

ցանկացածի գերագնահատումը և թերագնահատումը կարող է պահանջել այս ածանցյալների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 31):

Վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկում

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 30 ծանոթագրությունը:

Բանկի ղեկավարությունը չի վերանայել իր նախորդ գնահատումները, այսինքն չի ապաճանաչել հիմնական միջոցների հետ կապված իր նախկինում գնահատված հետաձգված հարկային պարտավորությունը և շարունակում է կատարել իր հարկային հաշվառումը, ինչպես նախկինում:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	**19,596,435**	17,812,124
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	**1,331,614**	910,778
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	**91,578**	39,957
Հակադարձ ռեպո գործառնություններ	**86,416**	-
Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	**187,066**	951,323
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	**36,862**	-
Ֆակտորինգ	**-**	215
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**21,329,971**	19,714,397
Հաճախորդների հաշիվներ	**10,268,285**	9,738,417
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	**927,321**	1,431,835
Կառավարության վարկեր	**175,932**	47,348
Ռեպո գործառնություններ	**207,360**	599,890
Փոխառություններ	**1,255,391**	1,613,872
Թողարկված պարտատոմսեր	**134,638**	-
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	**12,968,927**	13,431,362

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Դրամարկղային գործառնություններ	**520,944**	892,244
Վճարային քարտերով գործառնություններ	**170,710**	189,909
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	**41,689**	45,133
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	**80,832**	88,545
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	**222,393**	119,071
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	**1,036,568**	1,334,902
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	**95,529**	81,943
Վճարային քարտերով գործառնություններ	**142,538**	143,726
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	**3,410**	4,466
Բորսայական ծառայություններ	**18,420**	9,493
Այլ ծախսեր	**29,688**	18,073
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	**289,585**	257,701

8 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	**594,467**	724,110
Ածանցյալ գործիքներից զուտ վնաս	**(256,470)**	(46,121)
Արժեթղթերով գործառնություններից վնաս	**(67,280)**	-
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**270,717**	677,989

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Ստացված տույժեր և տուգանքներ	**1,105,394**	1,054,899
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	**181,453**	179,415
Բռնագանձված գրավների արժեզրկման հակադարձում	**126,836**	-
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ	**3,730**	-
Հիմնական միոցների արժեքի վերականգնումից օգուտ	**-**	120,003
Այլ եկամուտ	**35,346**	29,440
Ընդամենը այլ եկամուտներ	**1,452,759**	1,383,757

10 Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (ծանոթագրություն 18)	**4,429,112**	2,392,158
Այլ ակտիվներ (ծանոթագրություն 22)	**7,856**	6,237
Ընդամենը ակտիվների արժեզրկման ծախս	**4,436,968**	2,398,395

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	**3,125,380**	3,069,378
Անձնակազմի ուսուցման և այլ ծախսեր	**2,869**	1,432
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**3,128,249**	3,070,810

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	**549,324**	271,418
Գովազդի ծախսեր	**334,651**	299,572
Գործուղման ծախսեր	**19,620**	13,906
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	**129,651**	127,837
Վարձակալության գծով ծախսեր	**669,671**	771,161
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	**412,076**	352,712
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	**88,094**	192,044
Անվտանգության գծով ծախսեր	**58,697**	58,654
Ներկայացուցչական ծախսեր	**113,470**	51,140
Գրասենյակային ծախսեր	**63,922**	68,407
Վճարված տուգանքներ	**1,878**	1,550
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ վնաս	**-**	4,592
Ավանդների ապահովագրություն	**260,989**	179,348
Համակարգչային ծրագրերի սպասարկում	**41,001**	41,001
Ինկասացիոն ծառայություններ	**69,336**	69,336
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ	**89,434**	16,122
Հիմնական միջոցների օտարումից առաջացած կորուստներ	**16,731**	17,021
Բռնագանձված գրավների արժեզրկումից կորուստներ	**-**	183,065
Բռնագանձված գրավների իրացումից կորուստներ	**82,385**	40,109
Այլ ծախսեր	**149,653**	153,725
Ընդամենը այլ ծախսեր	**3,150,583**	2,912,720

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Ընթացիկ հարկի գծով ծախս	**149,795**	98,150
Հետաձգված հարկ	**(125,246)**	89,678
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**24,549**	187,828

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2015թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի/(վնասի) միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	**2016**	**Արդյունավետ դրույքաչափ (%)**	2015	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	**(418,669)**		546,309	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	**(83,734)**	**(20)**	109,262	20
Չհարկվող եկամուտ	**(7,480)**	**(2)**	(24,001)	(4)
Այլ հարկվող եկամուտ	**4,687**	**1**	1,777	-
Չնվազեցվող ծախսեր	**96,073**	**23**	126,531	23
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	**51,294**	**12**	9,224	1
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	**(36,291)**	**(9)**	(34,965)	(6)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**24,549**	**5**	187,828	34

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Ֆինանսական արդյունքներով ճանաչված**	**Սեփական կապիտալում ճանաչված**	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Այլ պարտավորություններ	**52,083**	**10,763**	**-**	**62,846**
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	**229,565**	**-**	**(132,962)**	**96,603**
Այլ ակտիվներ	**36,613**	**(36,613)**	**-**	**-**
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**318,261**	**(25,850)**	**(132,962)**	**159,449**
Պայմանական պարտավորություններ	**(22,642)**	**126**	**-**	**(22,516)**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**(7,030)**	**(2,933)**	**-**	**(9,963)**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**(922,286)**	**152,149**	**-**	**(770,137)**
Հիմնական միջոցներ	**(97,344)**	**1,754**	**(219,221)**	**(314,811)**
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	**(1,049,302)**	**151,096**	**(219,221)**	**(1,117,427)**
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	**(731,041)**	**125,246**	**(352,183)**	**(957,978)**

Հազար ՀՀ դրամ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	63,388	(11,305)	-	52,083
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	135,932	-	93,633	229,565
Այլ ակտիվներ	-	36,613	-	36,613
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	199,320	25,308	93,633	318,261
Պայմանական պարտավորություններ	(20,665)	(1,977)	-	(22,642)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(8,360)	1,330	-	(7,030)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(806,744)	(115,542)	-	(922,286)
Հիմնական միջոցներ	(89,390)	1,203	(9,157)	(97,344)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(925,159)	(114,986)	(9,157)	(1,049,302)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(725,839)	(89,678)	84,476	(731,041)

14 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ/(վնաս)

Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Տարվա շահույթ/(վնաս)	**(443,218)**	358,481
Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ	**(160,053)**	(202,998)
Տարվա շահույթ/(վնաս)՝ նվազեցված արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժիններով	**(603,271)**	155,483
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	**173,320,463**	99,163,757
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը/(վնաս)	**(0.00348)**	0.00157

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	**7,186,662**	7,147,554
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	**23,274,349**	15,849,237
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ	**3,086,625**	3,016,032
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**33,547,636**	26,012,823

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով: Այդ միջոցները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 15,656,074 հազար դրամ (2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,289,553 հազար դրամ 2% և 20% համապատասխանաբար): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,439,644 հազար դրամ գումարով (79%) հաշիվները կենտրոնացված են երկու բանկերում, (2015թ. երկու բանկերում՝ 2,130,517 հազար դրամ (71%)):

2016թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկային պարտավորությունների մարում գրավի սեփականության իրավունքի փոխանցման միջոցով 3,595,345 հազար դրամ գումարով (2015թ.՝ 408,225 հազար դրամ):

16 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	**510,000**	510,000
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	**2,002,157**	-
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններում	**736,357**	735,854
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	**20,033**	-
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**3,268,547**	1,245,854

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Գրավի իրական արժեքը	**Վարկի գումարը**	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական արժեթղթեր	**2,123,227**	**2,002,157**	-	-
Ընդամենը հետգնման պայմանագրերով գնված արժեթղթեր	**2,123,227**	**2,002,157**	-	**-**

17 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**			2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանական գումար	**Ակտիվների իրական արժեք**	**Պարտավ. իրական արժեք**	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք
Վաճառքի համար պահվող ածանցյալներ						
Սվոփ գործարքներ - արտարժույթային	**1,693,790**	**99,004**	**-**	-	-	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	**1,693,790**	**99,004**	**-**	-	-	-

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ,

կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

18 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	**104,462,281**	94,018,528
Օվերդրաֆտներ	**20,108,572**	20,736,215
	124,570,853	114,754,743
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(5,943,790)**	(4,573,195)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**118,627,063**	110,181,548

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերում և փոխատվություններում ներառված հաշվեգրված տոկոսները կազմում են 7,568,148 հազար դրամ (2015թ.՝ 6,576,740 հազար դրամ):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է իրավաբանական անձանց ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 13.65%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 13.28%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 12.79%,Ռուբլով վարկերի համար 15.41%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 21.66%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 14.39%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 12.19%, Ռուբլով վարկերի համար 19.49% (2015թ.՝ իրավաբանական անձանց ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 16.09%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 15.3%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 14.16%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 25.46%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 17.59%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 11.92%, Ռուբլով վարկերի համար 19.49%):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 27,772,226 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 22%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 15 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2015թ՝ 23,339,952 հազար դրամ կամ 20%՝ տրամադրված թվով 15 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 1,308,341 հազար դրամ (2015թ՝ 1,496,852 հազար դրամ):

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արդյունաբերություն	**9,859,654**	9,503,504
Գյուղատնտեսություն	**702,761**	684,061
Շինարարություն	**5,487,155**	4,542,902
Տրանսպորտ	**3,916,190**	4,235,454
Առևտուր	**24,952,250**	23,902,749
Սպասարկում	**8,879,170**	8,888,679
Սպառողական	**47,898,778**	41,191,322
Հիփոթեքային	**12,600,173**	14,162,071
Այլ	**10,274,722**	7,644,001
	124,570,853	114,754,743
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(5,943,790)**	(4,573,195)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	**118,627,063**	110,181,548

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Արդյունա-բերություն	Գյուղատնտե-սություն	Շինարա-րություն	Տրանս-պորտ	Առևտուր	Սպասար-կում	Սպառո-ղական	Հիփոթե-քային	Այլ	**2016** Ընդամենը
2016թ. հունվարի 1 դրությամբ	**266,353**	**21,000**	**85,468**	**504,175**	**1,248,540**	**1,068,221**	**946,317**	**352,011**	**81,110**	**4,573,195**
Տարվա ծախս/(հակադարձում)	**286,698**	**15,763**	**213,934**	**207,889**	**564,577**	**(292,011)**	**2,657,130**	**320,845**	**454,287**	**4,429,112**
Դուրսգրում	**(376,348)**	**(17,791)**	**(4,609)**	**(244,320)**	**(671,174)**	**(248,097)**	**(3,097,785)**	**(454,972)**	**(893)**	**(5,115,989)**
Վերադարձ	**290,029**	**5,405**	**29,548**	**37,015**	**584,870**	**21,367**	**721,727**	**313,149**	**54,362**	**2,057,472**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**466,732**	**24,377**	**324,341**	**504,759**	**1,726,813**	**549,480**	**1,227,389**	**531,033**	**588,866**	**5,943,790**
Անհատական արժեզրկում	**377,928**	**17,643**	**275,797**	**496,938**	**1,529,388**	**502,611**	**215,537**	**301,106**	**502,630**	**4,219,578**
Խմբային արժեզրկում	**88,804**	**6,734**	**48,544**	**7,821**	**197,425**	**46,869**	**1,011,852**	**229,927**	**86,236**	**1,724,212**
	466,732	**24,377**	**324,341**	**504,759**	**1,726,813**	**549,480**	**1,227,389**	**531,033**	**588,866**	**5,943,790**
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	**979,218**	**29,404**	**632,716**	**3,134,141**	**5,217,432**	**4,192,285**	**408,659**	**921,433**	**1,009,624**	**16,524,912**

Հազար ՀՀ դրամ	Արդյունա-բերություն	Գյուղատնտես-ություն	Շինարա-րություն	Տրանս-պորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	2015 Ընդամենը
2015թ. հունվարի 1 դրությամբ	1,012,858	7,786	47,730	410,665	1,079,786	1,001,857	682,390	200,413	72,632	4,516,117
Տարվա ծախս/(հակադարձում)	(817,497)	46,254	(156,456)	179,745	111,710	(21,885)	2,673,973	362,396	13,918	2,392,158
Դուրսգրում	(114,666)	(37,863)	(26,917)	(89,635)	(526,328)	(6,566)	(3,255,347)	(408,053)	(6,288)	(4,471,663)
Վերադարձ	185,658	4,823	221,111	3,400	583,372	94,815	845,301	197,255	848	2,136,583
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	266,353	21,000	85,468	504,175	1,248,540	1,068,221	946,317	352,011	81,110	4,573,195
Անհատական արժեզրկում	181,249	14,399	46,364	494,971	1,035,908	1,049,140	337,451	242,513	4,873	3,406,868
Խմբային արժեզրկում	85,104	6,601	39,104	9,204	212,632	19,081	608,866	109,498	76,237	1,166,327
	266,353	21,000	85,468	504,175	1,248,540	1,068,221	946,317	352,011	81,110	4,573,195
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	993,073	23,999	632,471	3,315,050	2,639,554	6,980,571	600,288	3,212,230	20,303	18,417,539

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պետական ձեռնարկություններ	**323,214**	323,190
Մասնավոր ձեռնարկություններ	**51,531,905**	47,031,132
Ֆիզիկական անձիք	**61,433,218**	56,288,029
Անհատ ձեռնարկատերեր	**11,282,516**	11,112,392
	124,570,853	114,754,743
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	**(5,943,790)**	(4,573,195)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	**118,627,063**	110,181,548

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիփոթեքային	**12,600,173**	14,162,071
Սպառողական	**47,350,203**	39,886,245
Ավտոմեքենաների ձեռքբերման	**537,475**	1,305,077
Այլ	**945,367**	934,636
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	**61,433,218**	56,288,029

Ինչպես նշված է 32 ծանոթագրությունում, 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ այլ ռիսկերը բացահայտված են 35 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը Բանկի հետ կապված անձանց վերաբերյալ բացահայտված է 31 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 34 ծանոթագրությունում:

19 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չգնանշվող ներդրումներ		
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	**12,690**	12,690
ՀՀ պետական պարտատոմսեր	**13,902,603**	4,177,724
Ոչ-պետական պարտատոմսեր	**484,661**	221,447
Ընդամենը ներդրումներ	**14,399,954**	4,411,861

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	**2016**		2015	
	%	**ժամկետ**	%	ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	**5.72-14.94%**	**2018-2028**	6.23-14.10%	2015-2028

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 4,136,760 հազար դրամով իրական արժեքով վաճառվել էին երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով՝ 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել էին որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում (Ծանոթ. 28):

Բոլոր չգնանշված վաճառքի համար մատչելի բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով նվազեցված արժեզրկման կորուստներով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա և Բանկը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

20 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Վարձակալ. հիմն. միջ.գծով կապ. ներդր.	Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Գրասենյակային սարքա-վորում և այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔ						
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	3,400,400	385,217	1,020,942	297,181	2,386,881	7,490,621
Ավելացում	50,010	25,598	71,625	2,198	225,687	375,118
Օտարում	-	(5,753)	(36,697)	(119,852)	(80,699)	(243,001)
Հիմնական միջոցների վերագնահատում	149,663	-	-	-	-	149,663
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(233,719)	-	-	-	-	(233,719)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3,366,354**	**405,062**	**1,055,870**	**179,527**	**2,531,869**	**7,538,682**
Ավելացում	**1,150,991**	**36,811**	**133,312**	**2,526**	**707,843**	**2,031,483**
Օտարում	**(94,314)**	**-**	**(30,759)**	**-**	**(30,092)**	**(155,165)**
Հիմնական միջոցների վերագնահատում	**1,006,672**	**-**	**-**	**-**	**-**	**1,006,672**
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	**(120,938)**	**-**	**-**	**-**	**-**	**(120,938)**
Վերադասակարգում	**299,994**	**(299,994)**	**-**	**-**	**-**	**-**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,608,759**	**141,879**	**1,158,423**	**182,053**	**3,209,620**	**10,300,734**
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ						
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	185,313	87,357	636,889	118,705	1,319,901	2,348,165
Հատկացումներ	57,955	10,715	95,413	32,006	216,863	412,952
Օտարում	-	(5,753)	(36,097)	(69,968)	(42,240)	(154,058)
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(233,719)	-	-	-	-	(233,719)
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,549**	**92,319**	**696,205**	**80,743**	**1,494,524**	**2,373,340**
Հատկացումներ	**68,867**	**6,222**	**129,216**	**26,060**	**219,648**	**450,013**
Օտարում	**(1,813)**	**-**	**(30,236)**	**-**	**(21,345)**	**(53,394)**
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	**(120,938)**	**-**	**-**	**-**	**-**	**(120,938)**
Վերադասակարգում	**56,177**	**(56,177)**	**-**	**-**	**-**	**-**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,842**	**42,364**	**795,185**	**106,803**	**1,692,827**	**2,649,021**
ՄՆԱՑՈՐԴՅԱԻՆ ԱՐԺԵՔ						
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,596,917**	**99,515**	**363,238**	**75,250**	**1,516,793**	**7,651,713**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,356,805	312,743	359,665	98,784	1,037,345	5,165,342

Ակտիվների վերագնահատում

Հողի և շենքերի վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2016թ. դեկտեմբերին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 1,006,672 հազար դրամ գումարով (2015թ՝ 149,663 հազար դրամ): Հողի և շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Եթե հողը և շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 4,512,820 հազար դրամ (2015թ՝ 3,192,114 հազար դրամ):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,203,695 հազար դրամ (2015թ.՝ 1,036,034 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 737,736 հազար դրամ, այդ թվում 18,200 հազ. դրամ՝ շենքեր (2015թ՝ 466,468 հազար դրամ, այդ թվում 17,830 հազ. դրամ՝ շենքեր):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով, (2015թ.՝ նույնպես):

21 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ				
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	922,811	535,272	100,433	1,558,516
Ավելացում	8,027	132,035	-	140,062
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**930,838**	**667,307**	**100,433**	**1,698,578**
Ավելացում	**6,104**	**143,720**	**588**	**150,412**
Օտարում	**-**	**(115)**	**-**	**(115)**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**936,942**	**810,912**	**101,021**	**1,848,875**
ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ				
205թ. հունվարի 1-ի դրությամբ	113,086	133,564	57,084	303,734
Մասհանումներ	58,510	19,898	2,388	80,796
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**171,596**	**153,462**	**59,472**	**384,530**
Մասհանումներ	**56,491**	**25,470**	**2,398**	**84,359**
Օտարում	**-**	**(115)**	**-**	**(115)**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**228,087**	**178,817**	**61,870**	**468,774**
ՄՆԱՑՈՐԴՅԱԻՆ ԱՐԺԵՔ				
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**708,855**	**632,095**	**39,151**	**1,380,101**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	759,242	513,845	40,961	1,314,048

Պայմանագրային պարտավորություններ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումների գծով:

2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտոնագրերում ներառված է 534,750 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարային քարտերով գործառնությունների քլիրինգային

գործընթացի իրականացման համար համապատասխան ծրագրերի արտոնագիրը (2015թ՝ 580,189 հազար դրամ):

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	**488,267**	1,264,949
Ստացվելիք գումարներ	**153,094**	39,996
Այլ ակտիվներ	**564,424**	343,092
	1,205,785	1,648,037
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	**(10,522)**	(16,081)
	1,195,263	1,631,956
Բռնագանձված ակտիվներ	**4,993,452**	3,601,921
Այլ կանխավճարված հարկեր	**-**	1,565
Նյութեր	**96,273**	99,758
Թանկարժեք մետաղներ	**56,073**	52,343
Ընդամենը այլ ակտիվներ	**6,341,061**	5,387,543

Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող բռնագանձված գրավները իրենցից ներկայացնում են անշարժ գույք: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով:

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	9,844
Տարվա ծախս	6,237
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,081**
Տարվա ծախս	**7,856**
Հակադարձում	**(13,415)**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,522**

23 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	**4,217**	84,849
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	**84,011**	47,836
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	**4,006,148**	17,117,304
Ռեպո համաձայնագրերով վարկեր	**-**	4,002,028
Ավանդներ այլ ֆինանասական կազմակերպություններից	**948,312**	1,003,495
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**5,042,688**	22,255,512

2016թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների համար միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը

կազմում է 8.98% (2015թ. 9.79%) և 6.2% ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար (2015թ.՝ 6.8%):

Ֆինանսական կազմակերպություններից ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Վարկերն ունեն հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2015թ. ՝ ոչինչ):

24 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	**6,338,541**	6,536,569
Ժամկետային ավանդներ	**21,520,427**	6,997,688
	27,858,968	13,534,257
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	**6,870,910**	5,614,865
Ժամկետային ավանդներ	**93,282,691**	84,461,903
	100,153,601	90,076,768
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**128,012,569**	103,611,025

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընթացիկ և ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների գծով 15,228,974 հազար դրամ գումարով (2015թ. 7,011,401 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող տաս հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը կազմում է 28,217,786 հազար դրամ (2015թ. 8,724,848 հազար դրամ) կամ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ավանդների ընդհանուր գումարի 22% (2015թ. 9.5%):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2015: ոչինչ):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է իրավաբանական անձանց ՀՀ դրամով պարտավորությունների համար 13.2%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 5.93%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 3.73%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով պարտավորությունների համար 13.27%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 6.24%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 6.6%, (2015թ.՝ իրավաբանական անձանց ՀՀ դրամով պարտավորությունների համար 13.59%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 8.85%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 7.56%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով

պարտավորությունների համար 17.33%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 7.66%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 6.6%):

25 Փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստորադաս փոխառություն ոչ ֆինանսական կազմակերպություններից	**7,714,584**	5,273,785
Վարկեր ՀՀ կառավարությունից	**3,125,813**	559,699
Այլ փոխառություն	**2,419,990**	2,237,706
Ընդամենը փոխառություններ	**13,260,387**	8,071,190

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներառում են վարկեր ստացված Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի «Գյուղական Տարածքների Տնտեսական զարգացման ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով» և «Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի» շրջանակներում իրականացվող ֆինանսավորման նպատակով: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Բանկը ներգրավել է ստորադաս երկարաժամկետ փոխառություն և կարճաժամկետ վերականգնվող փոխառություն Բանկի հետ կապակցված Կազմակերպությունից (տես ծանոթագրություն 31):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կառավարությունից ստացված ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.39%, ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 4.06% (2015.՝ ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.15%, ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 4.06%):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2015: ոչինչ):

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներգրավված փոխառությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 12.87% (2015: 10.28%):

26 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ընթացիկ պարտատոմսեր	**2,652,531**	-
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	**2,652,531**	-

2016թ. ընթացքում թողարկվել են 10,000 դրամ անվանական արժեքով 18,482 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 13.5% տոկոսադրույքով և մինչև 2018թ. մարման ժամկետով:

2016թ. ընթացքում թողարկվել են 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 50,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 8% տոկոսադրույքով և մինչև 2018թ. մարման ժամկետով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

27 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	**155,691**	114,587
Վճարվելիք գումարներ շահաբաժինների գծով	**-**	86,797
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	**214,485**	155,135
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**370,176**	356,519
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	**197,717**	304,350
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	**59,000**	41,596
Ստացված կանխավճարներ	**-**	59,535
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**256,717**	405,481
Ընդամենը այլ պարտավորություններ	**626,893**	762,000

28 Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	Ակտիվ		Պարտավորություն	
	2016	2015	**2016**	2015
Վաճառքի համար մատչելի ներդրումներ (ծանոթ. 19, 23)	**-**	4,136,760	**-**	4,002,028
	-	4,136,760	**-**	4,002,028

29 Սեփական կապիտալ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 19,093,378 հազար դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, վճարված բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 158,923,780 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով և 32,010,000 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով:

2016թ. և 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2016		2015	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	**Բաժնեմասը վճարված կապիտալում**	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում
Ռիպատոնսո Հոլդինգս Լիմիթեդ	**16,805,935**	**88**	-	-
Սֆիկարո Ինվեսթմենթս Լիմիթեդ	**1,231,903**	**6**	-	-
Գլովերի Հոլդինգ էլԹիԴի	**-**	**-**	13,100,700	92
Առոլովա էնթերփրայզիս լիմիթեդ	**708,284**	**4**	509,395	4
Ամիքսոն Բիզնես էլԹիԴի	**-**	**-**	350,000	2
Այլ	**347,256**	**2**	207,852	2
	19,093,378	**100**	14,167,947	100

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

2016թ. Բանկը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 11,328,490 հազար դրամ գումարով, որից էմիսիոն եկամուտը կազմել է 6,403,059 հազար դրամ (2015թ. 2,454,669 հազար դրամ գումարով, որից էմիսիոն եկամուտը կազմել է 1,387,422 հազար դրամ): Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում: Արտոնյալ բաժնետոմսերը ունեն մեկ ձայնի իրավունք միայն Բանկի վերակազմակերպման կամ լուծարման և կանոնադրության մեջ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները սահմանափակող որոշումների իրականացման հարցերում և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում 2016թ. հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է 160,053 հազար դրամ (2015թ.՝ 202,998 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով:

30 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական

գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31 դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային գծերի չօգտագործված մաս	**3,808,689**	3,468,061
Տրամադրված երաշխիքներ	**2,184,384**	1,612,800
Ընդամենը վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	**5,993,073**	5,080,861

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – բանկը որպես վարձակալող

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	**331,816**	662,481
1-5 տարի	**625,668**	1,844,972
5 տարուց ավելի	**46,719**	73,395
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	**1,004,203**	2,580,848

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարները աճել են գլխամասի տարածքի վարձակալության ժամկետի երկարաձգման հետևանքով:

Կապիտալ բնույթի պարտավորություններ

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 20, 21 ծանոթագրություններում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

31 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՍՄ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ

կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող են համարվում ՌԴ գործարարներ Գ. Զաքարյանը և Գ. Պիսկովը՝ հավասարաչափ բաժնեմասերով:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Բաժնետերեր	Ղեկավար անձնակազմը	Բաժնետերեր	Ղեկավար անձնակազմը
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Հունվարի 1-ի դրությամբ, համախառն	**239,451**	**208,518**	246,962	578,709
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	**3,551,055**	**148,155**	2,477	215,676
Տարվա ընթացքում մարված վարկեր	**(139,519)**	**(158,691)**	(9,988)	(585,867)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	**3,650,987**	**197,982**	239,451	208,518
Արժեզրկումից պահուստ	**(36,510)**	**(1,980)**	(2,395)	(2,085)
Դեկտեմբերի 31 դրությամբ	**3,614,477**	**196,002**	237,056	206,433
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	**566,731**	**-**	540,238	-
Տարվա ընթացքում տրամադրված	**53,838,524**	**-**	83,418,690	-
Տարվա ընթացքում մարված	**(54,048,972)**	**-**	(83,392,197)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**356,283**	**-**	566,731	-
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	**874,173**	**-**	890,535	-
Տարվա ընթացքում ստացված	**6,670,222**	**-**	7,623,634	-
Տարվա ընթացքում վճարված	**(7,104,244)**	**-**	(7,639,996)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**440,151**	**-**	874,173	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	**671,531**	**192,156**	362,014	624,226
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	**35,735,685**	**1,609,908**	31,543,725	2,052,752
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	**(35,957,424)**	**(1,560,870)**	(31,234,208)	(2,484,822)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**449,792**	**241,194**	671,531	192,156
Փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	**7,511,491**	**-**	11,466,893	-
Տարվա ընթացքում ստացված փոխառություններ	**43,330,941**	**-**	33,042,171	-
Տարվա ընթացքում վճարված փոխառություններ	**(40,707,858)**	**-**	(36,997,573)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,134,574**	**-**	7,511,491	-

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	**210,410**	**24,052**	37,373	21,109
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	**(1,273,155)**	**(50,748)**	(2,071,004)	(48,983)
Վարկային կորուստների ծախս/(հակադարձում)	**(34,115)**	**105**	(75)	(3,702)
Գործառնական վարձակալության գծով վճարված գումարներ	**(307,473)**	**-**	(312,000)	-
Ապահովագրության գծով վճարներ	**(35,121)**	**-**	(41,923)	-

Բանկի հետ կապված անձանց տարվա ընթացքում տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 15 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 12-21%:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ և պարգևատրումներ	**590,026**	631,517
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	**590,026**	631,517

32 Իրական արժեքի չափումը

Բանկի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը, հողը և շենքերը, այնպես էլ ոչ պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, մասնավորապես հիմնական միջոցների և բռնագանձված ակտիվների գնահատման մեջ: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի ղեկավարության կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Բանկի ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում է հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Բանկի ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

32.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	33,547,636	-	33,547,636	33,547,636
Պահանջներ ֆինանսական կազմեկեպությունների նկատմամբ	-	3,268,547	-	3,268,547	3,268,547
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	118,627,063	-	118,627,063	118,627,063
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	5,042,688	-	5,042,688	5,042,688
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	128,012,569	-	128,012,569	128,012,569
Փոխառություններ	-	13,260,387	-	13,260,387	13,260,387
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,695,156	-	2,695,156	2,652,531
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	370,176	-	370,176	370,176

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	26,012,823	-	26,012,823	26,012,823
Պահանջներ ֆինանսական կազմեկեպությունների նկատմամբ	-	1,245,854	-	1,245,854	1,245,854
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	110,181,548	-	110,181,548	110,181,548
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	22,255,512	-	22,255,512	22,255,512
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	103,611,025	-	103,611,025	103,611,025
Փոխառություններ	-	8,071,190	-	8,071,190	8,071,190
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	356,519	-	356,519	356,519

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքները կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 9% մինչև 24% տարեկան:

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

32.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	**-**	**14,387,264**	**-**	**14,387,264**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**-**	**99,004**	**-**	**99,004**
Ընդամենը	**-**	**14,486,268**	**-**	**14,486,268**

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	8,535,931	-	8,535,931
Ընդամենը	-	8,535,931	-	8,535,931

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող բաժնեմասային ներդրումներ

Բանկի ներդրումների իրական արժեքը չգնանշվող բաժնեմասային արժեթղթերում չի կարող արժանահավատորեն գնահատվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից: Սեփական կապիտալի այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես Ծան. 19-ը:

32.3 Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի հիերարխիա

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	**5,608,759**	**5,608,759**
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	-	-	**5,608,759**	**5,608,759**
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	**-**	**-**	**5,608,759**	**5,608,759**

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	3,366,354	3,366,354
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	-	-	3,366,354	3,366,354
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	-	-	3,366,354	3,366,354

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբից մինչև վերջ կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հիմնական միջոցներ	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,366,354**	**3,366,354**
Ֆինանսական արդյունքում ճանաչված արժեզրկումից զուտ վնաս	**(89,434)**	**(89,434)**
Հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում մաշվածության ճշտում	**(120,938)**	**(120,938)**
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտ	**1,096,106**	**1,096,106**
Ավելացում	**1,450,985**	**1,450,985**
Վաճառք	**(94,314)**	**(94,314)**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,608,759**	**5,608,759**
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	**5,608,759**	**5,608,759**

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Հիմնական միջոցներ	Ընդամենը
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
2015թ. հունվարի 1-ի դրությամբ	3,400,400	3,400,400
Ֆինանսական արդյունքում ճանաչված արժեզրկումից զուտ օգուտ	103,881	103,881
Հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում մաշվածության ճշտում	(233,719)	(233,719)
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտ	45,782	45,782
Ավելացում	50,010	50,010
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,366,354	3,366,354
ԶՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ	3,366,354	3,366,354

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է կիրառելով համեմատական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

33 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ				2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական պարտավորություններ ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ ռեպո համաձայնագրեր (Ծանոթ. 16)	**2,002,157**	-	**2,002,157**	**2,002,157**	-	-

Հազար ՀՀ դրամ

					2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
					Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորու-թյունների ամախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ պարտավորութ-յունների ամախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությու-նում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվութ-յունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Ռեպո համաձայնագրեր (Ծանոթ. 23)	4,002,028	-	4,002,028	4,136,760	-	134,732

34 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 35.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**33,547,636**	**-**	**-**	**33,547,636**	**-**	**-**	**-**	**33,547,636**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**1,145,320**	**40,950**	**-**	**1,186,270**	**1,032,067**	**1,050,210**	**2,082,277**	**3,268,547**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**99,004**	**-**	**-**	**99,004**	**-**	**-**	**-**	**99,004**
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	**18,813,969**	**17,949,658**	**27,732,206**	**64,495,833**	**45,502,662**	**8,628,568**	**54,131,230**	**118,627,063**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	**3,213**	**363,099**	**1,367**	**367,679**	**10,060,199**	**3,972,076**	**14,032,275**	**14,399,954**
	53,609,142	**18,353,707**	**27,733,573**	**99,696,422**	**56,594,928**	**13,650,854**	**70,245,782**	**169,942,204**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**193,962**	**979,024**	**1,252,654**	**2,425,640**	**1,491,262**	**1,125,786**	**2,617,048**	**5,042,688**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**13,244,946**	**49,962,689**	**56,480,483**	**119,688,118**	**3,833,132**	**4,491,319**	**8,324,451**	**128,012,569**
Փոխառություններ	**256,949**	**-**	**10,145,994**	**10,402,943**	**2,857,444**	**-**	**2,857,444**	**13,260,387**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**-**	**8,820**	**-**	**8,820**	**2,643,711**	**-**	**2,643,711**	**2,652,531**
Այլ պարտավորություններ	**305,665**	**64,511**	**-**	**370,176**	**-**	**-**	**-**	**370,176**
	14,001,522	**51,015,044**	**67,879,131**	**132,895,697**	**10,825,549**	**5,617,105**	**16,442,654**	**149,338,351**
Զուտ Դիրք	**39,607,620**	**(32,661,337)**	**(40,145,558)**	**(33,199,275)**	**45,769,379**	**8,033,749**	**53,803,128**	**20,603,853**
Կուտակված ճեղքվածք	**39,607,620**	**6,946,283**	**(33,199,275)**		**12,570,104**	**20,603,853**		

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	*Մինչև 12 ամիս, ենթա-համրա-գումար*	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	*12 ամսից ավելի, ենթա-համրա-գումար*	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,012,823	-	-	26,012,823	-	-	-	26,012,823
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	735,854	-	-	735,854	-	510,000	510,000	1,245,854
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	17,333,604	17,623,158	21,570,598	56,527,360	44,080,251	9,573,937	53,654,188	110,181,548
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	4,984	-	4,984	4,406,877	-	4,406,877	4,411,861
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	136,988	-	-	136,988	3,999,772	-	3,999,772	4,136,760
	44,219,269	17,628,142	21,570,598	83,418,009	52,486,900	10,083,937	62,570,837	145,988,846
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	368,574	12,974,322	5,264,701	18,607,597	2,635,713	1,012,202	3,647,915	22,255,512
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	12,103,737	46,552,905	44,344,798	103,001,440	360,788	248,797	609,585	103,611,025
Փոխառություններ	1,334	559,699	-	561,033	2,352,488	5,157,669	7,510,157	8,071,190
Այլ պարտավորություններ	87,639	268,880	-	356,519	-	-	-	356,519
	12,561,284	60,355,806	49,609,499	122,526,589	5,348,989	6,418,668	11,767,657	134,294,246
Զուտ Դիրք	31,657,985	(42,727,664)	(28,038,901)	(39,108,580)	47,137,911	3,665,269	50,803,180	11,694,600
Կուտակված ճեղքվածք	31,657,985	(11,069,679)	(39,108,580)		8,029,331	11,694,600		

35 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների և տնտեսության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Բանկի Խորհուրդ
Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի Վարչություն
Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացների ներդրման և վերահսկման համար:

Ռիսկերի կառավարման տնօրինություն
Ռիսկերի կառավարման տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի գործընթացների իրականացման և կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքագրումը:

Բանկի Ֆինանսական տնօրինություն
Բանկի ֆինանսական տնօրինությունը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Ֆինանսական տնօրինությունը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Ներքին աուդիտ
Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր
Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Ռիսկի նվազեցում
Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, բաժնետոմսերի արժեքի փոփոխության ռիսկի, վարկային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

35.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

35.1.1 Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**30,584,486**	**2,026,819**	**936,331**	**33,547,636**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**2,604,781**	**663,766**	**-**	**3,268,547**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		**99,004**		**99,004**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**111,176,546**	**-**	**7,450,517**	**118,627,063**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	**14,295,129**	**104,825**	**-**	**14,399,954**
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**158,660,942**	**2,894,414**	**8,386,848**	**169,942,204**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	140,512,614	2,645,366	2,830,866	145,988,846

Ակտիվները դասակարգվում են, հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսա-կան կազմակերպություն-ներ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,547,636	-	-	-	-	-	-	-	-	-	33,547,636
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,268,547	-	-	-	-	-	-		-	-	3,268,547
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	99,004	-	-	-	-	-	-	-	-	-	99,004
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	9,392,922	678,384	5,162,814	3,411,431	23,225,437	8,329,690	46,671,389	12,069,140	9,685,856	118,627,063
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	14,399,954	-	-	-	-	-	-	-	-	-	14,399,954
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**51,315,141**	**9,392,922**	**678,384**	**5,162,814**	**3,411,431**	**23,225,437**	**8,329,690**	**46,671,389**	**12,069,140**	**9,685,856**	**169,942,204**
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	35,807,298	9,237,151	663,061	4,457,434	3,731,279	22,654,209	7,820,458	40,245,005	13,810,060	7,562,891	145,988,846

35.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Բանկը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ ապրանքների, արդյունաբերության ճյուղերի և երկրների պարտքային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են եռամսյակային կտրվածքով Բանկի Խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի գծով պարտքային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև օրական սահմանաչափերով կապված առևտրային գործարքների հետ, ինչպիսիք են արտարժութային ֆորվարդի պայմանագրերը: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Ֆիզիկական անձանց շարժական գույք,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, այլ հիմնական միջոցները, պաշարները,
- Ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեղթղթերը:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, պարտքային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	**72,885,020**	71,796,633
Շարժական գույք	**1,482,968**	1,482,968
Շրջանառության մեջ գտնվող ապրանքներ	**277,432**	277,432
Երաշխավորություններ	**6,313,192**	6,313,192
Դրամական միջոցներ	**3,514,323**	3,514,323
Կենցաղային տեխնիկա	**14,083,535**	14,083,535
Առանց ապահովածության	**26,014,383**	17,286,660
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	**124,570,853**	114,754,743

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն վարկային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Այս դեպքում, հնարավոր կորուստների գումարը, որ Բանկը կարող է կրել, հավասար է չօգտագործված վարկային գծերի գումարին:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

35.1.3 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Բանկը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխատվություններ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		
Արդյունաբերություն	1%	1%
Գյուղատնտեսություն	1%	1%
Շինարարություն	1%	1%
Տրանսպորտ	1%	1%
Առևտուր	1%	1%
Սպասարկում	1%	1%
Սպառողական	2.13%	1.5%
Հիփոթեքային	1%	1%

Պարտքային ռիսկ պարունակող այլ ֆինանսական ակտիվների գծով 2016 և 2015թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը կորուստներ չի ունեցել:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Արդյունաբերություն	529,141	17,314	149,489	3,548,039	4,243,983
Գյուղատնտեսություն	6,491	-	118,658	217,435	342,584
Շինարարություն	-	131,428	-	648,750	780,178
Տրանսպորտ և կապ	23,860	-	-	235437	259,297
Առևտուր	922,821	880,014	390,715	4,706,992	6,900,542
Սպասարկում	44,982	12,798	40,711	1,165,841	1,264,332
Սպառողական	849,411	431,530	242,150	2,080,445	3,603,536
Հիփոթեքային	358,755	97,229	16,322	779,840	1,252,146
Այլ	5,294	-	-	2,723,537	2,728,831
Ընդամենը	**2,740,755**	**1,570,313**	**958,045**	**16,106,316**	**21,375,429**

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31 –ից 60 օր	61 –ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Արդյունաբերություն	65,076	4,071	-	633,708	702,855
Գյուղատնտեսություն	4,497	-	-	52,808	57,305
Շինարարություն	5,661	-	-	60,322	65,983
Տրանսպորտ և կապ	25,451	9,178	20,840		55,469
Առևտուր	159,746	140,002	140,264	1,393,896	1,833,908
Սպասարկում	58,628	6,906	21,791	264,183	351,508
Սպառողական	717,100	303,368	244,112	1,735,896	3,000,476
Հիփոթեքային	196,509	128,105	59,053	617,449	1,001,116
Այլ	3,532	-	-	14,368	17,900
Ընդամենը	1,236,200	591,630	486,060	4,772,630	7,086,520

35.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

35.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրյուքով ակտիվները 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի իրացման ժամկետների: Կապտիալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ — 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

		Կապտիալի զգայունություն					
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	-	-	-	179,801	162,253	342,054
ԱՄՆ դոլար	+1	(24,197)	-	-	-	-	(24,197)
ՀՀ դրամ	(1)	-	-	-	(185,243)	(175,682)	(360,925)
ԱՄՆ դոլար	(1)	24,197	-	-	-	-	24,197

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
		Կապիտալի զգայունություն					
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	-	-	-	152,505	-	152,505
ԱՄՆ դոլար	+1	(37,239)	-	-	73,113	-	35,874
ՀՀ դրամ	(1)	-	-	-	(146,126)	-	(146,126)
ԱՄՆ դոլար	(1)	37,239	-	-	(69,744)	-	(32,505)

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքեներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	**2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**		2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Արտարժույթ	**Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս**	**Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը**	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	**+5**	**(168,715)**	+5	(164,207)
Եվրո	**+5**	**(4,394)**	+5	(603)
ԱՄՆ դոլար	**(5)**	**168,715**	(5)	164,207
Եվրո	**(5)**	**4,394**	(5)	603

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**16,643,379**	**16,334,846**	**569,411**	**33,547,636**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**2,512,358**	**756,189**		**3,268,547**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	**55,253,407**	**60,950,279**	**2,423,377**	**118,627,063**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	**12,029,919**	**2,370,035**	**-**	**14,399,954**
	86,439,063	**80,411,349**	**2,992,788**	**169,843,200**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**2,348,609**	**2,691,932**	**2,147**	**5,042,688**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**58,243,087**	**68,339,138**	**1,430,344**	**128,012,569**
Փոխառություններ	**3,032,333**	**10,228,054**		**13,260,387**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**187,419**	**2,465,112**	**-**	**2,652,531**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**243,300**	**120,280**	**6,596**	**370,176**
	64,054,748	**83,844,516**	**1,439,087**	**149,338,351**
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	**-**	**1,693,790**	**(1,594,786)**	**99,004**
Զուտ դիրք 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,384,315**	**(1,739,377)**	**(41,085)**	**20,603,853**
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2016թ. դեկտեմբերի 31-ին	**4,411,339**	**1,581,734**	**-**	**5,993,073**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	68,012,770	77,181,253	794,823	145,988,846
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	53,026,458	80,433,407	834,381	134,294,246
Զուտ դիրք 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,986,312	(3,252,154)	(39,558)	11,694,600
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2015թ. դեկտեմբերի 31-ին	3,899,778	1,181,083	-	5,080,861

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

35.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբէ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել

իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 20%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2016, %	2015, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	**29.09**	21.53
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	**372.09**	272.06

Ստորև ներկայացվում է 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 32-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ:

Հազար ՀՀ դրամ	2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	**1 – 3 ամիս**	**3 – 12 ամիս**	**1-5 տարի**	**5 տարուց ավելի**	**Ընդամենը**
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**195,491**	**995,118**	**1,347,032**	**2,087,767**	**1,688,679**	**6,314,087**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**13,353,809**	**50,783,993**	**60,735,862**	**5,749,698**	**4,940,451**	**135,563,813**
Փոխառություններ	**387,147**	**347,194**	**11,339,475**	**4,229,017**	**-**	**16,302,833**
Թողարկված պարտքային արժեթղթեր	**18,292**	**57,598**	**167,673**	**2,883,451**	**-**	**3,127,014**
Այլ ֆինանսական պարտավորություններ	**87,639**	**64,511**	**-**	**-**	**-**	**152,150**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**14,042,378**	**52,248,414**	**73,590,042**	**14,949,933**	**6,629,130**	**161,459,897**

Հազար ՀՀ դրամ	2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	**1 – 3 ամիս**	**3 – 12 ամիս**	**1-5 տարի**	**5 տարուց ավելի**	**Ընդամենը**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	**1,693,790**	**-**	**-**	**-**	**-**	**1,693,790**
Արտահոսք	**(1,594,786)**	**-**	**-**	**-**	**-**	**(1,594,786)**
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	**268,019**	**844,599**	**1,625,022**	**3,255,433**	**-**	**5,993,073**

Հազար ՀՀ դրամ	2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 – 3 ամիս	3 – 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	371,538	13,187,599	5,661,357	3,689,998	1,518,303	24,428,795
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	12,203,220	47,887,058	47,685,844	541,182	273,677	108,590,981
Փոխառություններ	75,420	197,563	679,121	3,763,981	5,776,589	10,492,674
Այլ ֆինանսական պարտավորություններ	87,639	268,880	-	-	-	356,519
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	12,737,817	61,541,100	54,026,322	7,995,161	7,568,569	143,868,969
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	400,342	451,204	1,885,538	2,343,777	-	5,080,861

Բանկի մոտ առկա է էական բացասական կուտակային իրացվելիության ճեղքվածք մինչև մեկ տարվա կտրվածքով: Տես ծանոթագրություն 34-ը: Դա այն բանի հետևանք է, որ 2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հիմնական ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ չնայած մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները էական կշիռ են կազմում, վերջին տարիներին ձևավորված փորձը ցույց է տալիս, որ նշված ավանդները հանդիսանում են կայուն և երկարատև ֆինանսավորման աղբյուր:

36 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները և ստորադաս փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2016 և 2015թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	**2016**	2015
Հիմնական կապիտալ	**26,770,726**	14,507,633
Լրացուցիչ կապիտալ	**257,739**	3,490,367
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	**27,028,465**	17,998,000
Ռիսկով կշռված ակտիվներ	**155,514,758**	148,375,927
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**17.38%**	12.13%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը հիմնականում պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2015թ. որոշում է կայացրել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանել 30,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

Հաշվի առնելով Բանկի վարկային պորտֆելի արժեզրկման բացասական տենդենցը՝ կարող է վտանգվել Բանկի տարեկան շահույթի սահմանային մեծության ապահովումը, հետևաբար նաև Բանկի ընդհանուր կապիտալի մեծության ապահովումը, որը գտնվում է սահմանային մակարդակի վրա:

37 Վերլուծություն ըստ սեգմենտների

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 *«Գործառնական սեգմենտներ»* ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2017թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 7

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 9

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 11

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 13

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 15

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2017թ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 39-ի վրա, որտեղ ներկայացված է 2018թ. ապրիլի 13-ից Հայաստանի հանրապետությունում տիրող քաղաքական իրավիճակը և դրա հետ կապված անորոշությունները: Բանկի ղեկավարության գնահատմամբ այս գործընթացները որևէ նշանակալի ազդեցություն չունեն Բանկի գործունեության վրա և հետևաբար ղեկավարության գնահատմամբ չկա որևէ անհրաժեշտություն ճշգրտելու 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա Բանկի ֆինանսական հաշվետվությունները: Մեր կարծիքը չի ձևափոխվում

այս հանգամանքի առնչությամբ:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

- *Վարկերի արժեզրկման գծով պահուստի ձևավորում*

Վարկերի արժեզրկման գծով պահուստը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա: Դատողությունները և ենթադրությունները կարող են վերաբերել արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի գնահատմանը, վարկառուների ֆինանսական վիճակի, ակնկալվող դրամական միջոցների հոսքերի, գրավների արժեքի և իրացման ժամկետների, ինչպես նաև կրած, սակայն դեռևս չբացահայտված վնասների գնահատմանը:

Անհատապես էական վարկերի գծով ձևավորված արժեզրկման պահուստների գնահատման համար մեր կողմից կիրառված ընթացակարգերը ներառել են արժեզրկման բացահայտման և քանակական գնահատման հիմքում ընկած դատողությունների և ենթադրությունների, գրավների շուկայական արժեքների ուսումնասիրությունները, ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսումները և այլն:

Խմբային արժեզրկման արդյունքում ձևավորված պահուստների ճշգրտության գնահատման համար մենք ուսումնասիրել ենք գործող վերահսկողության մեխանիզմների կառուցվածքը և արդյունավետությունը, դուրսգրումների և ժամկետանց օրերի հաշվառումը, խմբային արժեզրկման հաշվարկի հիմքում ընկած մոդելները և ենթադրությունները:

Մեր կողմից նաև կիրառվել են ընթացակարգեր ուղղված ֆինանսական հաշվետվություններում վարկային ռիսկին, արժեզրկման պահուստի ձևավորման ենթադրություններին և դատողություններին վերաբերող բացահայտումների գնահատմանը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի տարեկան հաշվետվությունը 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք տրամադրում կարծիք, որը որևէ այլ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Մեր կողմից իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում

ձեռքբերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Էմիլ Վասիլյանը:

Գագիկ Գյուլբուդաղյան	Էմիլ Վասիլյանը
Տնօրեն	Առաջադրանքի պատասխանատու

27 ապրիլի 2018թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	22,296,742	21,329,971
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(11,805,386)	(12,968,927)
Զուտ տոկոսային եկամուտներ		10,491,356	8,361,044
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	897,588	1,036,568
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(298,538)	(289,585)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		599,050	746,983
Զուտ առևտրային եկամուտ	8	631,274	270,717
Այլ եկամուտներ	9	1,732,594	1,452,759
Արժեզրկման ծախս	10	(5,974,493)	(4,436,968)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(3,480,771)	(3,128,249)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(511,350)	(450,013)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	(88,762)	(84,359)
Այլ ծախսեր	12	(3,148,856)	(3,150,583)
Շահույթ մինչև հարկումը		250,042	(418,669)
Շահութահարկի գծով ծախս	13	(182,440)	(24,549)
Տարվա շահույթ/(վնաս)		67,602	(443,218)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Հիմնական միջոցների վերագնահատում		255,764	1,096,106
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(51,153)	(219,221)
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		204,611	876,885

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ		507,685	664,809
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(101,537)	(132,962)
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում		406,148	531,847
Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		610,759	1,408,732
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		678,361	965,514
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնաս	14	(0.00045)	(0.00348)

15-ից 82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	31,843,954	33,547,636
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	995,550	3,268,547
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	17	3,086	99,004
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	18	135,127,892	118,627,063
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	19	13,592,031	14,399,954
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	28	7,877,164	-
Հիմնական միջոցներ	20	8,193,410	7,651,713
Ոչ նյութական ակտիվներ	21	1,420,274	1,380,101
Կանխավճարներ շահութահարկի գծով		113,435	81,010
Այլ ակտիվներ	22	3,554,675	6,341,061
Ընդամենը՝ ակտիվներ		202,721,471	185,396,089
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	17,250,526	5,042,688
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	128,427,923	128,012,569
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	17	9,993	-
Փոխառություններ	25	14,744,564	13,260,387
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	5,139,360	2,652,531
Հետաձգված հարկային պարտավորություն	13	1,131,722	957,978
Այլ պարտավորություններ	27	656,030	626,893
Ընդամենը՝ պարտավորություններ		167,360,118	150,553,046

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	20,489,653	19,093,378
Էմիսիոն եկամուտ		9,605,638	7,790,481
Գլխավոր պահուստ		426,482	426,482
Այլ պահուստներ		1,493,358	916,048
Չբաշխված շահույթ		3,346,222	6,616,654
Ընդամենը՝ սեփական կապիտալ		35,361,353	34,843,043
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		202,721,471	185,396,089

Ֆինանսական հաշվետվությունները՝ ներկայացված 7-ից 82 էջերում, ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից 2018թ. ապրիլի 27-ին:

Հակոբյան Մեսրոպ
Վարչության նախագահ

Գոհար Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ

15-ից 82 էջերում ներկայացված նշումները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրում-ների գծով վերագնա-հատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնա-հատման պահուստներ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. հունվար 1-ի դրությամբ	14,167,947	1,387,422	421,851	(913,720)	421,036	7,224,556	22,709,092
Բաժնետիրական կապիտալի ավելացում	4,925,431	6,403,059	-	-	-	-	11,328,490
Հատկացում պահուստին	-	-	4,631	-	-	(4,631)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(160,053)	(160,053)
Սեփականատերերի հետ գործարքներ	4,925,431	6,403,059	4,631	-	-	(164,684)	11,168,437
Տարվա վնաս	-	-	-	-	-	(443,218)	(443,218)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	1,096,106	-	1,096,106
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	664,809	-	-	664,809
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(132,962)	(219,221)	-	(352,183)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	531,847	876,885	(443,218)	965,514
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,093,378	7,790,481	426,482	(381,873)	1,297,921	6,616,654	34,843,043

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնա-հատման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնա-հատման պահուստներ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,093,378	7,790,481	426,482	(381,873)	1,297,921	6,616,654	34,843,043
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,396,275	1,815,157	-	-	-	(3,211,432)	-
Հատկացում պահուստին	-		-	-	-	-	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(160,051)	(160,051)
Սեփականատերերի հետ գործարքներ	1,396,275	1,815,157	-	-	-	(3,371,483)	(160,051)
Տարվա շահույթ	-	-	-	-	-	67,602	67,602
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-	255,764	-	255,764
Հիմնական միջոցների իրացումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(33,449)	33,449	-
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	507,685	-	-	507,685
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(101,537)	(51,153)	-	(152,690)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	406,148	171,162	101,051	678,361
Հաշվեկշիռը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	20,489,653	9,605,638	426,482	24,275	1,469,083	3,346,222	35,361,353

15-ից 82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	250,042	(418,669)
Ճշգրտումներ		
Արժեզրկման ծախս	5,974,493	4,436,968
Բռնագանձված ակտիվների արժեզրկման հակադարձումից և իրացումից օգուտներ	(58,295)	(44,451)
Հիմնական միջոցների արժեզրկում	7	89,434
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	600,112	534,372
Հիմնական միջոցների օտարումից վնաս	2,938	16,731
Ստացվելիք տոկոսներ	726,148	(1,034,266)
Վճարվելիք տոկոսներ	(369,819)	(303,381)
Ածանցյալ գործիքների վերագնահատում	(29,751)	256,470
Ոչ առևտրային ակտիվներում և պարտավորություններում արտարժույթի փոխարկումից զուտ (օգուտ)/վնաս	428,837	(181,453)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	7,524,712	3,351,755
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,294,537	(2,080,268)
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	112,087	(355,474)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(24,857,814)	(15,285,569)
Այլ ակտիվներ	4,681,142	2,804,772
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,720,527	(756)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(293,153)	24,521,896
Այլ պարտավորություններ	17,143	(54,014)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(8,800,819)	12,902,342
Վճարված շահութահարկ	(32,425)	53,276
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(8,833,244)	12,955,618

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(6,752,977)	(5,125,305)
Հիմնական միջոցների առք	(968,266)	(2,031,483)
Հիմնական միջոցների վաճառք	168,038	85,040
Ոչ նյութական ակտիվների առք	(128,935)	(150,412)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(7,682,140)	(7,222,160)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	-	11,328,490
Շահաբաժինների վճարում	(160,051)	(246,850)
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում/(մարում)	10,432,480	(17,332,058)
Պարտատոմսերի թողարկում	2,465,424	2,637,137
Այլ երկարաժամկետ վարկերի և փոխառությունների ստացում	1,366,159	5,543,439
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	14,104,012	1,930,158
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(2,411,372)	7,663,616
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	33,547,636	26,012,823
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	707,690	(128,803)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ 15)	31,843,954	33,547,636
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	23,022,890	20,305,950
Վճարված տոկոսներ	(12,175,205)	(13,272,308)

15-ից 82 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 2001թ. հոկտեմբերի 9-ին՝ որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2001թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N81 արտոնագրային համարով:

2015թ. հունիսի 23-ին համաձայն Բանկի Գրանցման թիվ 0373 վկայականի «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ՓԲԸ-ն վերակազմավորվեց «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ՝ թողարկելով 14,500,000 հատ բաժնետոմս:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկն ունի 45 մասնաճյուղ, և մեկ ներկայացուցչություն ՌԴ Մոսկվա քաղաքում որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Չարենց 12 շենք թիվ 53, թիվ 1-5:

2016թ. օգոստոսի 24-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալությունը հաստատել է Յունիբանկի բանկային ավանդների գնահատականի B3/NP, բազային վարկային գնահատականի caa1, կոնտրագենտի ռիսկի գնահատականի B2(cr)/NP(cr) վարկանիշները: Բոլոր վարկանիշների գծով կանխատեսումը կայունից փոխվել է դեպի դրական:

2017թ.-ի մարտի 10-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալությունը վերանայել և բարձրացրել է «Յունիբանկի» վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար: Բազային վարկային գնահատականը /baseline credit assessment (BCA)/սահմանվել է b3, իսկ կոնտրագենտի ռիսկի գնահատականը /long-term Counterparty Risk Assessment (CR Assessment)/՝ B2(cr) մակարդակի վրա: Կանխատեսումը՝ կայուն:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները, և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Տնտեսական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով բացառությամբ, հողի, շինությունների և այլնի, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2017թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2017թ-ին ՝ դրանք որևէ էական ազդեցություն չունեն Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 7 փոփոխություններ)*
- *Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում չիրացված կորուստների համար (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
- *2014-2016թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով (ՖՀՄՍ 12 փոփոխություններ)*

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

ՖՀՄՍ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») վերջնական տարբերակը: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ: Այն փոխարինում է *ՀՀՄՍ 39-ին («Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»)*

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ն թողարկել է Բացասական փոխհատուցմամբ կանխավճարի առանձնահատկությունները (ՖՀՄՍ 9 փոփոխություններ): Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ:

Բանկը կկիրառի 2014թ. հուլիսին թողարկված ՖՀՄՍ 9-ը սկզբնապես 2018թ. հունվարի 1-ին և նույն ամսաթվին կընդունի նաև 2017թ. հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ի թողարկած ՖՀՄՍ 9 փոփոխությունները:

Նոր ստանդարտի կիրառումը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի սեփական կապիտալի սկզբնական մնացորդի վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

Բանկի գնահատումը դեռ նախնական է, քանի որ ոչ բոլոր անցումային աշխատանքներն են ավարտված: Մասնավորապես Բանկը դեռ չի ավարտվել ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան հաշվապահական գործընթացների վերանայման և ներքին վերահսկողության փոփոխությունների աշխատանքները, ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկման մոդելների մշակումը և ամփոփումը, ինչպես նաև կարող են փոփոխվել նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, կիրառված ենթադրությունները, դատողությունները և գնահատման մեթոդները մինչև Բանկը կամփոփի իր առաջին ֆինանսական հաշվետվությունները, որոնք կներառեն սկզբնական կիրառման ամսաթիվը:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգում

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որը արտացոլում է այդ ակտիվների կառավարման համար օգտագործվող բիզնես մոդելը և դրանց հետ կապված դրամական միջոցների հոսքերի առանձնահատկությունները:
ՖՀՄՍ 9-ը ֆինանսական ակտիվների համար ներառում է երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):
Բանկը, բաժնային գործիքների համար, որոնք չեն պահվում առևտրային նպատակներով, սկզբնական ճանաչման պահին կարող է կատարել իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափելու անհակադարձելի ընտրություն: Այս ընտրությունը յուրաքանչյուր ներդրման համար կատարվում է առանձին:
Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվները դասակարգվում են վերը նշված դասերից մեկում: ՖՀՄՍ 9-ի կիրառմամբ դադարեցվում են ՀՀՄՍ 39-ով սահմանվող՝ մինչև մարման ժամկետը պահվող, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի և

իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների դասակարգումները:

ՖՀՄՍ 9-ը կանդրադառնա 01 հունվարի 2018թ-ի դրությամբ պահվող ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա հետևյալ կերպ.

- Բանկերին և հաճախորդներին տրված վարկերը, որոնք ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված են որպես վարկեր և դեբիտորական պարտքեր և չափվում են ամորտիզացված արժեքով, համաձայն ՖՀՄՍ 9-ի ընդհանուր առմամբ նույնպես կչափվեն ամորտիզացված արժեքով,
- ՀՀՄՍ 39-ի համաձայն վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքները, համաձայն ՖՀՄՍ 9-ի կչափվեն ամորտիզացված արժեքով, իրականան արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) կամ իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL)՝ կախված կոնկրետ հանգամանքներից:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դասակարգման և չափման գնահատումը պարտադիր չէ, որ կներկայացնի ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա այնպես, ինչպես կլինի 2018թ-ի հունվարի 1-ին, քանի որ ՖՀՄՍ 9-ը պահանջում է, որ բիզնես մոդելի գնահատումը կատարվի սկզբնական կիրառման օրվա դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա, որը Բանկի համար հանդիսանալու է 2018թ-ի հունվարի 1-ը:

ՖՀՄՍ 9-ը հիմնականում պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման համար ՀՀՄՍ 39-ի ներկա պահանջները:

Այնուամենայնիվ, համաձայն ՀՀՄՍ 39-ի ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները սահմանված իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով (FVTPL-ով)՝ ճանաչվում են շահույթ և վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն իրական արժեքի այդ փոփոխությունները հիմնականում կներկայացվեն հետևյալ կերպ.

- Պարտավորության սեփական վարկային ռիսկին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը կներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (OCI), և
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը կներկայացվի շահույթ և վնասում:

Ֆինանսական ակտիվների, վարկերի տրամադրման պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի «կրած կորուստների» մոդելը՝ ապագայի վրա հիմնված «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր արժեզրկման մոդելի կիրառումը Բանկից կպահանջի զգալի մասնագիտական դատողություններ, թե ինչպես են տնտեսական գործոնների փոփոխություններն ազդում հավանականությամբ կշռված ակնկալվող պարտքային կորուստների վրա:

Բանկը ակնկալվող պարտքային կորուստների պահուստ կճանաչի ստորև նշված այն ֆինանսական գործիքների գծով, որոնք չեն հանդիսանում իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով հաշվառվող.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ,
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր,
- պայմանագրային ակտիվներ,
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ,
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր:

ՖՀՄՍ 9-ի համաձայն բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները բարդ են և կպահանջեն ղեկավարության դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, հատկապես հետևյալ ոլորտներում.

- գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էական է աճել,
- ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մեջ կանխատեսվող մակրոտնտեսական տեղեկատվության ընդգրկում,
- դեֆոլտի սահմանում:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման հիմնական մուտքային տարրերն են հանդիսանալու հետևյալ փոփոխականները.

- դեֆոլտի հավանականություն (PD),
- դեֆոլտի դեպքում վնասի գործակից (LGD),
- դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD):

Բանկը այս ցուցանիշները կստանա ներքին վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից, որոնք օգտագործվում են կարգավորող մոդելներում: Կանխատեսվող տեղեկատվությունը արտացոլեու համար՝ դրանք կճշգրտվեն:

ՖՀՄՍ 9-ի ուժի մեջ մտնելու հետ կապված Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ամենաէական ազդեցությունն ակնկալվում է, որ կլինի արժեզրկման նոր պահանջների հետևանքով: ՖՀՄՍ 9-ի նոր արժեզրկման մոդելի կիրառումը կհանգեցնի ֆինանսական գործիքների համար արժեզրկումից կորուստների ավելացմանը և փոփոխականությանը: Արժեզրկման նոր պահանջները առավել մեծ ազդեցություն կունենան երկարաժամկետ չապահովված վարկային պրոդուկտների, ինչպիսիք են օվերդրաֆտներն ու վարկային քարտերը, կորուստների պահուստի վրա:

Անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները հիմնականում կկիրառվեն հետադարձ, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

- Բանկը օգտվում է ընտրության առավելությունից, որը թույլ է տալիս չվերահաշվարկել նախորդ ժամանակաշրջանների համեմատական տվյալները ֆինանսական գործիքների դասակարգման և գնահատման (ներառյալ արժեզրկման) փոփոխությունների առումով: ՖՀՄՍ 9-ի ընդունման արդյունքում առաջացող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքների տարբերությունները հիմնականում ճանաչվելու են չբաշխված շահույթում և պահուստներում 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ:
- Հետևյալ գնահատումները պետք է կատարվեն այն փաստերի և հանգամանքների հիման վրա, որոնք առկա են սկզբնական կիրառման օրվանից.

- այն բիզնես մոդելի որոշումը, որի շրջանակում պահվում է ֆինանսական ակտիվը,
- իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL) որոշ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ նախկին կայացրած որոշումների չեղարկում և նոր որոշումների կայացում,

Եթե պարտքային գործիքները 2018թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեն ցածր վարկային ռիսկ, ապա Բանկը որոշելու է, որ վարկային ռիսկը էական չի աճել սկզբնական ճանաչումից հետո:

ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով *ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր»,* և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարբեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման

իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Բանկի ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16, Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Միևնույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է նոր բացահայտման պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»,* նույնպես կիրառվի: Բանկի ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այլ ստանդարտներ

Հետևյալ փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները զգալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- 2014-2016թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-ՖՀՄՍ 1 և ՀՀՄՍ 28 փոփոխություններ (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ» (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է: Շահաբաժիններից եկամուտը ՀՀ հարկային օրենսդրությամբ հարկման ենթակա չէ:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2017թ. դեկտեմբերի 31	2016թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	484.10	483.94
ՀՀ դրամ/1 Եվրո	580.10	512.20
ՀՀ դրամ/1 ՌՈՒԲ	8.40	7.88

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների

գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.5 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն

ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են՝ ըստ հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են

շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

Համաձայն հեջի արդյունավետության, ածանցյալների իրական արժեքի փոփոխությունները, որոնք նախատեսված են որպես դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ, ճանաչվում են այլ համապարփակ եկամուտում և ներառվում են սեփական կապիտալի դրամական միջոցների հոսքերի հեջի պահուստում: Հեջավորման փոխհարաբերության ցանկացած անարդյունավետություն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այն ժամանակ երբ հեջավորված հոդվածը ազդում է շահույթի կամ վնասի վրա, ցանկացած օգուտ կամ վնաս, որը նախկինում ճանաչվել է այլ համապարփակ եկամուտում, սեփական կապիտալից դասակարգվում է շահույթում կամ վնասում և ներկայացվում է, որպես վերադասակրգման ճշգրտում, այլ համապարփակ եկամուտում: Այնուամենայնիվ, եթե ոչ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում է որպես հեջավորված գործարքի արդյունք, նախկինում այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտը կամ վնասները ներառվում են հեջավորված հոդվածի նախնական չափման մեջ:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ռիսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ռիսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագիրը չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական միջոցների հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական միջոցների հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող Ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.8 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ

իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա:

Բանկը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Բանկը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական միջոցների հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական միջոցների հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝

փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Բանկը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Բանկը փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Ղեկավարությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեզրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամուտներից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված կապիտալ գործիքների արժեզրկումից կորուստների հակադարձումը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի ճանաչվում, այլ հաշվառվում է կապիտալի առանձին բաժնում, որպես՝ այլ համապարփակ եկամուտ: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.9 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրս գրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.10 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.11 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.12 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.13 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքը ներկայացված է իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	60	1.67
Համակարգչային տեխնիկա	5	20
Կապի և հաղորդակցման միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	7	14.3
Բանկոմատներ	10	10
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանանչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշված օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.15 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.16 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքներ տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկային գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երաշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.18 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարումների տարեկան չափը սահմանվում է 5% այդ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ: Վճարումն իրականացվում է Բանկի զուտ շահույթից և/կամ դրա հաշվին ձևավորված պահուստներից:

Բաժնետերերին վճարվող շահաբաժինները վճարվում են հարկված շահույթից և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն՝ հարկման ենթակա չեն:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

4.19 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Բանկի առևտրային գործունեությունը:

4.20 Սեգմենտների ներկայացում

Գործառնական սեգմենտը հանդիսանում է Բանկի բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Բանկի այլ որևէ բաղկացուցիչ մասի հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեգմենտները որոշելիս Բանկի ղեկավարությունը տարանջատում է Բանկի այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեգմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ սեգմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը: Այս ֆինանսական հաշվետվությունների շրջանակներում Բանկի աշխարհագրական սեգմենտները ներկայացված են հիմնվելով գործընկերների գտնվելու վայրի վրա՝ հիմնվելով ավելի շուտ տնտեսական ռիսկի, քան իրավաբանական ռիսկի վրա:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից

ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 32):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Ածանցյալ գործիքներ

Ակտիվ շուկայում չհաշվառվող ֆինանսական ածանցյալ գործիքների իրական արժեքները սահմանվում են գնահատման մեթոդների կիրառմամբ: Ածանցյալ գործիքների գնահատումը ներառվում է մեկ արժութային տոկոսադրուքի սվոպի, բազմարժութային տոկոսադրույքի սվոպի գործարքներում և փոխարժեքի ֆորվարդային պայմանագրերում: Այս գործարքների իրական արժեքը սահմանվում է որպես հաստատուն դեբիտորական պարտքերի և լողացող պարտավորության ներկա արժեքների միջև տարբերություն կամ հակառակը: Լողացող պարտավորության ներկա արժեքը սահմանվում է ըստ զրոյական արժեկտրոնային կորից ստացված զեղչային գործոնների: Եթե գնահատման մեթոդները կիրառվում են իրական արժեքը սահմանելու համար, դրանք հաստատվում կամ պարբերաբար վերլուծության են ենթարկվում որակավորված մասնագետների կողմից՝ անկախ առաջացման պայմաններից: Այնքանով, որքանով գործնականում հնարավոր է, մոդելները կիրառում են միայն դիտարկելի տվյալները,

այնուամենայնիվ, այնպիսի ոլորտներում, ինչպիսին պարտքային ռիսկն է (ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ պայմանագրային գործընկերոջ), փոփոխականությունները և կոռելյացիաները պահանջում են Ղեկավարության գնահատականը: Այս ապագա դրամական միջոցներից ցանկացածի գերագնահատումը և թերագնահատումը կարող է պահանջել այս ածանցյալների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 31):

Վարկերի և այլ փոխատվությունների արժեզրկում

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք առկա են արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներ: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 30 ծանոթագրությունը:

Բանկի ղեկավարությունը չի վերանայել իր նախորդ գնահատումները, այսինքն չի ապաճանաչել հիմնական միջոցների հետ կապված իր նախկինում գնահատված հետաձգված հարկային պարտավորությունը և շարունակում է կատարել իր հարկային հաշվառումը, ինչպես նախկինում:

Կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, երբ դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ: Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ: Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսերի գնի փոփոխականությունը: Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, երբ առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում:

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	19,787,690	19,596,435
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	2,067,391	1,331,614
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	33,641	91,578
Հակադարձ ռեպո գործառնություններ	125,646	86,416
Անհատապես արժեզրկված ակտիվների գծով հաշվեգրված տոկոսներ	266,106	187,066
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	16,268	36,862
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	22,296,742	21,329,971
Հաճախորդների հաշիվներ	9,553,380	10,268,285
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	431,511	927,321
Կառավարության վարկեր	325,569	175,932
Ռեպո գործառնություններ	37,482	207,360
Փոխառություն	1,206,733	1,255,391
Թողարկված պարտատոմսեր	250,711	134,638
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	11,805,386	12,968,927

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Դրամարկղային գործառնություններ	433,879	520,944
Վճարային քարտերով գործառնություններ	200,476	170,710
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	16,522	41,689
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	99,975	80,832
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	146,736	222,393
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	897,588	1,036,568
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	70,300	95,529
Վճարային քարտերով գործառնութոյններ	181,735	142,538
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	6,447	3,410
Բորսայական ծառայություններ	13,638	18,420
Այլ ծախսեր	26,418	29,688
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	298,538	289,585

8 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	601,523	594,467
Ածանցյալ գործիքներից զուտ օգուտ/(վնաս)	29,751	(256,470)
Արժեթղթերով գործառնություններից վնաս	-	(67,280)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	631,274	270,717

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ստացված տույժեր և տուգանքներ	1,273,075	1,105,394
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ	-	181,453
Բռնագանձված գրավների արժեզրկման հակադարձում	93,148	126,836
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ	7,121	3,730
Եկամուտներ վարձակալության տրված ակտիվից	341,248	-
Այլ եկամուտ	18,002	35,346
Ընդամենը այլ եկամուտներ	1,732,594	1,452,759

10 Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (ծանոթագրություն 18)	5,940,569	4,429,112
Այլ ակտիվներ (ծանոթագրություն 22)	33,924	7,856
Ընդամենը ակտիվների արժեզրկման ծախս	5,974,493	4,436,968

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	3,477,720	3,125,380
Անձնակազմի ուսուցման և այլ ծախսեր	3,051	2,869
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	3,480,771	3,128,249

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	594,812	549,324
Գովազդի ծախսեր	242,762	334,651
Գործուղման ծախսեր	12,453	19,620
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	150,716	129,651
Վարձակալության գծով ծախսեր	462,856	669,671
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	389,813	412,076
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	428,837	-
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	31,813	88,094
Անվտանգության գծով ծախսեր	53,869	58,697
Ներկայացուցչական ծախսեր	50,892	113,470
Գրասենյակային ծախսեր	87,439	63,922
Վճարված տուգանքներ	2,118	1,878
Ավանդների ապահովագրություն	333,306	260,989
Համակարգչային ծրագրերի սպասարկում	44,640	41,001
Ինկասացիոն ծառայություններ	67,948	69,336
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ	7	89,434
Հիմնական միջոցների օտարումից առաջացած կորուստներ	2,938	16,731
Բռնագանձված գրավների իրացումից կորուստներ	34,853	82,385
Այլ ծախսեր	156,784	149,653
Ընդամենը այլ ծախսեր	3,148,856	3,150,583

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ընթացիկ հարկի գծով ծախս	161,386	149,795
Հետաձգված հարկ	21,054	(125,246)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	182,440	24,549

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի/(վնասի) միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2017	Արդյունավետ դրույքաչափ (%)	2016	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	250,042		(418,669)	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	50,008	20	(83,734)	(20)
Չհարկվող եկամուտներ	(26,991)	(10)	(7,480)	(2)
Այլ հարկվող եկամուտ	2,186	1	4,687	1
Չնվազեցվող ծախսեր	65,520	26	96,073	23
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	5,950	2	51,294	12
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	85,767	34	(36,291)	(9)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	182,440	73	24,549	5

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	62,846	10,374	-	73,220
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	96,603	-	(101,537)	(4,934)
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	159,449	10,374	(101,537)	68,286
Պայմանական պարտավորություններ	(22,516)	2,555	-	(19,961)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(9,963)	(11,411)	-	(21,374)
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ	(770,137)	(35,345)	-	(805,482)
Հիմնական միջոցներ	(314,811)	12,773	(51,153)	(353,191)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(1,117,427)	(31,428)	(51,153)	(1,200,008)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(957,978)	(21,054)	(152,690)	(1,131,722)

Հազար ՀՀ դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	52,083	10,763	-	62,846
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր	229,565	-	(132,962)	96,603
Այլ ակտիվներ	36,613	(36,613)	-	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	318,261	(25,850)	(132,962)	159,449
Պայմանական պարտավորություններ	(22,642)	126	-	(22,516)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(7,030)	(2,933)	-	(9,963)
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ	(922,286)	152,149	-	(770,137)
Հիմնական միջոցներ	(97,344)	1,754	(219,221)	(314,811)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(1,049,302)	151,096	(219,221)	(1,117,427)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(731,041)	125,246	(352,183)	(957,978)

14 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնաս

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Տարվա շահույթ/(վնաս)	67,602	(443,218)
Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժիններ	(160,051)	(160,053)
Տարվա վնաս՝ նվազեցված արտոնյալ բաժնետոմսերի շահաբաժիններով	(92,449)	(603,271)
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	203,366,365	173,320,463
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային վնաս	(0.0004546)	(0.00348)

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	7,690,879	7,186,662
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	20,879,961	23,274,349
Թղթակցային հաշիվներ այլ բանկերում	3,273,114	3,086,625
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,843,954	33,547,636

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով: Այդ միջոցները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 14,638,272 հազար դրամ (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 15,656,074 հազար դրամ 2% և 18% համապատասխանաբար): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,202,814 հազար դրամ գումարով (98%) հաշիվները կենտրոնացված են երկու բանկերում, (2016թ. երկու բանկերում՝ 2,439,644 հազար դրամ (79%)):

2017թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկային պարտավորությունների մարում գրավի սեփականության իրավունքի փոխանցման միջոցով 1,892,940 հազար դրամ գումարով (2016թ.՝ 3,595,345 հազար դրամ):

16 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	210,000	510,000
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	-	2,002,157
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններում	736,930	736,357
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	48,620	20,033
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	995,550	3,268,547

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական արժեթղթեր	-	-	2,123,227	2,002,157
Ընդամենը հետգնման պայմանագրերով գնված արժեթղթեր	-	-	2,123,227	2,002,157

17 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանա-կան գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք	Պայմանա-կան գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավ. իրական արժեք
Վաճառքի համար պահվող ածանցյալներ						
Սվոփ գործարքներ-արտարժութային	2,770,514	3,086	9,993	1,693,790	99,004	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	2,770,514	3,086	9,993	1,693,790	99,004	-

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

18 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր	118,352,092	104,462,281
Օվերդրաֆտներ	22,532,684	20,108,572
	140,884,776	124,570,853
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(5,756,884)	(5,943,790)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	135,127,892	118,627,063

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է իրավաբանական անձանց ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 13.49%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 12.32%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 12.64%,Ռուբլով վարկերի համար 12.30%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 17.82%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 13.25%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 11.14%, Ռուբլով վարկեր՝ առկա չեն (2016թ.՝ իրավաբանական անձանց ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 13.65%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 13.28%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 12.79%, Ռուբլով վարկերի համար 15.41% ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար 21.66%, ԱՄՆ դոլարով վարկերի համար 14.39%, Եվրո արժույթով տրամադրված վարկերի համար 12.19%, Ռուբլով վարկերի համար 19.49%):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 34,868,710 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 25%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 13 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2016թ՝ 27,772,226 հազար դրամ կամ 22%՝ տրամադրված թվով 15 վարկառուների և նրանց հետ

փոխկապակցված անձանց): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 560,441 հազար դրամ (2016թ՝ 1,308,341 հազար դրամ):

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արդյունաբերություն	8,591,135	9,859,654
Գյուղատնտեսություն	547,754	702,761
Շինարարություն	9,426,511	5,487,155
Տրանսպորտ	5,851,808	3,916,190
Առևտուր	24,403,124	24,952,250
Սպասարկում	8,073,613	8,879,170
Սպառողական	55,631,593	47,898,778
Հիփոթեքային	11,871,486	12,600,173
Այլ	16,487,752	10,274,722
	140,884,776	124,570,853
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(5,756,884)	(5,943,790)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	135,127,892	118,627,063

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

										2017
Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
2017թ. հունվարի 1 դրությամբ	466,732	24,377	324,341	504,759	1,726,813	549,480	1,227,389	531,033	588,866	5,943,790
Տարվա ծախս/ (հակադարձում)	(254,322)	(25,845)	156,575	(157,259)	1,180,917	68,234	5,486,389	(355,085)	(159,035)	5,940,569
Դուրսգրում	(971,931)	-	(233,847)	(141,650)	(1,633,458)	(124,905)	(5,332,228)	(314,234)	(17,160)	(8,769,413)
Վերադարձ	1,077,422	6,946	34,674	21,296	151,971	204,742	738,650	257,001	149,236	2,641,938
2017թ. դեկտմբերի 31-ի դրությամբ	317,901	5,478	281,743	227,146	1,426,243	697,551	2,120,200	118,715	561,907	5,756,884

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
										2017
Անհատական արժեզրկում	239,313	-	195,926	119,786	1,110,306	651,500	185,451	-	406,382	2,908,664
Խմբային արժեզրկում	78,588	5,478	85,817	107,360	315,937	46,051	1,934,749	118,715	155,525	2,848,220
	317,901	5,478	281,743	227,146	1,426,243	697,551	2,120,200	118,715	561,907	5,756,884
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	732,359	-	844,776	201,264	3,340,650	3,468,515	1,888,572	-	935,271	11,411,407

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
										2016
2016թ. հունվարի 1 դրությամբ	266,353	21,000	85,468	504,175	1,248,540	1,068,221	946,317	352,011	81,110	4,573,195
Տարվա ծախս/ (հակադարձում)	286,698	15,763	213,934	207,889	564,577	(292,011)	2,657,130	320,845	454,287	4,429,112
Դուրսգրում	(376,348)	(17,791)	(4,609)	(244,320)	(671,174)	(248,097)	(3,097,785)	(454,972)	(893)	(5,115,989)
Վերադարձ	290,029	5,405	29,548	37,015	584,870	21,367	721,727	313,149	54,362	2,057,472
2016թ. դեկտմբերի 31-ի դրությամբ	466,732	24,377	324,341	504,759	1,726,813	549,480	1,227,389	531,033	588,866	5,943,790

Հազար ՀՀ դրամ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեքային	Այլ	Ընդամենը
										2016
Անհատական արժեզրկում	377,928	17,643	275,797	496,938	1,529,388	502,611	215,537	301,106	502,630	4,219,578
Խմբային արժեզրկում	88,804	6,734	48,544	7,821	197,425	46,869	1,011,852	229,927	86,236	1,724,21
	466,732	24,377	324,341	504,759	1,726,813	549,480	1,227,389	531,033	588,866	5,943,790
Անհատապես արժեզրկված վարկերի համախառն գումար (մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը)	979,218	29,404	632,716	3,134,141	5,217,432	4,192,285	408,659	921,433	1,009,624	16,524,912

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պետական ձեռնարկություններ	824,858	323,214
Մասնավոր ձեռնարկություններ	56,711,773	51,531,905
Ֆիզիկական անձիք	71,422,427	61,433,218
Անհատ ձեռնարկատերեր	11,925,718	11,282,516
	140,884,776	124,570,853
Արժեզրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(5,756,884)	(5,943,790)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	135,127,892	118,627,063

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիփոթեքային	11,871,486	12,600,173
Սպառողական	55,289,992	47,350,203
Ավտոմեքենաների ձեռքբերման	340,104	537,475
Այլ	3,920,845	945,367
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր (համախառն)	71,422,427	61,433,218

Ինչպես նշված է 32 ծանոթագրությունում, 2017թ. դեկտեմբերի 31-ի և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Վարկային պորտֆելին ներհատուկ այլ ռիսկերը բացահայտված են 35 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը փոխկապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 31 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 34 ծանոթագրությունում:

19 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չգնանշվող ներդրումներ		
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	21,460	12,690
ՀՀ պետական պարտատոմսեր	12,168,958	13,902,603
Ոչ-պետական պարտատոմսեր	1,401,613	484,661
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ	13,592,031	14,399,954

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Չգնանշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	5.72-14.94%	2018-2028	5.72-14.94%	2018-2028

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 7,877,164 հազար դրամ իրական արժեքով վաճառվել են երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով՝ 2 ամիսը չգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել են որպես հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ առանձին տողում (Ծանոթ. 28):

Բոլոր չգնանշված վաճառքի համար մատչելի բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով նվազեցված արժեզրկման կորուստներով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա և Բանկը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

20 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Վարձակալ. հիմն. միջ. գծով կապ. ներդր.	Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Գրասենյակային սարքավորում և այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք						
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	3,366,354	405,062	1,055,870	179,527	2,531,869	7,538,682
Ավելացում	1,150,991	36,811	133,312	2,526	707,843	2,031,483
Օտարում	(94,314)	-	(30,759)	-	(30,092)	(155,165)
Վերագնահատում	1,006,672	-	-	-	-	1,006,672
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(120,938)	-	-	-	-	(120,938)
Վերադասակարգում	299,994	(299,994)	-	-	-	-
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,608,759	141,879	1,158,423	182,053	3,209,620	10,300,734
Ավելացում	97,905	106,637	93,584	66,716	603,424	968,266
Օտարում	(70,002)	(1,276)	(43,381)	(63,268)	(135,700)	(313,627)
Վերագնահատում	255,757	-	-	-	-	255,757
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(70,665)	-	-	-	-	(70,665)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,821,754	247,240	1,208,626	185,501	3,677,344	11,140,465
Կուտակված մաշվածություն						
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	9,549	92,319	696,205	80,743	1,494,524	2,373,340
Տարվա ծախս	68,867	6,222	129,216	26,060	219,648	450,013
Օտարում	(1,813)	-	(30,236)	-	(21,345)	(53,394)
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(120,938)	-	-	-	-	(120,938)
Վերադասակարգում	56,177	(56,177)	-	-	-	-
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,842	42,364	795,185	106,803	1,692,827	2,649,021
Տարվա ծախս	68,382	4,320	155,794	13,119	269,735	511,350
Օտարում	(334)	(1,275)	(42,341)	(52,450)	(46,251)	(142,651)
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(70,665)	-	-	-	-	(70,665)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,225	45,409	908,638	67,472	1,916,311	2,947,055
Մնացորդային արժեք						
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,596,917	99,515	363,238	75,250	1,516,793	7,651,713
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,812,529	201,831	299,988	118,029	1,761,033	8,193,410

Ակտիվների վերագնահատում

Հողի և շենքերի վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2017թ. դեկտեմբերին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 255,757 հազար դրամ գումարով (2016թ՝ 1,006,672 հազար դրամ): Հողի և շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայա-ցված արդյունքները:

Եթե հողը և շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 5,555,765 հազար դրամ (2016թ՝ 4,512,820 հազար դրամ):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,819,313 հազար դրամ (2016թ.՝ 1,203,695 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 1,035,877 հազար դրամ, այդ թվում 50,600 հազ. դրամ՝ շենքեր (2016թ՝ 737,736 հազար դրամ, այդ թվում 18,200 հազ. դրամ՝ շենքեր):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2016թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2016թ.՝ նույնպես):

21 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	930,838	667,307	100,433	1,698,578
Ավելացում	6,104	143,720	588	150,412
Օտարում	-	(115)	-	(115)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	936,942	810,912	101,021	1,848,875
Ավելացում	7,825	121,110	-	128,935
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	944,767	932,022	101,021	1,977,810

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Կուտակված ամորտիզացիա				
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	171,596	153,462	59,472	384,530
Մասհանումներ	56,491	25,470	2,398	84,359
Օտարում	-	(115)	-	(115)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	228,087	178,817	61,870	468,774
Մասհանումներ	55,702	30,663	2,397	88,762
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	283,789	209,480	64,267	557,536
Մնացորդային արժեք				
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	708,855	632,095	39,151	1,380,101
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	660,978	722,542	36,754	1,420,274

Պայմանագրային պարտավորություններ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումների գծով:

2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտոնագրերում ներառված է 489,449 հազար դրամ հաշվեկշռային արժեքով վճարային քարտերով գործառնությունների քլիրինգային գործընթացի իրականացման համար համապատասխան ծրագրերի արտոնագիրը (2016թ՝ 534,750 հազար դրամ):

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	629,014	488,267
Ստացվելիք գումարներ	208,658	153,094
Այլ ակտիվներ	638,733	564,424
	1,476,405	1,205,785
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(12,707)	(10,522)
	1,463,698	1,195,263
Բռնագանձված ակտիվներ	1,876,321	4,993,452
Այլ կանխավճարված հարկեր	3,399	-
Նյութեր	148,063	96,273
Թանկարժեք մետաղներ	63,194	56,073
Ընդամենը այլ ակտիվներ	3,554,675	6,341,061

Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող բռնագանձված գրավները իրենցից ներկայացնում են անշարժ գույք: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով:

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
01 հունվար 2016	16,081
Տարվա ծախս	7,856
Հակադարձում	(13,415)
31 դեկտեմբեր 2016	10,522
Տարվա ծախս	33,924
Հակադարձում	(31,739)
31 դեկտեմբեր 2017	12,707

23 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	1,751,864	4,217
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	93,025	84,011
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	6,606,372	4,006,148
Ռեպո համաձայնագրերով վարկեր	7,773,155	-
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	1,026,110	948,312
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17,250,526	5,042,688

2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների համար միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 8.00% (2016թ. 8.98%) և 3.22% ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար (2016թ.՝ 6.2%):

Ֆինանսական կազմակերպություններից ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Վարկերն ունեն հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ. ՝ ոչինչ):

24 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	7,011,387	6,338,541
Ժամկետային ավանդներ	18,171,418	21,520,427
	25,182,805	27,858,968
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	10,943,532	6,870,910
Ժամկետային ավանդներ	92,301,586	93,282,691
	103,245,118	100,153,601
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	128,427,923	128,012,569

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընթացիկ և ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների գծով 13,978,166 հազար դրամ գումարով (2016թ. 15,228,974 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող տաս հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը կազմում է 23,009,790 հազար դրամ (2016թ. 28,217,786 հազար դրամ) կամ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ավանդների ընդհանուր գումարի 18% (2016թ. 22%):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2016: ոչինչ):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է իրավաբանական անձանց ՀՀ դրամով պարտավորությունների համար 13.81%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 5.61%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 1.65%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով պարտավորությունների համար 9.55%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 4.65%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 3.45%, Ռուբլով պարտավորությունների համար 7.81% (2016թ.՝ իրավաբանական անձանց ՀՀ դրամով պարտավորությունների համար 13.2%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 5.93%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 3.73%, ֆիզիկական անձանց՝ ՀՀ դրամով պարտավորությունների համար 13.27%, ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 6.24%, Եվրո արժույթով պարտավորությունների համար 6.6%):

25 Փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստորադաս փոխառություն ոչ ֆինանսական կազմակերպություններից	3,389,708	7,714,584
Վարկեր ՀՀ կառավարությունից	5,199,665	3,125,813
Այլ փոխառություն	6,155,191	2,419,990
Ընդամենը փոխառություններ	14,744,564	13,260,387

ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները ներառում են վարկեր ստացված Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի «Գյուղական Տարածքների Տնտեսական զարգացման ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով» և «Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի» շրջանակներում իրականացվող ֆինանսավորման նպատակով: Վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

Բանկը ներգրավել է ստորադաս երկարաժամկետ փոխառություն և կարճաժամկետ վերականգնվող փոխառություն Բանկի հետ կապակցված Կազմակերպությունից (տես ծանոթագրություն 31):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կառավարությունից ստացված ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 6.19%, ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 4.06% (2016.՝ ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.39%, ԱՄՆ դոլարով վարկերի համար՝ 4.06%):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել չվճարումներ կամ այլ խախտումներ (2016: ոչինչ):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներգրավված փոխառությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 11.59% (2016: 12.87%):

26 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Թողարկված պարտատոմսեր	5,139,360	2,652,531
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	5,139,360	2,652,531

2016թ. ընթացքում թողարկվել են 10,000 դրամ անվանական արժեքով 18,482 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 13.5% տոկոսադրույքով և մինչև 2018թ. մարման ժամկետով:

2016թ. ընթացքում թողարկվել են 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 50,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 8% տոկոսադրույքով և մինչև 2018թ. մարման ժամկետով:

2017թ. ընթացքում թողարկվել են 10,000 դրամ անվանական արժեքով 25,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 13.5% տոկոսադրույքով և մինչև 2020թ. մարման ժամկետով:

2017թ. ընթացքում թողարկվել են 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով 50,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր, տարեկան 8% տոկոսադրույքով և մինչև 2020թ. մարման ժամկետով:

Բանկի պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիաե ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

27 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վճարվելիք գումարներ	115,730	155,691
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	284,645	214,485
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	400,375	370,176
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	204,659	197,717
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	50,996	59,000
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	255,655	256,717
Ընդամենը այլ պարտավորություններ	656,030	626,893

28 Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	Ակտիվ		Պարտավորություն	
	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի արժեթղթեր (ծանոթ. 19, 23)	7,877,164	-	7,773,155	-
				-
	7,877,164	-	7,773,155	-

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ բանկերում, գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով:

Այս գործարքները կատարվել են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման սովորական պայմանների ներքո:

29 Սեփական կապիտալ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 20,489,653 հազար դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, վճարված բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 172,886,525 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով և 32,010,000 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 100 դրամ անվանական արժեքով:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ	17,981,523	88	-	-
Սֆիկարո Ինվեսթմենթս Լիմիթեդ	1,350,900	6	1,231,903	6
Առոլովա Էնթերփրայզիս լիմիթեդ	776,701	4	708,284	4
Ռիպատոնսո Հոլդինգս Լիմիթեդ	-	-	16,805,935	88
Այլ	380,529	2	347,256	2
	20,489,653	100	19,093,378	100

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

2017թ. Բանկը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 3,211,432 հազար դրամ գումարով, որից էմիսիոն եկամուտը կազմել է 1,815,157 հազար դրամ (2016թ. 11,328,490 հազար դրամ գումարով, որից էմիսիոն եկամուտը կազմել է 6,403,059 հազար դրամ): Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է հայտարարագրված շահաբաժինների հաշվին և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում: Արտոնյալ բաժնետոմսերը ունեն մեկ ձայնի իրավունք միայն Բանկի վերակազմակերպման կամ լուծարման և կանոնադրության մեջ արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները սահմանափակող որոշումների իրականացման հարցերում և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում 2017թ. հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է 160,051 հազար դրամ (2016թ.՝ 160,053 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով:

30 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկային գծերի չօգտագործված մաս	7,307,417	3,808,689
Տրամադրված երաշխիքներ	482,605	2,184,384
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	7,790,022	5,993,073

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով –Բանկը որպես վարձակալ

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	459,302	331,816
1-5 տարի	806,463	625,668
5 տարուց ավելի	47,065	46,719
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	1,312,830	1,004,203

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարները աճել են մասնաճյուղերի տարածքների վարձակալության ժամկետի երկարաձգման հետևանքով:

Կապիտալ բնույթի պարտավորություններ

Ինչպես բացահայտված է 20, 21 ծանոթագրություններում, Բանկը չունի կապիտալ բնույթի պարտավորություններ:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

31 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող են համարվում ՌԴ գործարարներ Գ. Զաքարյանը և Գ. Պիսկովը՝ հավասարաչափ բաժնեմասերով:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	3,650,987	197,982	239,451	208,518
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	26,891	279,456	3,551,055	148,155
Տարվա ընթացքում մարված վարկեր	(222,985)	(95,154)	(139,519)	(158,691)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	3,454,893	382,284	3,650,987	197,982
Արժեզրկումից պահուստ	(34,549)	(3,823)	(36,510)	(1,980)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,420,344	378,461	3,614,477	196,002
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	356,283	-	566,731	-
Տարվա ընթացքում տրամադրված	43,901,871	-	53,838,524	-
Տարվա ընթացքում մարված	(43,980,977)	-	(54,048,972)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	277,177	-	356,283	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	440,151	-	874,173	-
Տարվա ընթացքում ստացված	17,108,731	-	6,670,222	-
Տարվա ընթացքում վճարված	(15,672,594)	-	(7,104,244)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,876,288	-	440,151	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	449,792	241,194	671,531	192,156
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	7,762,798	925,196	35,735,685	1,609,908
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(7,975,848)	(1,026,744)	(35,957,424)	(1,560,870)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	236,742	139,616	449,792	241,194

Փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	10,134,574	-	7,511,491	-
Տարվա ընթացքում ստացված փոխառություններ	31,577,312	-	43,330,941	-
Տարվա ընթացքում վճարված փոխառություններ	(32,166,987)	-	(40,707,858)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,544,899	-	10,134,574	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	56,642	-	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	392,646	37,482	210,410	24,052
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(1,229,827)	(10,004)	(1,273,155)	(50,748)
Վարկային կորուստների ծախս/(հակադարձում)	(1,961)	1,843	34,115	(105)
Գործառնական վարձակալության գծով վճարված գումարներ	-	-	(307,473)	-
Ապահովագրության գծով վճարներ	(33,639)	-	(35,121)	-

Բանկի հետ կապված անձանց տարվա ընթացքում տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 20 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 8-23%:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատավարձ և պարգևատրումներ	750,989	590,026
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	750,989	590,026

32 Իրական արժեքի չափումը

Բանկի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը, հողը և շենքերը, այնպես էլ ոչ պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, մասնավորապես հիմնական միջոցների և բռնագանձված ակտիվների գնահատման մեջ: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի ղեկավարության կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Բանկի ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն

համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում է հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Բանկի ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՝ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

32.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	31,843,954	-	31,843,954	31,843,954
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	995,550	-	995,550	995,550
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	135,127,892	-	135,127,892	135,127,892
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	17,250,526	-	17,250,526	17,250,526
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	128,427,923	-	128,427,923	128,427,923
Փոխառություններ	-	14,744,564	-	14,744,564	14,744,564
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	5,183,230	-	5,183,230	5,139,360
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	400,375	-	400,375	400,375

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	33,547,636	-	33,547,636	33,547,636
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	3,268,547	-	3,268,547	3,268,547
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	118,627,063	-	118,627,063	118,627,063
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	5,042,688	-	5,042,688	5,042,688
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	128,012,569	-	128,012,569	128,012,569
Փոխառություններ	-	13,260,387	-	13,260,387	13,260,387
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,695,156	-	2,695,156	2,652,531
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	370,176	-	370,176	370,176

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի վարկային ռիսկից և տատանվում են 5% մինչև 24% տարեկան (2016թ. 9% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

32.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	3,086	-	3,086
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	13,570,571	-	13,570,571
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	7,877,164	-	7,877,164
Ընդամենը	-	21,450,821	-	21,450,821
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	9,993	-	9,993
Ընդամենը	-	9,993	-	9,993
Զուտ իրական արժեք	-	21,440,828	-	21,440,828

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ				
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	14,387,264	-	14,387,264
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	99,004	-	99,004
Ընդամենը	-	14,486,268	-	14,486,268

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող բաժնեմասային ներդրումներ

Բանկի ներդրումների իրական արժեքը չգնանշվող բաժնեմասային արժեթղթերում չի կարող արժանահավատորեն գնահատվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից: Սեփական կապիտալի այս ներդրումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես Ծան. 19-ը:

32.3 Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	5,821,754	5,821,754
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	-	-	5,821,754	5,821,754
Զուտ իրական արժեք	-	-	5,821,754	5,821,754

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	5,608,759	5,608,759
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	-	-	5,608,759	5,608,759
Զուտ իրական արժեք	-	-	5,608,759	5,608,759

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

3-ում մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա:

Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվները սկզբից մինչև վերջ կարելի է համաձայնեցնել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ		2017
	Հիմնական միջոցներ	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	5,608,759	5,608,759
Ֆինանսական արդյունքում ճանաչված արժեզրկումից զուտ վնաս	(7)	(7)
Հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում մաշվածության ճշտում	(70,665)	(70,665)
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտ	255,764	255,764
Ավելացում	97,905	97,905
Վաճառք	(70,002)	(70,002)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,821,754	5,821,754
Զուտ իրական արժեք	5,821,754	5,821,754

Հազար ՀՀ դրամ		2016
	Հիմնական միջոցներ	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ		
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	3,366,354	3,366,354
Ֆինանսական արդյունքում ճանաչված արժեզրկումից զուտ վնաս	(89,434)	(89,434)
Հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում մաշվածության ճշտում	(120,938)	(120,938)
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտ	1,096,106	1,096,106
Ավելացում	1,450,985	1,450,985
Վաճառք	(94,314)	(94,314)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,608,759	5,608,759
Զուտ իրական արժեք	5,608,759	5,608,759

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է կիրառելով համեմատական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

33 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

				2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկեր ռեպո համաձայնագրերով (Ծանոթ. 23)	(7,773,155)	-	(7,773,155)	7,877,164	-	104,009

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ ռեպո համաձայնագրեր (Ծանոթ. 16)	2,002,157	-	2,002,157	2,002,157	-	-

34 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 35.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,843,954	-	-	31,843,954	-	-	-	31,843,954
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	995,550	-	-	995,550	-	-	-	995,550
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	3,086	-	-	3,086	-	-	-	3,086
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	22,535,590	16,833,869	30,615,659	69,985,118	39,824,897	25,317,877	65,142,774	135,127,892
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	21,460	-	372,867	394,327	4,878,803	8,318,901	13,197,704	13,592,031
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	7,877,164	-	-	7,877,164	-	-	-	7,877,164
	63,276,80	16,833,869	30,988,526	111,099,199	44,703,700	33,636,778	78,340,478	189,439,677

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար	Ընդամենը
Պարտավորություններ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,840,218	380,951	1,532,215	15,753,384	40,182	1,456,960	1,497,142	17,250,526
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	32,976,417	28,351,422	58,307,935	119,635,774	7,721,832	1,070,317	8,792,149	128,427,923
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	9,993	-	-	9,993	-	-	-	9,993
Փոխառություններ	10,082	1,233	6,155,191	6,166,506	77,505	8,500,553	8,578,058	14,744,564
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	2,643,711	2,643,711	2,495,649	-	2,495,649	5,139,360
Այլ պարտավորություններ	400,375	-	-	400,375	-	-	-	400,375
	47,237,085	28,733,606	68,639,052	144,609,743	10,335,168	11,027,830	21,362,998	165,972,741
Զուտ Դիրք	16,039,719	(11,899,737)	(37,650,526)	(33,510,544)	34,368,532	22,608,948	56,977,480	23,466,936
Կուտակված ճեղքվածք	16,039,719	4,139,982	(33,510,544)		857,988	23,466,936		

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,547,636	-	-	33,547,636	-	-	-	33,547,636
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,145,320	40,950	-	1,186,270	1,032,067	1,050,210	2,082,277	3,268,547
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	99,004	-	-	99,004	-	-	-	99,004
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	18,813,969	17,949,658	27,732,206	64,495,833	45,502,662	8,628,568	54,131,230	118,627,063
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	3,213	363,099	1,367	367,679	10,060,199	3,972,076	14,032,275	14,399,954
	53,609,142	18,353,707	27,733,573	99,696,422	56,594,928	13,650,854	70,245,782	169,942,204

Հազար ՀՀ դրամ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա-հանրա-գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա-հանրա-գումար	Ընդամենը
Պարտավորություններ								
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	193,962	979,024	1,252,654	2,425,640	1,491,262	1,125,786	2,617,048	5,042,688
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	13,244,946	49,962,689	56,480,483	119,688,118	3,833,132	4,491,319	8,324,451	128,012,569
Փոխառություններ	256,949	-	10,145,994	10,402,943	2,857,444	-	2,857,444	13,260,387
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	8,820	-	8,820	2,643,711	-	2,643,711	2,652,531
Այլ պարտավորություններ	305,665	64,511	-	370,176	-	-	-	370,176
	14,001,522	51,015,044	67,879,131	132,895,697	10,825,549	5,617,105	16,442,654	149,338,351
Զուտ Դիրք	39,607,620	(32,661,337)	(40,145,558)	(33,199,275)	45,769,379	8,033,749	53,803,128	20,603,853
Կուտակված ճեղքվածք	39,607,620	6,946,283	(33,199,275)		12,570,104	20,603,853		

35 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Բանկի Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Ռիսկերի կառավարման տնօրինություն

Ռիսկերի կառավարման տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի գործընթացների իրականացման և կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքագրումը:

Բանկի Ֆինանսական տնօրինություն

Բանկի ֆինանսական տնօրինությունը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման համար: Ֆինանսական ստորաբաժանումը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, ակցիաների արժեքի փոփոխության ռիսկի, վարկային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

35.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

35.1.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,843,954	-	-	31,843,954
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	331,234	664,316	-	995,550
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	-	3,086	3,086
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	124,374,376	5,511,491	5,242,025	135,127,892
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	13,592,031	-	-	13,592,031
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	7,877,164	-	-	7,877,164
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	178,018,759	6,175,807	5,245,111	189,439,677
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	158,660,942	2,894,414	8,386,848	169,942,204

Ակտիվները դասակարգվում են, հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսական կազմակերպություններ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,843,954	-	-	-	-	-	-	-	-	-	31,843,954
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	995,550	-	-	-	-	-	-	-	-	-	995,550
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	3,086	-	-	-	-	-	-	-	-	-	3,086
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	8,240,081	525,371	9,041,322	5,612,689	23,405,955	7,743,706	53,358,355	11,386,389	15,814,024	135,127,892
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	13,592,031	-	-	-	-	-	-	-	-	-	13,592,031
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	7,877,164	-	-	-	-	-	-	-	-	-	7,877,164
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,311,785	8,240,081	525,371	9,041,322	5,612,689	23,405,955	7,743,706	53,358,355	11,386,389	15,814,024	189,439,677
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	51,315,141	9,392,922	678,384	5,162,814	3,411,431	23,225,437	8,329,690	46,671,389	12,069,140	9,685,856	169,942,204

35.1.2 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ ապրանքների, արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են եռամսյակային կտրվածքով Բանկի Խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի գծով վարկային ռիսկի չափը, ներառյալ բանկերը և ֆինանսական կազմակերպությունները, ավելի սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև օրական սահմանաչափերով կապված առևտրային գործարքների հետ, ինչպիսիք են արտարժութային ֆորվարդի պայմանագրերը: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- Հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Ֆիզիկական անձանց շարժական գույքը,
- Կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, այլ հիմնական միջոցները, պաշարները,
- Ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեղթղթերը:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անշարժ գույք	70,670,551	72,885,020
Շարժական գույք	6,386,071	1,482,968
Շրջանառության մեջ գտնվող ապրանքներ	593,958	277,432
Երաշխավորություններ	5,616,929	6,313,192
Դրամական միջոցներ	8,224,073	3,514,323
Կենցաղային տեխնիկա	19,080,000	14,083,535
Ապահովվածություն չունեցող	30,313,194	26,014,383
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	140,884,776	124,570,853

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

Պարտքային ռիսկ պարունակող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց

գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը:

Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

35.1.3 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների ուշացումները, վարկառուների դրամական միջոցների հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Բանկը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխատվության համապատասխան պահուստի չափը անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական միջոցների հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ կրեդիտ քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխատվությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխատվություններ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի որակը՝ հիմնված կորուստների պատմության վրա:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ		
Արդյունաբերություն	1%	1%
Գյուղատնտեսություն	1%	1%
Շինարարություն	1%	1%
Տրանսպորտ	1.9%	1%
Առևտուր	1.5%	1%
Սպասարկում	1%	1%
Սպառողական	3.6%	2.13%
Հիփոթեքային	1%	1%
Այլ	1%	-

Պարտքային ռիսկ պարունակող այլ ֆինանսական ակտիվների գծով 2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը կորուստներ չի ունեցել:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը և փոխատվությունները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ: Ժամկետանց վարկերի հիմնական մասն արժեզրկված չեն:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է հետևյալ աղյուսակում.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Արդյունաբերություն	1,294,052	398,141	44,104	1,667,960	3,404,257
Գյուղատնտեսություն	-	-	-	366,232	366,232
Շինարարություն	1,592	-	-	798,643	800,235
Տրանսպորտ և կապ	4,440	114,137	-	2,663,204	2,781,781
Առևտուր	310,566	52,353	18,524	4,679,332	5,060,775
Սպասարկում	64,531	5,286	2,496	1,460,619	1,532,932
Սպառողական	796,398	680,328	275,558	2,396,687	4,148,971
Հիփոթեքային	242,708	17,358	24,664	636,836	921,566
Այլ	-	-	494	2,728,697	2,729,191
Ընդամենը	2,714,287	1,267,603	365,840	17,398,210	21,745,940

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91 օրից ավել	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ					
Արդյունաբերություն	529,141	17,314	149,489	3,548,039	4,243,983
Գյուղատնտեսություն	6,491	-	118,658	217,435	342,584
Շինարարություն	-	131,428	-	648,750	780,178
Տրանսպորտ և կապ	23,860	-	-	235,437	259,297
Առևտուր	922,821	880,014	390,715	4,706,992	6,900,542
Սպասարկում	44,982	12,798	40,711	1,165,841	1,264,332
Սպառողական	849,411	431,530	242,150	2,080,445	3,603,536
Հիփոթեքային	358,755	97,229	16,322	779,840	1,252,146
Այլ	5,294	-	-	2,723,537	2,728,831
Ընդամենը	2,740,755	1,570,313	958,045	16,106,316	21,375,429

35.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

35.2.2 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրյուքով ակտիվները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի իրացման ժամկետների: Կապտիալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	-	-	-	61,232	85,518	147,750
ԱՄՆ դոլար	+1	(12,399)	-	-	-	-	(12,399)
ՀՀ դրամ	-1	-	-	-	(63,928)	(93,360)	(157,288)
ԱՄՆ դոլար	-1	12,399	-	-	-	-	12,399

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
			Կապտիալի զգայունություն				
Արժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	-	-	-	179,801	162,253	342,054
ԱՄՆ դոլար	+1	(24,197)	-	-	-	-	(24,197)
ՀՀ դրամ	-1	-	-	-	(185,243)	(175,682)	(360,925)
ԱՄՆ դոլար	-1	24,197	-	-	-	-	24,197

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի

փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
ԱՄՆ դոլար	+5	(179,387)	+5	(168,715)
Եվրո	+5	53,240	+5	(4,394)
ԱՄՆ դոլար	(5)	179,387	(5)	168,715
Եվրո	(5)	(53,240)	(5)	4,394

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ				2017
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,782,849	15,446,920	614,185	31,843,954
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	210,609	784,941	-	995,550
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	71,417,556	60,261,664	3,448,672	135,127,892
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	5,505,736	8,086,295	-	13,592,031
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	7,877,164	-	-	7,877,164
	100,793,914	84,579,820	4,062,857	189,436,591
Պարտավորություններ				
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,175,711	7,074,795	20	17,250,526
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	57,769,392	67,503,761	3,154,770	128,427,923
Փոխառություններ	5,158,260	9,586,304	-	14,744,564
Թողարկված պարտքային արժեթղթեր	250,183	4,889,177	-	5,139,360
Այլ ֆինանսական պարտավորություններ	400,375	-	-	400,375
	73,753,921	89,054,037	3,154,790	165,962,748

Հազար ՀՀ դրամ				2017
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(2,770,514)	1,979,365	784,242	(6,907)
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	24,269,479	(2,494,852)	1,692,309	23,466,936
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2017թ. դեկտեմբերի 31-ին	1,821,681	5,968,341	-	7,790,022
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	86,439,063	80,411,349	2,992,788	169,843,200
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	64,054,748	83,844,516	1,439,087	149,338,351
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	-	1,693,790	(1,594,786)	99,004
Զուտ դիրք 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,384,315	(1,739,377)	(41,085)	20,603,853
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ 2016թ. դեկտեմբերի 31-ին	4,411,339	1,581,734	-	5,993,073

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

35.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	25.27	29.09
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	272.67	372.09

Ստորև ներկայացվում է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տես ծանոթագրություն 34-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,843,955	385,089	1,618,942	48,741	2,145,763	18,042,490
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	33,022,155	28,665,039	60,561,755	9,534,664	1,699,311	133,482,924
Փոխառություններ	10,082	1,243	6,646,761	86,149	12,715,788	19,460,023
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	2,855,207	3,094,605	-	5,949,812
Այլ ֆինանսական պարտավորություններ	400,375	-	-	-	-	400,375
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	47,276,567	29,051,371	71,682,665	12,764,159	16,560,862	177,335,624

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	2,763,898	-	-	-	-	2,763,898
Արտահոսք	(2,770,805)	-	-	-	-	(2,770,805)
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	338,794	476,502	1,765,339	5,209,387	-	7,790,022

Հազար ՀՀ դրամ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	195,491	995,118	1,347,032	2,087,767	1,688,679	6,314,087
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	13,353,809	50,783,993	60,735,862	5,749,698	4,940,451	135,563,813
Փոխառություններ	387,147	347,194	11,339,475	4,229,017	-	16,302,833
Թողարկված պարտքային արժեթղթեր	18,292	57,598	167,673	2,883,451	-	3,127,014
Այլ ֆինանսական պարտավորություններ	87,639	64,511	-	-	-	152,150
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	14,042,378	52,248,414	73,590,042	14,949,933	6,629,130	161,459,897
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	1,693,790	-	-	-	-	1,693,790
Արտահոսք	(1,594,786)	-	-	-	-	(1,594,786)
Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ	268,019	844,599	1,625,022	3,255,433	-	5,993,073

Բանկի մոտ առկա է էական բացասական կուտակային իրացվելիության ճեղքվածք մինչև մեկ տարվա կտրվածքով: Տես ծանոթագրություն 34-ը: Դա այն բանի հետևանք է, որ 2017թ-ի

դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հիմնական ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ չնայած մինչև մեկ տարվա մարման ժամկետ ունեցող ավանդները էական կշիռ են կազմում, վերջին տարիներին ձևավորված փորձը ցույց է տալիս, որ նշված ավանդները հանդիսանում են կայուն և երկարատև ֆինանսավորման աղբյուր:

36 Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
	Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Փոխառություններ	Թողարկված պարտքային արժեթղթեր	Շահաբաժինների վճարում	Ընդամենը
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	5,042,688	13,260,387	2,652,531	-	20,955,606
Դրամային հոսքերից	*10,432,480*	*1,366,159*	*2,465,424*	*(160,051)*	*14,104,012*
Վճարումներ	(140,507,859)	(33,378,724)	(1,728,402)	(160,051)	(175,775,036)
Ստացված գումար	150,940,339	34,744,883	4,193,826	-	189,879,048
Ոչ դրամային հոսքերից	*1,775,358*	*118,018*	*21,405*	*160,051*	*2,074,832*
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(50,522)	(89,222)	(21,405)	-	(161,149)
Հաշվեգրված տոկոսներ	1,825,880	207,240	42,810	-	2,075,930
Շահաբաժնի կուտակում	-	-	-	160,051	160,051
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,250,526	14,744,564	5,139,360	-	37,134,450

37 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը

համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները և ստորադաս փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական կապիտալ	28,463,986	26,770,726
Լրացուցիչ կապիտալ	2,820,403	257,739
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	31,284,389	27,028,465
Ռիսկով կշռված ակտիվներ	183,593,833	155,514,758
Կապիտալի համարժեքության նորմատիվ	17.04%	17.38%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2015թ. որոշում է կայացրել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանել 30,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

38 Վերլուծություն ըստ սեգմենտների

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 'Գործառնական սեգմենտներ' ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

39 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

Հայաստանի հանրապետությունում քաղաքական իրավիճակը ներկայումս անկայուն է՝ կապված Հայաստանի բնակչության կողմից 2018թ. ապրիլի 13-ից իշխող քաղաքական կուսակցության դեմ իրականացվող մասսայական ցույցերով: Այս ցույցերն ընթանում են հանրային անհնազանդության կոչերով և ուղեկցվում են փողոցներ, կամուրջներ և այլ ենթակառուցվածքներ փակելով: Ղեկավարությունը գտնում է, որ այս գործընթացները որևէ նշանակալի ազդեցություն չունեն Ընկերության գործունեության վրա և հետևաբար ղեկավարության գնահատմամբ չկա որևէ անհրաժեշտություն ճշգրտելու 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա Ընկերության ֆինանսական հաշվետվությունները՝ կապված քաղաքական այս անկայունության հետ:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին
« 31 » ՄԱՐՏԻ 2018թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրու-թյուններ	Հաշվետու ժամանակա-շրջան 01.01.18_31.03.18	Նախորդ ժամանակաշրջան 01.01.17_31.03.17 (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	5,491,431	4,570,440
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(2,546,745)	(3,153,841)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**2,944,686**	**1,416,599**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	281,759	1,073,995
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(90,159)	(67,950)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**191,600**	**1,006,045**
Եկամուտ շահաբաժիններից			
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	144,280	108,326
Այլ գործառնական եկամուտներ	6	256,786	315,187
Գործառնական եկամուտներ		**3,537,352**	**2,846,157**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(1,299,551)	(1,115,780)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(888,778)	(848,525)
Այլ գործառնական ծախսեր	9	(808,421)	(738,192)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10		
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**540,602**	**143,660**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(112,779)	(53,415)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		**427,823**	**90,245**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	12		
Ժամանակաշրջանի զուտ շահույթ			
Այդ թվում՝			
Մայր կազմակերպության բաժնեմաս			
Չվերահսկվող բաժնեմաս			

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2018թ.

ԿՏ

ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԻԳՈՐԻՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

« 31 » ՄԱՐՏԻ 2018թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.18_31.03.18	Նախորդ ժամանակաշրջան 01.01.17_31.03.17
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	(40,006)	110,233
Դրամական հոսքերի հեջավորում		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	8,001	(22,047)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**(32,005)**	**88,186**
Համապարփակ ֆինանսական արդյունք	**395,818**	**178,431**
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

ՄԵՍՐՈՊ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԳԱՐՈՒՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2018թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

« 31 » ՄԱՐՏԻ 2018թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ 31.03.2018	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) 31.12.2017
1	**Ակտիվներ**			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	23,178,187	29,306,153
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	13.1	64,261	63,194
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	10,253,118	4,034,629
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	16	130,619,229	130,860,942
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	10,010,776	21,474,879
1.7	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18	7,520,196	
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	9,607,057	9,613,684
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	11		
1.12	Կանխավճար շահութահարկի գծով	21.1	113,435	113,435
1.13	Այլ ակտիվներ	21	3,608,115	3,281,612
	Ընդամենը՝ ակտիվներ		**194,974,374**	**198,748,528**
2	**Պարտավորություններ**			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	9,349,437	17,260,519
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	135,586,908	133,881,944
2.3	Փոխառություն	23.1	8,742,943	9,541,755
2.4	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	7,760,377	5,139,360
2.7	Հետաձգված հարկային պարտավորություններ	11	87,582	50,157
2.8	Պահուստներ	30		
2.9	Այլ պարտավորություններ	27	885,810	701,934
	Ընդամենը՝ պարտավորություններ		**162,413,057**	**166,575,669**
3	**Կապիտալ**			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	20,489,653	20,489,653
3.2	Էմիսիոն եկամուտ		9,605,638	9,605,638
3.3	Պահուստներ՝		1,880,474	1,919,841
3.3.1	Գլխավոր պահուստ		426,483	426,483
3.3.2	Վերագնահատման պահուստներ		1,453,991	1,493,358
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		585,552	157,727
3.5	Կապիտալի այլ տարրեր			
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		**32,561,317**	**32,172,859**
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**194,974,374**	**198,748,528**

ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2018թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 31 » ՄԱՐՏԻ 2018թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքների տարբերություններ գործառնություններից	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	Դրամական հոսքերի հեջավորում	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Չբաշխված շահույթ/վնաս	Միջանկյալ շահաբաժիններ	Ընդամենը	Չվերադասվող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված բաժնեմաս	Զուտ գումարը											
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից ամորոկան) (I եղյուսակ)														
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2017 թ. (ստուգված/չստուգված)	**19,093,378**	**-**	**19,093,378**	**7,790,481**	**426,483**	**-**	**(381,873)**	**-**	**1,297,921**	**7,485,470**	**-**	**-**	**-**	**35,711,860**
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը														-
2. Վերահաշվարկված մնացորդը														-
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	1,396,275		1,396,275	1,815,157										3,211,432
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	1,396,275		1,396,275	1,815,157										3,211,432
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին			-											-
4. Համապարփակ եկամուտ														-
5. Շահութաբաժիններ										(3,211,432)				(3,211,432)
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝							88,186			(12,621)				75,565
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին														-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
7.3. Էմիսիոն վնասի ծածկում														-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում														-
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							88,186			(12,621)				75,565
8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 Մարտի 2017 թ. (ստուգված/չստուգված)	**20,489,653**	**-**	**20,489,653**	**9,605,638**	**426,483**	**-**	**(293,687)**	**-**	**1,297,921**	**4,261,417**	**-**	**-**	**-**	**35,787,425**

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)														
9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2018 թ. (ստուգված/չստուգված)	**20,489,653**	**-**	**20,489,653**	**9,605,638**	**426,482**	**-**	**24,275**	**-**	**1,469,083**	**3,572,712**	**-**	**-**	**-**	**35,587,843**
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը										(3,414,985)				(3,414,985)
10.Վերահաշվարկված մնացորդը	20,489,653	-	20,489,653	9,605,638	426,482	-	24,275	-	1,469,083	157,727	-	-	-	32,172,858
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝														-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ														-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին														-
12. Այլ համապարփակ եկամուտ														
13. Շահութաբաժիններ														-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝							(32,005)		(7,362)	427,824				388,457
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին														-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
15.3. Էմիսիոն վնասի ծածկում														-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ/նվազում									(7,362)					(7,362)
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							(32,005)			427,824				395,819
16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 Մարտի 2018թ.	**20,489,653**	**-**	**20,489,653**	**9,605,638**	**426,482**	**-**	**(7,730)**	**-**	**1,461,721**	**585,551**	**-**	**-**	**-**	**32,561,315**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2018թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
« 31 » ՄԱՐՏԻ 2018թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	Նախորդ ժամանակաշրջան 31.03.2017	Հաշվետու ժամանակաշրջան 31.03.2018
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		**x**	**x**
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**2,203,917**	**2,176,836**
Ստացված տոկոսներ		4,056,256	3,961,619
Վճարված տոկոսներ		(2,938,460)	(3,123,436)
Ստացված կոմիսիոն գումարներ		1,050,080	1,314,992
Վճարված կոմիսիոն գումարներ		(67,950)	(90,159)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		501,651	456,520
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		129,162	168,637
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		675,799	684,459
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(820,989)	(875,471)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(381,632)	(320,325)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		**(4,316,847)**	**(103,565)**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(5,617,498)	1,076,464
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)		(689,288)	(2,808,658)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(5,287,228)	4,038,352
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)			
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		359,018	(153,230)
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		1,300,651	(1,180,029)
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		1,194,290	(1,565,275)
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		106,361	385,246
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		**(2,112,930)**	**2,073,271**
Վճարված շահութահարկ			
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		**(2,112,930)**	**2,073,271**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)			
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(49,922)	(18,500)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(35,835)	(373,538)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում			7,555
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		(252,318)	(7,936)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		**(338,075)**	**(392,419)**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահաբաժիններ		(3,211,432)	
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(253,230)	(569,281)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)			(3,872,799)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		(608,470)	(610,910)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)			2,621,017
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		3,211,432	
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)			
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		**(861,700)**	**(2,431,973)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		114,698	784,892
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**(3,198,007)**	**33,771**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	**33,764,417**	**32,369,267**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	**30,566,410**	**32,403,038**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.04.2018թ.
ԿՏ